



Հիմնադիր և հրատարակիչ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ

ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 96 2016

ՀՀ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Տպագրվում է 1997 թվականից, ՀՀ գլխավոր դատախազ Հենրիկ Խաչատրյանի նախաձեռնությամբ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դավիթ Մելքոնյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (խորհրդի նախագահ)

Աշոտ Եսայան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի օգնական, Խ.Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի դասախոս, դոցենտ (գլխավոր խմբագիր)

Գևորգ Բաղդասարյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության մեղադրանքի պաշտպանության և դատական ակտերի բողոքարկման վարչության պետ, իրավ. գիտ. թեկնածու

Միեր Հակոբյան Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կազմակերպական-վերահսկողական և իրավական ապահովման վարչության պետի տեղակալ, իրավ. գիտ. թեկնածու

Գևորգ Դանիելյան Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի խորհրդական, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի սահմանադրական ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Վահրամ Շահինյան Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայության պետ, իրավ. գիտ. թեկնածու (համաձայնությամբ)

Հովհաննես Սրեփանյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի պետաիրավական հետազոտությունների բաժնի վարիչ, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Գառնիկ Սաֆարյան Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր (համաձայնությամբ)

Արման Թաթոյան Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար (համաձայնությամբ)

Ռուբեն Մելիքյան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպան, իրավ. գիտ. թեկնածու, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ղեկավար

Գլխավոր խմբագիր՝ Ա. ԵՍԱՅԱՆ

Հանդեսը ՀՀ բարձրագույն որակավորման հանձնաժողովի (ԲՈՀ) կողմից ընդգրկված է թեկնածուական (1999թ.) և դոկտորական (2002թ.)ատենախոսությունների հիմնադրույթների հրապարակման համար ընդունելի գիտական պարբերականների ցանկում:

Խմբագրության հասցեն.
0010 ք. Երևան, Վ. Սարգսյան 5
Հեռախոս՝ 511-589, ֆաքս՝ 585-152
Էլ. հասցե՝ orinakanutyun@prosecutor.am
www.prosecutor.am
ISSN 1829-4219

© Համակարգչային շարվածքը, ոճը, տառաձևերը և էջադրումը՝ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»

Հանձնված է արտադրության՝ 26.12.2016թ.
Ֆորմատ՝ 60x84 1/8
Տպաքանակը՝ 500
Ծավալը՝ 4 պայմ. մամուլ
Գրանցման վկայական՝ N 688

Տպագրված է «Աստղիկ Գրատուն» հրատարակչության տպարանում Երևան, Գ. Քոչարի 21

© «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ», 2016թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

ՀՀ գլխավոր դատախազը աշխատանքային այցով մեկնել է Արցախ.....	3
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպանին	3
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԽ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների հարցերով տնօրենին	4
ՀՀ գլխավոր դատախազն ընդունել է ԵԽԽՎ մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազեկուցողներին.....	5

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Հրայր Թովմասյան Կառավարման ձևերի համեմատական վերլուծություն (Պորտուգալիա, Հայաստանի Հանրապետություն)	6
Վարսեր Կարապետյան Մարդու իրավունքների իրավական կարգավորման հիմնախնդիրներն Իսրայելի սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում.....	12

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Սամվել Յուզբաշյան, Ալվինա Սարգսյան Դատախազի համաձայնությամբ քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու դատավարական ընթացակարգն ու դրա հիմնախնդիրները	19
Արուսյակ Ալեքսանյան Հայեցողությունը քրեական դատավարությունում և դրա փոխհարաբերակցությունն օրինականության հետ	25

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նարեկ Պողոսյան Ռաֆայել Լեմկինի կողմից «Ցեղասպանություն» եզրույթի ստեղծումը և Հայոց ցեղասպանությունը	31
Ռոմելա Մանուկյան Դիվանագիտական պաշտպանության և անհատի իրավունքների միջազգային պաշտպանության այլ ձևերի առանձնահատկությունները	40

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

Լիլիթ Սարգսյան Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմնախնդիրները	45
---	----

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Արմեն Եզեկյան Վարքազի կանոնների իրավաբանական բովանդակությունը հանրային ծառայությունում	51
--	----

ՍԵՂՄԱԳՐԵՐ

Սեղմագրեր / Abstractы / Abstracts	56
---	----

ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՀՀ դատախազության «Օրինականություն» գիտագործական և ուսումնամեթոդական հանդեսում տպագրվող հոդվածներին ներկայացվող պահանջները	64
---	----

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉԸ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅՈՎ ՄԵԿՆԵԼ Է ԱՐՅԱՆ



ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանի գլխավորած պատվիրակությունն աշխատանքային այցով մեկնել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն:

ՀՀ գլխավոր դատախազին ընդունել է ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ զինվո-

րական դատախազ, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արտավազ Հարությունյանը և ԼՂՀ գլխավոր դատախազ Արթուր Մոսիսյանը:

Քննարկվել է ՀՀ և ԼՂՀ դատախազությունների միջև համագործակցությանն առնչվող հարցերի լայն շրջանակ:

ՀՀ ՉԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱՉՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԵՎ ԼԻԱԶՈՐ ԴԵՄՊԱՆԻՆ

ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլսին:

Գլխավոր դատախազը բարձր է գնահատել ԱՄՆ դեսպանության հետ ձևավորված բազմակողմ համագործակցությունը՝ պատ-

րաստականություն հայտնելով այդ համագործակցությունը դարձնել առավել դինամիկ և ընդգրկուն: Արթուր Դավթյանը նշել է այն առաջնահերթությունները, որոնք գերակա են դատախազության համար, ընդգծելով, մասնավորապես, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ համագործակցությունը, վերջիններիս ներգրավվածությունը դատախազության տարբեր ծրագրերի իրականացման աշխատանքներում:

Անդրադառնալով կոռուպցիայի դեմ պայքարում իրականացվող միջոցառումներին՝ ՀՀ գլխավոր դատախազը նշել է, որ այդ արատավոր երևույթի դեմ թիրախավորված պայքարը շարունակական է, և ներկայումս էլ այդ նպատակով հստակ ուղղություններ են ակտիվացվում:



● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

Դեսպան Ռիչարդ Միլը, ողջունելով կոռուպցիայի դեմ պայքարում դատախազության կողմից իրականացվող աշխատանքները, պատրաստակամություն է հայտնել շարունակելու համագործակցությունն այդ ուղղությամբ:

Ռիչարդ Միլը հավաստիացրել է, որ շարունակելու են առավելագույն ջանքեր գործադրել մինչ օրս կատարված աշխատանքի շնորհիվ արձանագրված լուրջ ձեռքբերումները պահպանելու և երկկողմ գործակցությունն ավելի ամրապնդելու համար:

Դեսպանը վերահաստատել է դատախա-

զության կողմից իրականացվող բարեփոխումներին աջակցությունը շարունակելու պատրաստակամությունը՝ ընդգծելով, որ իրենք ևս կողմնակից են գործնական և տեսանելի արդյունքներով գործակցությանը և երկկողմ գործակցության էլ ավելի ամրապնդմանը:

Հանդիպմանը քննարկվել է դատախազական ոլորտին վերաբերող հարցերի լայն շրջանակ, պայմանավորվածություն է ձեռք բերվել կոնկրետ ուղղություններով համագործակցության առավել ակտիվացման վերաբերյալ:

ՀՀ ՂԵՄԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԳԵՐԱՎԱՅՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԻՆՈՒԹՅԱՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՐՋԵՐՈՎ ՏՆՕՐԵՆԻՆ

«Հ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանն ընդունել է ԵՄ մարդու իրավունքների և իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության Մարդու իրավունքների հարցերով տնօրեն Քրիստոս Զիակունդապուլոսին:



«Հ գլխավոր դատախազը, կարևորելով «Զիակունդապուլոսի մարդու իրավունքների եվրոպական չափանիշների կիրառման ամրապնդումը Հայաստանում» ծրագրի մեկնարկը, նշել է, որ ՀՀ դատախազությունը, որպես քրեական քաղաքականության իրականացման երաշխավոր, ողջունում է և պատրաստ է աջակցել բոլոր այն ծրագրերին, որոնք ուղղված են մարդու իրավունքների անվերապահ պաշտպանությանը՝ ինչպես զինված ու-

ժերում, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակությունում:

«Հայաստանի Զիակունդապուլոսի մարդու իրավունքների առավել արդյունավետ պաշտպանությանն աջակցելը, մարդու իրավունքների վիճակի բարելավումը, Զիակունդապուլոսի մարդու իրավունքներին առնչվող ՀՀ օրենսդրության կատարելագործումը, զինծառայողների իրազեկվածության մակարդակի բարձրացումը, մարդու իրավունքների խախտումների կանխումն ու դրանց քննության արդարացի իրականացումը մեզ համար առաջնահերթություն են: Այս գործընթացում միջազգային կազմակերպությունների ներգրավվածությունն իր հերթին օգնում է վեր հանելու առկա խնդիրներն ու բացթողումները»,– նշել է ՀՀ գլխավոր դատախազը:

Քրիստոս Զիակունդապուլոսը ընդգծել է ՀՀ դատախազության հետ համագործակցության բարձր մակարդակը՝ վստահություն հայտնելով, որ դա կնպաստի նաև այս ծրագրի իրականացմանը:

Հանդիպմանը քննարկվել են Զիակունդապուլոսի մարդու իրավունքների պաշտպանության աջակցմանը, եվրոպական չափանիշներ-

րի կիրառմանը, մարդու իրավունքների խախտումների, հատկապես՝ վատ վերաբերմունքի կանխմանը, հայտնաբերմանը և արդարացի քննության իրականացմանը վերաբերող հարցեր: Պայմանավորվածություն է ձեռք բերվել

ծրագրի իրականացման շրջանակներում մշակել Ջինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության բարձրացման գործուն մեխանիզմներ:

ՀՀ զլխավոր դաստիարակ ընդհանրական և երեսուցյակ մոնիթորինգի համազգեկուցողներ Ալան Միլին և Ջուզեպպե Գալատիին

ՀՀ զլխավոր դաստիարակ Արթուր Դավթյանն ընդունել է ԵԽԵՄՎ մոնիթորինգի հանձնաժողովի Հայաստանի հարցերով համազգեկուցողներ Ալան Միլին և Ջուզեպպե Գալատիին:



ՀՀ զլխավոր դաստիարակը, ողջունելով հյուրերին, ընդգծել է ՀՀ զլխավոր դաստիարակության և ԵԽ տարբեր կառույցների միջև տարբեր ձևաչափերով արդեն իսկ ձևավորված համագործակցությունը՝ կարևորելով համազգեկուցողների գործադրած ջանքերը, որոնք ուղղված են մեր երկրում բարեփոխումներ իրականացնելուն:

Դատաիրավական բարեփոխումների համատեքստում ՀՀ զլխավոր դաստիարակն անդրադարձել է մշակման և բարելավման փուլում գտնվող մի շարք օրենսդրական նախաձեռնությունների, մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության և քրեական օրենսգրքերին» և «Դատախազության մասին» ՀՀ օրենքի նախագծին:

ԵԽԵՄՎ մոնիթորինգի հարցերով համազգեկուցող Ալան Միլը, ընդգծելով ՀՀ զլխավոր դաստիարակության առաջնային դերը ՀՀ դատաիրավական համակարգի բարեփոխումների իրականացման գործընթացում, կարևորել է նաև հանրային իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված քայլերը:

Հանդիպման ընթացքում քննարկվել են դատաիրավական բարեփոխումներին, դրանցում դատախազության դերին վերաբերող հարցեր: Անդրադարձ է եղել կոռուպցիայի դեմ պայքարին և դրանում հասարակական կազմակերպությունների ներգրավվածությանն առնչվող, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություններ կայացնող մի շարք այլ հարցերի:



ՀՐԱՅՐ ԹՈՎԱՍԱՅԱՆ

«Ստ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
«Վետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԶԵՎԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

Պորտուգալիայի առաջին Սահմանադրությունն ընդունվել է հեռավոր 1822 թվականին: Պորտուգալիան արևմտաեվրոպական երկրների շարքում առանձնանում է այն հանգամանքով, որ այս երկրում կառավարման արդյունավետ ձևի փնտրտուքները բավականին երկար են ընթացել: Պորտուգալիան այն եզակի պետություններից է, որը ունենալով պառլամենտական կառավարման ձև, հետագայում անցում է կատարել կիսանախագահականին:

1910 թվականի հոկտեմբերի 5-ին պորտուգալական հեղափոխությունն ավարտվեց հաղթանակով, և երկրում հաստատվեց պառլամենտական հանրապետություն՝ Պորտուգալիայի առաջին Հանրապետությունը՝ վարչապետի գլխավորությամբ:

1926 թվականի մայիսի 29-ին կատարվեց հեղաշրջում, և տապալվեց առաջին Հանրապետությունը: Երկրում հաստատվեց բռնապետական ռեժիմ, որը հայտնի է Ազգային դիկտատուրա (պորտ.՝ Ditadura Nacional) անունով:

Կառավարման խառը ձևաչափը Պորտուգալիայում սահմանվեց «մեխակների հեղափոխությունից հետո»՝ 1976 թվականին ընդունված Սահմանադրությամբ: Պորտուգալիան այսօր արևմտաեվրոպական այն փոքրաթիվ պետություններից է, որոնց Սահմանադրությունները սահմանում են կառավարման կիսանախագահական մոդել: Ուշագրավ է նաև Պորտուգալիայի Սահմանադրության անկայունությունը: Ներկայումս գործող, 1976 թվականին ընդունված Սահմանադրությունը 6 անգամ ենթարկվել է փոփոխության՝ 1982, 1989, 1992, 1997, 2001 և 2004 թվականներին¹ և կառավարման ձևի սահմանման առումով ևս ունի մի շարք առանձնահատկություններ²: Կարելի էր

ենթադրել, թե իր վրա պետք է կրած լինի ֆրանսիական դասական կիսանախագահական համակարգի ազդեցությունը: Ժխտել այդ ազդեցությունը, թերևս, հիմնավոր չէ, սակայն միաժամանակ ակնհայտ է, որ կառավարման ձևին վերաբերող ֆրանսիական Սահմանադրության նորմերը մեխանիկորեն արտատպված չեն Պորտուգալիայի Սահմանադրության մեջ:

Պորտուգալիայի Սահմանադրության 120-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահը ներկայացնում է Պորտուգալիայի Հանրապետությունը, ապահովում է ազգային անկախությունը, պետության միասնականությունը և ժողովրդավարական ինստիտուտների բնականոն գործունեությունը, ի պաշտոնե զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարն է²: Նախագահի նման սահմանադրաիրավական կարգավիճակը թույլ է տալիս պնդել, որ նախագահի դերը պետական մարմինների համակարգում երկրորդային չէ: Այստեղ դեռ խոսք չկա գործադիր իշխանության ոլորտում նրա լիազորությունների ու դերի մասին, ինչպես նաև՝ ներքին և արտաքին քաղաքականության հարցերում նրա դերակատարության մասին, սակայն դրանց որևէ կարգավորում չի կարող զրոյացնել նախագահի սահմանադրաիրավական նման կարգավիճակը: Պետության անվտանգության հարցում նախագահի՝ գերագույն գլխավոր հրամանատար լինելն արդեն իսկ բավարար հիմք է նրա ծանրակշիռ դերակատարության համար:

Նախագահի ուժեղ դիրքերը պայմանավորված են նաև այն հանգամանքով, որ, Սահմանադրության 121-րդ հոդվածի համաձայն՝ «Հանրապետության Նախագահն ընտրվում է ժողովրդի կողմից համընդհանուր, հավասար

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

¹ Ст'ю Португалия / Конституционные основы, характеристика формы правления. <http://www.hyno.ru/tom1/1329.html>:

² Ст'ю նույն տեղում:

և ուղղակի ընտրությունների միջոցով՝ գաղտնի քվեարկությամբ...»³: Սահմանադրության հետագա հոդվածների վերլուծությունը վկայում է, որ Պորտուգալիայի պառլամենտը ևս ընտրվում է ուղղակի ընտրությունների միջոցով, և «կրկնակի ժողովրդավարական լեգիտիմության» հայեցակարգի տեսանկյունից կարելի է ենթադրել, որ կառավարության ձևավորման հարցում նախագահը և խորհրդարանը քաղաքական մրցակիցներ են:

Սահմանադրության 187-րդ հոդվածի համաձայն՝ վարչապետին նշանակում է Հանրապետության Նախագահը՝ պառլամենտում ներկայացված քաղաքական կուսակցությունների հետ խորհրդակցելուց հետո, ընտրությունների արդյունքների հաշվառմամբ⁴: Գործնականում կառավարության ղեկավար է դառնում այն կուսակցության ղեկավարը, որը ստացել է պառլամենտի տեղերի մեծամասնությունը: Նախագահի դերն այս հարցում կարծես թե այնքան էլ վճռորոշ չէ՝ եթե պառլամենտում առկա է հստակ մեծամասնություն: Նախագահի դերը կարող է որոշակիորեն կարևորվել, երբ հստակ ձևավորված մեծամասնություն չկա, և նախագահը ստանձնում է պառլամենտում ներկայացված ուժերի հետ բանակցողի դեր ու փորձում է որևէ թեկնածուի շուրջ ձևավորել մեծամասնություն (հնարավոր է կոալիցիոն կառավարության ձևավորում):

Պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ Սահմանադրությունը սահմանում է երկու ոչ այնքան որոշակի չափորոշիչներ՝ վարչապետ նշանակելու համար. առաջինը խորհրդարանում ներկայացված կուսակցությունների հետ խորհրդակցելն է, երկրորդը՝ ընտրությունների արդյունքները հաշվի առնելը: Խորհրդակցության արդյունքները չեն կարող պարտադիր հետևանքներ ունենալ, իսկ ընտրությունների արդյունքներն էլ ընդամենը պետք է հաշվի առնվեն, այլ ոչ թե հիմք ընդունվեն: Իրական կյանքում նախագահի շեղումը՝ մեծամասնության ներկայացուցչին վարչապետ նշանակելու հարցում, կարող է դառնալ լիազորությունների հարցով սահմանադրական դա-

տարանում վեճի առարկա: Միանշանակ չի կարելի պնդել, որ նման վեճեր կարող են առաջանալ, կամ որ դրանք բացառվում են, քանզի դա պայմանավորված է մի շարք գործոններով՝ պառլամենտում ուժերի իրական հարաբերակցություն, նախագահի և պառլամենտական մեծամասնության հարաբերակցություն և այլն:

Հանրապետության Նախագահի կողմից վարչապետի նշանակումը և կառավարության կազմավորումը դեռևս բավարար պայմաններ չեն կառավարության լիազորությունների ստանձնման համար: Որպեսզի կառավարությունը կարողանա անցնել իր վրա դրված գործառնությունների իրականացմանը, կառավարության ներկայացրած ծրագիրը պետք է խորհրդարանի հավանությանն արժանանա: Եթե ներկայացված ծրագիրը չարժանանա պառլամենտի մեծամասնության հավանությանը, ապա վարչապետը հրաժարական է ներկայացնում: Կառավարության հրաժարականով է ավարտվում նաև, երբ խորհրդարանի կողմից կառավարության վստահության հարցը մերժվում է, ինչը խորհրդարանում քվեարկության դնելու իրավունք ունի կառավարությունը: Ըստ այդմ՝ կառավարությունը քաղաքական պատասխանատվություն է կրում խորհրդարանի առջև:

Սակայն, ի տարբերություն Ֆրանսիայի և ի նմանություն Հայաստանի Հանրապետության (վերլուծության համար հիմք է ընդունվել Հայաստանի Հանրապետության 2005 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունը)՝ Պորտուգալիայում կառավարությունը երկակի պատասխանատվություն է կրում: Սահմանադրության 190-րդ հոդվածն ուղղակիորեն սահմանում է, որ կառավարությունը պատասխանատվություն է կրում Հանրապետության Նախագահի և պառլամենտի առջև⁵: Պորտուգալիայի Սահմանադրությունը նախագահին իրավունք է վերապահում ցրելու կառավարությունը, ինչի հիման վրա կառավարության պատասխանատվության հարցը կարող է ընդլայնվել մինչև խորհրդարանի և նախագահի առջև պատասխանատվության: Սահմանադրության 195-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Նախագահը,

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս նույն տեղում:

⁵ Տե՛ս նույն տեղում:

լսելով Ազգային ժողովի կարծիքը, կարող է ցրել կառավարությունն այն ժամանակ, երբ դա անհրաժեշտ է ժողովրդավարական ինստիտուտների բնականոն գործունեությունն ապահովելու համար: Նշված նորմը չի բացահայտում «ժողովրդավարական ինստիտուտների ոչ բնականոն գործունեություն» հասկացությունը: Արդյոք բնականոն գործունեությունը ենթադրու՞մ է նախագահի կուսակցության և խորհրդարանական մեծամասնություն կազմող կուսակցության համընկնելը, երբ նախագահը հնարավորություն է ստանում անձամբ (ինքնուրույն) կազմավորելու կառավարությունը՝ դառնալով դրա ղեկավարը: Դա կարող է պարզվել միայն իրական կյանքում: Պետական ժողովի կարծիքն ընդհանրապես որոշիչ դեր չի խաղում նախագահի համար: Նախագահը սահմանադրորեն առանց արգելքի կարող է ցրել կառավարությունը: Սակայն այս նորմը, չնայած իր անորոշությանը, այնուամենայնիվ, չի կարող կամայական մեկնաբանություն ստանալ և, հետևաբար՝ կիրառվել ընտրողաբար: Իսոպքը, ըստ էության, քաղաքական ճգնաժամերի մասին է կամ առնվազն այնպիսի իրավիճակների, երբ ժողովրդավարական ինստիտուտները շեղվել են սահմանադրորեն ամրագրված մեխանիզմներից: Մյուս կողմից՝ նախագահը պառլամենտական մեծամասնությամբ կաշկանդված է վարչապետի ընտրության հարցում:

Պորտուգալիայի նախագահի լիազորությունների կարևորությունը պայմանավորվում է նաև այն հանգամանքով, որ նա խորհրդարանն արձակելու իրավունք ունի: 2004 թվականի դեկտեմբերի սկզբին Պորտուգալիայի նախագահ Ժ. Սամպայուն, օգտվելով իր սահմանադրական իրավունքից, հայտարարեց խորհրդարանի արձակման և արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացման մասին: Հերթական ընտրությունները պետք է անցկացվեին 2006 թվականին, սակայն արտահերթ ընտրություններն անցկացվեցին դրանից մոտ մեկ տարի շուտ՝ 2005 թվականի

փետրվարին: Ըստ նախագահի՝ վարչապետ Ս. Լոպեզը պետության կառավարման համար անհրաժեշտ լիազորություններ չուներ: Նախագահն ասաց. «Նա չունի անհրաժեշտ քաղաքական պայմաններ (լիազորություններ) Պորտուգալիայի և պորտուգալացիների հետևողական և կայուն մոբիլիզացիայի ապահովման համար»:

Պորտուգալիայի նախագահի կարծիքով՝ խորհրդարանում տիրող իրավիճակն այնպիսին էր, որ ոչ մի կուսակցություն և ոչ մի կոալիցիա չէր կարող կառավարություն կազմավորել: Ժ. Սամպայուն ստիպված էր նման որոշում կայացնել, երբ 2004 թվականի նոյեմբերին վարչապետ Ա. Գուտտերեշը հրաժարական տվեց: Հրաժարականը հաջորդել էր տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին, որոնց արդյունքով սոցիալիստական կուսակցությունը պարտվել էր, իսկ սոցիալ-դեմոկրատները՝ հաղթել⁶:

Ֆրանսիայի և Հայաստանի 1995 թվականի խմբագրությամբ Սահմանադրությունների նմանությամբ Հանրապետության նախագահի նման քայլի համար Պորտուգալիայի Սահմանադրությամբ հիմքեր սահմանված չեն: Առկա են միայն ժամանակային սահմանափակումներ՝ որոշակի իրավիճակների հետ կապված: Այսպես՝ Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ խորհրդարանը չի կարող լուծարվել նախագահի պաշտոնավարման վերջին վեց ամսվա ընթացքում, ինչպես նաև՝ նրա ընտրվելուց հետո վեց ամսվա ընթացքում⁷: Ինչ վերաբերում է առաջին սահմանափակմանը՝ դա լիովին տեղավորվում է պետության մեխանիզմի տրամաբանության մեջ. լուծարելով խորհրդարանը՝ չի կարելի անտեսել, որ որոշակի ժամանակահատված երկիրը գոյատևելու է առանց օրենսդիր մարմնի: Եթե այս ընթացքում թափուր է լինելու նաև նախագահի պաշտոնը (հետևաբար՝ չի լինի և կառավարություն), պետությանը սպառնում է անկառավարելի դառնալու վտանգը: Սակայն կառավարության ձևավորման հարցի վերլուծության շրջանակներում

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

⁶ Տեն Ե. Ստոյկո, Պորտուգալիայի աջակողմյան սոցիալ-դեմոկրատները // Կոմերսանտ. 2004 թվականի դեկտեմբերի 6:

⁷ Տեն Պորտուգալիայի Սահմանադրությունը՝ http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm:

առավել կարևոր է համարվում երկրորդ սահմանափակումը՝ խորհրդարանի ընտրությունից հետո վեց ամսվա ընթացքում վերջինիս լուծարման անհնարինությունը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ, 195 հոդվածի համաձայն՝ նոր օրենսդիր մարմնի կազմավորումից հետո կառավարությունը հրաժարական է տալիս, խորհրդարանական ընտրությունները միշտ նշանավորում են կառավարություն ձևավորելու անհրաժեշտությունը:

Ինչպես վերը նշվեց՝ Պորտուգալիայի կառավարությունը կազմավորվում է Հանրապետության նախագահի կողմից՝ հաշվի առնելով խորհրդարանում քաղաքական ուժերի դասավորվածությունը: Ելնելով խորհրդարանի գործունեության առաջին վեց ամիսների ընթացքում լուծարման անհնարինությունից՝ խորհրդարանական մեծամասնության (կամ խորհրդարանական կոալիցիայի) դիրքորոշումը հաշվի առնելը պարտադիր է դառնում: Նախագահը չի կարող դեմ գնալ դրան քաղաքական ուժերի և ոչ մի դասավորվածության դեպքում: Այսպիսով՝ նույնիսկ եթե նախագահի և խորհրդարանական մեծամասնության կուսակցական պատկանելությունը նույնը չեն («իշխանությունների գոյակցության» ժամանակաշրջան), տվյալ ժամանակահատվածում կառավարություն ձևավորելու միակ հնարավոր ուղին խորհրդարանական եղանակն է («նախագահական» իշխանությանը հակադրվում է «կուսակցական-կառավարական» իշխանությունը): Սակայն, բացի նշվածներից՝ խորհրդարանի լուծարման ոչ մի այլ սահմանափակում Սահմանադրությունը չի նախատեսում: Ըստ այդմ՝ վեց ամսից հետո նախագահի լիազորությունների ծավալն էապես աճում է. նա կարող է լուծարել խորհրդարանը, և այդպիսով՝ փորձել վերջ դնել «իշխանությունների գոյակցությանը», կամ էլ կարող է պարզապես ճնշում գործադրել իրեն ընդդիմադիր խորհրդարանական մեծամասնության վրա և լուծարման սպառնալիքի ներքո (195-րդ հոդվածի 2-րդ մասի հիման վրա), հայտարարելով «ժողովրդավարական ինստիտուտների բնականոն գործունեության դժվարությունների» վտանգի մասին, ցրել կառավարությունը, որը փորձել ձևավորել անձամբ: Ընդ որում՝ չպետք

է մոռանալ, որ և՛ նախագահը, և՛ խորհրդարանը օժտված են առաջնային լեգիտիմությամբ և, համապատասխանաբար մրցակցելով կառավարություն ձևավորելու իրավունքի համար, նրանք չպետք է մոռանան իրենց գործողությունների նկատմամբ ժողովրդի վերահսկողության և այն մասին, որ այդ գործողությունները կարող են հիմք դառնալ հերթական ընտրություններում չվերընտրվելու կամ իրենց տեղերն էականորեն կորցնելու համար: Պորտուգալիայում Հանրապետության նախագահն ընտրվում է 5 տարի ժամկետով, իսկ խորհրդարանը՝ 4 տարի ժամկետով (համակցության իրավիճակների ստեղծումն առավել հավանական է): Սա նշանակում է, որ նրանց ընտրություններն անցկացվում են տարբեր ժամանակահատվածներում, ինչն «առավել թարմ լեգիտիմության» հայեցակարգի տեսանկյունից նույնպես պետք է հաշվի առնի նախագահը: Այսպիսով, եթե նախագահը, խորհրդարանական մեծամասնությունը և, հետևաբար՝ կառավարությունը պատկանում են միևնույն կուսակցությանը, բարձրագույն պետական կառույցներում դիտվում է մենիշխանություն: Կառավարությունն այս իրավիճակում հանդես է գալիս որպես նախագահական, իսկ նախագահն էլ դառնում է գործադիր իշխանության իրական ղեկավարը: Բայց եթե նախագահը և խորհրդարանական մեծամասնությունը պատկանում են տարբեր քաղաքական ուժերի, նախագահի դիրքը թուլանում է:

Առկա են նաև տարբերություններ կառավարության սահմանադրաիրավական կարգավիճակի սահմանման հարցում: 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության ներքին քաղաքականությունը: Արտաքին քաղաքականությունն իրականացնում է Հանրապետության Նախագահի հետ համատեղ⁸: Պորտուգալիայի պարագայում ձևակերպումները մի փոքր այլ են: Պորտուգալիայի Սահմանադրության 182-րդ հոդվածի համաձայն՝ կառավարությունը պետության ընդհանուր քաղաքականությունը ղեկավարող և պետական ադմինիստրացիայի բարձրագույն մար-

⁸ Տես ՀՀ Սահմանադրություն, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում:

մին է⁹: Ակնհայտ է, որ, ի տարբերություն Հայաստանի՝ Պորտուգալիայում թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը կառավարության մենաշնորհն է: Թեև ՀՀ Սահմանադրությունը երբևէ չի սահմանել, թե՛ որ պետական մարմինն է պետական իշխանության բարձրագույն մարմինը, իրական կյանքում և հանրային ընկալման մեջ այդ մարմինը միշտ եղել է Հանրապետության Նախագահը:

Պորտուգալիան կիսանախագահական համակարգ ունեցող այն եզակի երկրներից է, որտեղ կառավարությունը կրում է երկակի պատասխանատվություն՝ ինչպես Նախագահի, այնպես էլ՝ պառլամենտի առջև (հոդված 191): 2005 թվականի սահմանադրական փոփոխությունների արդյունքով՝ Հայաստանի Հանրապետությունը հրաժարվեց այս ինստիտուտից՝ Նախագահին թողնելով միայն կառավարությանն անվստահություն հայտնելու մասին Ազգային ժողով որոշման նախագիծ ներկայացնելու հնարավորությունը (հոդված 84): Սակայն, ի տարբերություն Պորտուգալիայի, որտեղ նորընտիր Հանրապետության նախագահի լիազորությունների ստանձնման օրը կառավարությունը հրաժարական չի տալիս, Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր տրամաբանությունից (օրինաչափություններից) շեղված այս ինստիտուտը սահմանված է: Եթե կիսանախագահական համակարգի էությունն այն է, որ կառավարություն ձևավորում է պառլամենտում մեծամասնություն ունեցող քաղաքական ուժը, այս ինստիտուտն իմաստազրկվում է, քանի որ նախագահական ընտրությունները որևէ կերպ պառլամենտում քաղաքական ուժերի հարաբերակցությունը չեն կարող փոխել, իսկ փոփոխման պարագայում Ազգային ժողովը կարող է իր նախաձեռնությամբ կամ Հանրապետության Նախագահի առաջարկությամբ սկսել կառավարությանն անվստահություն հայտնելու գործընթաց:

Հանրապետության Նախագահի, կառավարության սահմանադրաիրավական կարգա-

վիճակի հարցում նմանություններով հանդերձ՝ առկա է մի էական տարբերություն, որը փոխում է ուժերի հարաբերակցությունը: Խոսքը Հանրապետության նախագահի ակտերի կրկնաստորագրման ինստիտուտի մասին է:

Կրկնաստորագրումը (լատ.՝ *contrasignare*) վարչապետի կամ նախարարի կողմից պետության գլխի ակտի հաստատումն է, որով վերջինս իրավաբանական ուժ է ստանում¹⁰: Կրկնաստորագրման ինստիտուտն անկիրառելի է նախագահական կառավարման համակարգ ունեցող երկրներում, սակայն անհրաժեշտ է պառլամենտականում¹¹: Կիսանախագահական համակարգում այդ ինստիտուտն ունի սահմանափակ բնույթ. այդպիսի ստորագրություն անհրաժեշտ է նախագահի ոչ բոլոր ակտերի համար, իսկ մի շարք կիսանախագահական հանրապետություններում (հետխորհրդային պետություններում) կրկնաստորագրում նախատեսված չէ¹²:

Սահմանադրության համաձայն՝ արտաքին քաղաքականության և պաշտպանության բնագավառներում Պորտուգալիայի նախագահի իրավասությունն այդքան դոմինանտ չէ, ինչքան Հայաստանում, և Պորտուգալիայի նախագահն այստեղ պարտավոր է ոչ միայն համագործակցել կառավարության հետ, այլև, ըստ էության՝ առանց կառավարության գրեթե ոչինչ չի կարող անել: Նման պնդման համար հիմք է Պորտուգալիայի Սահմանադրության 140-րդ հոդվածով նախատեսված կրկնաստորագրման ինստիտուտը: Ըստ այդ հոդվածի՝ կրկնաստորագրման են ենթակա 133-րդ հոդվածի “f”, “j”, “l”, “m” և “p” ենթակետերում, 134 հոդվածի “b”, “d” և “f” ենթակետերում և 135-րդ հոդվածի “a”, “b” և “c” ենթակետերում սահմանված հարցերի վերաբերյալ ընդունված ակտերը: Այս հոդվածի համաձայն՝ կրկնաստորագրման են ենթակա նախագահի կողմից կատարվող բոլոր նշանակումները՝ նախարարներից մինչև զինված ուժերի ղեկավարություն: Կրկնաստորագրմամբ վարչապետը հավաստում է երկու բան. առա-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

⁹ Տե՛ս Պորտուգալիայի Սահմանադրությունը՝ http://www.concourt.am/armenian/legal_resources/world_constitutions/constit/portugal/portug-r.htm:

¹⁰ Տե՛ս Գ.Բ. Арутюнян, М.В. Баглай. Конституционное право (энциклопедический словарь), Москва, «Норма», 2006, էջ 231:

¹¹ Տե՛ս Чиркин В.Е. Конституция: российская модель.– М.: ЮристЪ, 2002, էջ 139:

¹² Տե՛ս նույն տեղում:

ջինն այն է, որ այդ ակտի ընդունման համար պահպանվել են անհրաժեշտ ընթացակարգերը, և վարչապետը համաձայն է այդ ակտերի հետ, երկրորդը, որ ամենակարևորն է՝ վարչապետն իր ստորագրությամբ այդ ակտի համար քաղաքական պատասխանատվություն է ստանձնում պառլամենտի առջև: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 56-րդ հոդվածում ամրագրված՝ Հանրապետության Նախագահի՝ հրամանագրեր արձակելու իրավունքը վերջինիս առջև դնում է միայն մեկ սահմանափակում, ըստ որի՝ հրամանագրերը չպետք է հակասեն Սահմանադրությանը և օրենքներին: Սա անբավարար է, քանի որ այս հոդվածը, մի կողմից, Նախագահին տալիս է առաջնային նորմատիվ իրավասություն, իսկ մյուս կողմից՝ սահմանում է Նախագահի բոլոր տեսակի հրամանագրերի գերակայություն կառավարության որոշումների և այլ նորմատիվ իրավական ակտերի նկատմամբ:

Հայաստանի Հանրապետությունում կրկնաստորագրման ինստիտուտն ի սկզբանե բացակայել է: Դա սահմանվեց միայն 2015 թվականի սահմանադրական փոփոխություններով, որոնցով Հայաստանն անցում է կատարում կիսանախագահական կառավարման համակարգից դեպի պառլամենտական կառավարման համակարգ:

Կիսանախագահական համակարգում այս ինստիտուտի առկայությունը, մի կողմից, ապահովում է իշխանության բարձրագույն մարմինների՝ Հանրապետության նախագահի և կառավարության ներդաշնակ աշխատանքը, բացառում է իրավական հարթության մեջ հակասությունները, մյուս կողմից՝ հնարավոր տարածայնությունների պարագայում, առաջնային է դարձնում պառլամենտական մեծամասնության աջակցությունը վայելող կառավարության կարծիքը:

Համեմատությունը ցույց է տալիս, որ հիմնականում, բացառությամբ կրկնաստորագրման ինստիտուտի, Պորտուգալիայի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության քննարկման առարկային վերաբերող դրույթները բավականին նման են, սակայն կրկնաստորագրման ինստիտուտն իրական կյանքում Պորտուգալիայում նախագահի դերը դարձնում է ոչ առաջնային և առաջ է մղում կառավարությանը: Նման միտում Հայաստանի Հանրապետությունում նկատելի չէ:

Այսօր Պորտուգալիայի կառավարման ձևն իրականում էլ ավելի է նմանվում պառլամենտականին՝ չնայած նախագահի ուղղակի ընտրությանը, իսկ Հայաստանի Հանրապետությունում նկատելի են նախագահական կառավարման համակարգի տարրերը:



ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱԼ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի ղեկավարի տեղակալ,
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտ,
Հայդեյբերգի համալսարանի հրեագիտության
ինստիտուտի մագիստրանտ (Հայդեյբերգ, Գերմանիա)

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐՆ ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ՉԱՐԳԱՅՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՍՏՈՒՄ**

Իսրայելի պետությունում մարդու իրավունքների հիմնախնդիրները բավականին բարդ են ու բազմաշերտ: Սույնի շրջանակներում ուսումնասիրության առարկան առավելապես մարդու իրավունքների ճանաչման, ամրագրման ու պաշտպանության պատմական զարգացումն է: Ըստ այդմ՝ Իսրայելում մարդու իրավունքների ուսումնասիրությունը կիրականացվի երկու հիմնական փուլերով՝ մինչև 1992թ. մարդու իրավունքների ոլորտում երկու Հիմնական օրենքների ընդունումը և 1992թ. հետո մինչ մեր օրերը¹:

Իսրայելում մարդու իրավունքների հիմնախնդրի ամբողջական ընկալման համար դա պետք է քննարկել սահմանադրաիրավական զարգացումների առավել լայն համատեքստում: Ինչպես գիտենք՝ մի շարք պատճառներով Իսրայելում հնարավոր չեղավ մեկ միասնական սահմանադրության, ինչպես նաև մարդու իրավունքների հոչակագրի ընդունումը՝ չնայած նման փաստաթղթերի ընդունման բազմաթիվ փորձերին²: Ստեղծված պայմաններում Իսրայելի պետությունը որդեգրեց մարդու իրավունք-

¹ Իսրայելի գերագույն դատարանի նախկին նախագահ, այսպես կոչված՝ իսրայելյան սահմանադրական հեղափոխության հեղինակ-նախաձեռնող պրոֆ. Ահարոն Բարաքն Իսրայելի պետության ողջ պատմությունը ևս բաժանում է նշված երկու փուլի միջև՝ բաժանման հիմքում դնելով նույն չափանիշը, այն է՝ մարդու իրավունքի ոլորտում երկու հիմնական օրենքների ընդունումը և դրանց հիման վրա սահմանադրական հեղափոխության իրականացումը (տես Barak A. Human rights in Israel // Israel Law Review, Vol. 39 N 2, 2006, էջ 13): Այս մոտեցումն է որդեգրում նաև իսրայելյան սահմանադրական իրավունքի խոշորագույն մասնագետ պրոֆ. Սյուզի Նավոտն իր «Իսրայելի սահմանադրական իրավունքը» աշխատության մեջ (տես Navot S. Israeli Constitutional Law. The Netherlands. Kluwer Law International, 2007, էջ 199-203):

² Սահմանադրության ընդունման նախաձեռնությունը ձախողվեց ոչ միայն պետության կազմավորման սկզբնական շրջանում, այլև իր գոյության հետագա տասնամյակների ընթացքում: Այսպես՝ Սահմանադրության ընդունման շարժումներից ամենակարևորը, թերևս, 1980-ական թվականների սահմանադրական շարժումն էր՝ հայտնի «Ռայխմանի Սահմանադրություն» անվանմամբ: Թեպետ նախագիծը մեծ հասարակական օժանդակություն էր վայելում, այդ թվում՝ Իսրայելի իշխանական վերնախավի շրջանակներում, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա զարգացումները, այս նախագիծը ևս պետք է ձախողվեր: Ձախողման պատճառն առավելապես կրոնական ճամբարի հակազդեցությունն էր՝ հատկապես Հալախայի վերացման և քաղաքացիական անունությունների նախատեսման հնարավորության հետ կապված (այս մասին տես Зонтиков И. Борьба за принятие конституции в Израиле в 1980-2000-е годы // Ближний Восток и Современность, сборник статей, выпуск пятый, Москва, 2003): Նմանատիպ խոշոր սահմանադրական շարժում տեղի ունեցավ նաև 2000-ական թվականների սկզբներին՝ հայտնի «Սահմանադրական լոբբի» անվանմամբ, դա ևս դատապարտված էր ձախողման: Այս սահմանադրական շարժման հիմքում դրված էր այն գաղափարախոսությունը, որ Սահմանադրությունը պետք է ընդունվեր «լայն» հասարակական միաբանության (կոնսենսուսի), ժողովրդավարական սկզբունքների հիման վրա, պետք է պահպաներ Իսրայելի պետության՝ որպես հրեա ժողովրդի «ազգային տան» բնութագիրը: Բացի այդ՝ նախատեսվում էր, որ Սահմանադրությունն ամրագրելու էր Իսրայելի պետությունում գոյություն ունեցող մշակութային և սովորութային ողջ բազմազանությունը և երաշխավորելու էր մարդու իրավունքները, մասնավորապես՝ փոքրամասնությունների իրավունքները: «Սահմանադրական լոբբին» մշակեց «Սահմանադրության ընդունման» մասին Հիմնական օրենքի նախագիծը, որն անգամ ընդունվեց առաջին ընթերցմամբ՝ 2000թ. հունիսի 7-ին, իսկ «Սահմանադրական դատարանի մասին» Հիմնական օրենքը՝ 2000թ. օգոստոսի 22-ին: Առաջին Հիմնական օրենքն ապագայում Սահմանադրության ընդունման երաշխիքն էր, իսկ երկրորդը՝ սահմանադրական դատարանի հիմնելու՝ Սահմանադրությանն ստատուտային օրենսդրության համապատասխանությունն ստուգելու իրավազորությամբ: «Սահմանադրական լոբբին» գոյատևեց մի քանի տարի և 15-րդ Քնեսետի լուծարմամբ դադարեցրեց իր գործունեությունը՝ 2003թ. հունվարի 15-ին: Ավելի մանրամասն տես, օրինակ, Зонтиков И. նշված աշխատությունը:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

ների դատական ճանաչման ու ամրագրման ուղին, ինչը, սակայն, նույնպես հեշտ չէր իրագործել: Սահմանադրագետ Սյուզի Նավոտը, խոսելով այս փուլում մարդու իրավունքների դատական ճանաչման մասին, նշում է. «Prima facie³, արտակարգ դրությամբ պայմանավորված՝ մարդու իրավունքները Սահմանադրությամբ կամ Հիմնական օրենքով ամրագրելու անհնարինության, ինչպես նաև պառլամենտական գերակայության պայմաններում մարդու իրավունքներ «ստեղծելու» գերագույն դատարանի իրավասությունը սահմանափակ է:»⁴:

Հատկանշական է նաև, որ Իսրայելի պետության ստեղծման առաջին իսկ օրերից բազմիցս փորձեր են արվել գործողության մեջ դնել Իսրայելի Անկախության հռչակագիրը⁵, որը մի շարք հիմնարար իրավունքներ և ազատություններ ամրագրող միակ փաստաթուղթն էր Իսրայելի պետությունում, ինչպես, օրինակ՝ պետության բոլոր բնակիչների լիակատար սոցիալական և քաղաքական իրավահավասարությունը՝ կրոնից, սեռից և ազգությունից անկախ, ինչպես նաև կրոնի ու խղճի ազատությունը և այլն: Անկախության հռչակագրին իրավական ուժ տալու բոլոր փորձերը սկզբնական շրջանում անհաջողության մատնվեցին: Իսրայելի պետության գոյության առաջին իսկ տարիներին Իսրայելի գերագույն դատարանը սահմանեց, որ Անկախության հռչակագիրն ընդամենը նպատակ ուներ հաստատելու պետության հիմնադրման փաստը՝ միջազգային իրավունքի տեսանկյունից ճանաչում ստանալու նպատակով: Դա արտահայտում է ժողովրդի

տեսլականը և նրա «raison d'être»-ն⁶. Անկախության հռչակագիրը Սահմանադրություն չէ և ոչ էլ օրենքի ուժ ունի⁷:

Այդուհանդերձ՝ ժամանակի ընթացքում Իսրայելի գերագույն դատարանը փոխեց իր դիրքորոշումը՝ աստիճանաբար սկսելով հղում անել Անկախության հռչակագրին՝ որպես իրավական աղբյուրի՝ Քնեսեթի կամ մանդատային իշխանությունների⁸ կողմից ընդունված օրենքների մեկնաբանության համար: Այս առումով՝ շրջադարձային էր, թերևս, Քոլ Հա'ամն ընդդեմ ներքին գործերի նախարարի գործը⁹, որով Իսրայելի գերագույն դատարանի դատավոր Ագրանատը սահմանեց, որ, թեև Անկախության հռչակագիրը պարտադիր իրավաբանական ուժ չունի, այդուհանդերձ՝ ստատուտները պետք է մեկնաբանվեն այդտեղ ամրագրված սկզբունքներին համապատասխան¹⁰: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ սրանով դատավոր Ագրանատն Իսրայելի պետությունում քաղաքացիական իրավունքների իրավական ճանաչման հիմքը դրեց¹¹: Դատավոր Ագրանատի կողմից սահմանվեց նաև, որ Իսրայելը ժողովրդավարական պետություն է, իսկ ժողովրդավարական իրավակարգը չի կարող գոյություն ունենալ, եթե իրավական համակարգը չի ճանաչում արտահայտվելու ազատությունը¹²: Սահմանվեց նաև, որ, թեև սահմանադրության բացակայության պայմաններում հնարավոր չէ անվավեր ճանաչել արտահայտվելու ազատությանը հակասող օրենքը, դատարանը ելնում է օրենքի՝ արտահայտվելու ազատության հետ համատեղելի մեկնաբանությունից¹³: Այս

³ Լատիներենից թարգմանաբար՝ *առաջին հայացքից*:

⁴ Տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 199:

⁵ Իսրայելի պետության անկախության հռչակագիրն ընդունվեց բրիտանական մանդատի դադարեցման օրը՝ 1948թ. մայիսի 14-ին՝ ժողովրդական խորհրդի անդամների կողմից Իսրայելի անկախության հռչակմամբ: Անկախության հռչակագրի ամբողջական տեքստի համար տես <http://www.mfa.gov.il/MFA/Peace%20Process/Guide%20to%20the%20Peace%20Process/Declaration%20of%20Establishment%20of%20State%20of%20Israel>:

⁶ Ֆրանսերենից թարգմանաբար՝ *գոյություն ունենալու պատճառը*:

⁷ Ավելի մանրամասն տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 200:

⁸ Պաղեստինի տարածքի նկատմամբ բրիտանական մանդատը՝ 1918-1948թթ.:

⁹ Տե՛ս HCJ 73/53 Kol ha'am v. Minister of Interior (1953) 7 (2) PD 871:

¹⁰ Տե՛ս նույն տեղը:

¹¹ Տե՛ս Navot S., նշված աշխատությունը, էջ 200, Barak A., նշված աշխատությունը, էջ 13:

¹² Տե՛ս Navot S., նույն տեղը:

¹³ Նման մեկնաբանությունը, պրոֆ. Բարաքի բնորոշմամբ, «նպատակային» մեկնաբանություն է, ըստ այդմ՝ սուբյեկտիվ նպատակից (օրենսդրի մտադրությունը) բացի՝ գոյություն ունի նաև օբյեկտիվ նպատակ՝ իրավական համակարգի հիմնարար արժեքները, այդ թվում՝ իշխանությունների տարանջատումը, իրավունքի գերակայությունը և դատական անկախությունը: Ըստ հեղինակի՝ «... յուրաքանչյուր ստատուտ պետք է մեկնաբանվի՝ ելնելով այն կանխադրույթից, որ

նույն որոշմամբ սահմանվեց նաև, այսպես կոչված, մարդու իրավունքների և այլ հանրային շահերի «հավասարակշռման բանաձևը», որի համաձայն՝ արտահայտվելու ազատության սահմանափակումը կարող էր արդարացվել միայն հասարակական անդորրը լրջորեն վտանգող «գրեթե անխուսափելի» ուղեգրությունը կանխելու նպատակով¹⁴: Իսրայելի գերագույն դատարանի դիրքորոշումն այսպիսին էր նաև ազատական ժողովրդավարություններում լայն ճանաչում ստացած այլ մարդու հիմնական իրավունքների և ազատությունների, այդ թվում՝ աշխատանքի ազատության¹⁵, տեղաշարժվելու ազատության¹⁶, խղճի և կրոնի ազատության¹⁷,

ինչպես նաև իրավահավասարության¹⁸ մեկնաբանության հարցում:

Այսպիսով, ինչպես նշում է պրոֆ. Սյուզի Նավոտը, Իսրայելի գերագույն դատարանի կողմից «Քոլ հա՛ամ» գործի շրջանակներում մարդու իրավունքների կարևորության ճանաչումը՝ նախադեպի պարտադիրության սկզբունքի ուժով, Իսրայելի իրավական համակարգում դարձավ իրավական նորմ: Դրանով յուրաքանչյուր մարդ իրավունք ստացավ մարդու իրավունքները հարգելու պարտականության խախտման հիմքով դիմելու Իսրայելի արդարադատության բարձր դատարան¹⁹:

Աստիճանաբար գրեթե բոլոր մարդու հիմ-

դրա նպատակը մարդու իրավունքների առաջբաշտումն է: Այս սկզբունքից շեղումը թույլատրելի է միայն հակառակը պարզ, հստակ և միանշանակ կերպով սահմանված լինելու դեպքում:»: Այնուհետև՝ հեղինակը շարունակում է. «Ըստ այդմ՝ երբ օրենսդիրը նախատեսում է մարդու իրավունքները խախտելու իրավասության իրացման շրջանակը պետք է որոշվի, մի կողմից՝ պետական իրավագործության և, մյուս կողմից՝ խախտման ենթակա իրավունքը հավասարակշռելու միջոցով:»: Այս մոտեցումը, ըստ հեղինակի, նպաստում էր մարդու իրավունքների լայն պաշտպանությանը՝ միաժամանակ նաև չխախտելով պառլամենտի գերակայությունը, ապա, շարունակելով՝ նշում է. «Նման մոտեցման հիմնական թերությունն այն էր, որ հնարավորություն չէր տալիս անվավեր ճանաչելու մարդու իրավունքները խախտող՝ հավասարակշռման բանաձևով թույլատրելի սահմանն անցնող ստատուտները: Մեկնաբանության իր գործառույթն իրականացնելիս գերագույն դատարանը նշված փուլում (մինչև 1992թ. Հիմնական օրենքների ընդունումը՝ Վ.Կ.) այդպես էլ չանցավ մեկնաբանության այս սահմանը:» (Barak A., նշված աշխատությունը, էջ 13-16): Նշվածի կապակցությամբ հիմնականում նույն դիրքորոշումն ունի պրոֆ. Սյուզի Նավոտը՝ խոսելով Իսրայելի գերագույն դատարանի կողմից օգտագործվող «ենթադրական» և «մեկնաբանողական» գործիքների մասին, որոնց համաձայն՝ օրենսդիրը նպատակ չունի խախտելու մարդու իրավունքները, երկու տարբեր մեկնաբանությունների հիմք տվող ստատուտը պետք է մեկնաբանվեր՝ հոգուտ մարդու իրավունքների առավելագույնս պաշտպանվածության: Նման մեկնաբանությունը, միաժամանակ, ենթադրում է մարդու իրավունքները խախտող ստատուտի սահմանափակ մեկնաբանություն: Բացի այդ՝ պետական իշխանության բոլոր մարմինների և պաշտոնատար անձանց համար սահմանում է վերջիններիս գործունեության իրականացման սկզբունքը, որի համաձայն՝ մարդու իրավունքների խախտումն արգելվում է, բացառությամբ եթե հակառակն ուղղակիորեն նախատեսված է ստատուտում (Suzie Navot, նույն տեղը, էջ 201):

¹⁴ «Հավասարակշռման բանաձևի» գործնական կիրարկումն ամբողջական ընկալելու համար անհրաժեշտ ենք համարում ներկայացնել կոնկրետ օրինակ: Այսպես՝ Պաղեստինում դեռևս մանդատային իշխանության տարիներին՝ 1929թ. ընդունված Գերագույն հանձնակատարի օրոնանստով սահմանվում էր, որ Գերագույն հանձնակատարն իրավասու է մշտապես կամ ժամանակավորապես արգելելու լրագրի գործունեությունը, եթե լրագիրը իրապարակում է այնպիսի հոդված կամ տեղեկատվություն, որը, Հանձնակատարի գնահատմամբ, հավանականորեն, կվտանգեր հասարակական անդորրը: Այսպես, ինչպես տեսնում ենք, լրագրի գործունեությունը դադարեցնելու իրավասությունը և օրինակաբանությունը սահմանված էին միանշանակ, որպիսի պարագայում լուծման ենթակա միակ հարցը նման իրավասության իրականացման շրջանակը պարզելն է, որը պետք է իրականացվի «հավանականորեն» բառի մեկնաբանությունից: Մեկնաբանությունը, ինչպես նշվել է վերևում, պետք է հավասարակշռեր, մի կողմից՝ հասարակական անդորրը և, մյուս կողմից՝ արտահայտվելու ազատությունը: Ըստ այդմ՝ արտահայտվելու ազատության խախտումը կարող է թույլատրելի համարվել միայն այն դեպքում, երբ գրեթե հաստատ է, որ իրապարակվող հոդվածը կամ տեղեկատվությունը կարող է լրջորեն վտանգել հարարակական անդորրը: Երբ այդ վտանգն անմիջական չէ կամ քիչ հավանական է, կամ վտանգն ինքնին լուրջ չէ՝ մոտ է ժողովրդավարական հասարակությունում թույլատրելի չափին, ապա արտահայտվելու ազատությունը չի կարող սահմանափակվել: Ինչպես տեսնում ենք՝ Իսրայելի կողմից որդեգրված այս մոտեցումը հիմնական գծերով նման է ԱՄՆ կողմից արտահայտվելու ազատության հարցում որդեգրված մոտեցմանը՝ Սահմանադրության 1-ին փոփոխության համատեքստում: ԱՄՆ-ում հաշվեկշռման նմանատիպ բանաձևը հայտնի է որպես «ակնհայտ և իրական վտանգի» թեստ: Այս մասին ավելի մանրամասն տես Barak A., նշված աշխատությունը, էջ 14-15:

¹⁵ Տե՛ս, օրինակ՝ *Hilton v. The Fruit Council*, supra note 4; *HCJ 14/78 Agbaria v. The Fruit Council* [1978] *IsrSC* 32(3) 794:
¹⁶ Տե՛ս, օրինակ՝ *HCJ 672/87 Atmalia v. The Northern Commander* [1989] *IsrSC* 42(4) 708:
¹⁷ Տե՛ս, օրինակ՝ *HCJ 47/82 Progressive Judaism Movement fund v. The Minister of Religions* [1989] *IsrSC* 43(2) 661:
¹⁸ Տե՛ս, օրինակ՝ *HCJ 5432/03 SHIN for Equal Representation of Women v. The Board for Cable and Setellite Broadcasting* [2004] *IsrSC* 58(3) 65:
¹⁹ Տե՛ս Suzie Navot, նշված աշխատությունը, էջ 200:

նական իրավունքներն²⁰ իրենց ամրագրումն ստացան դատական որոշումներում՝ կազմելով, այսպես կոչված, «իրավունքների դատական բիլլ», որը ոչ այլ ինչ է, եթե ոչ Իսրայելի գերագույն դատարանի կողմից ճանաչում ստացած մարդու իրավունքների «ժողովածու»: Դրանք այն իրավունքներն են, որոնք ամրագրված են ոչ թե ստատուտներում, այլ գերագույն դատարանի որոշումներում: Հատկանշական է, որ «Մարդու արժանապատվության և ազատության մասին»²¹ Հիմնական օրենքի ընդունումից շատ առաջ դրանով նախատեսված մարդու հիմնական իրավունքներն արդեն իսկ ճանաչվել էին գերագույն դատարանի կողմից՝ վերջիններիս որևէ նորմատիվ հիմք՝ ամրագրում ունենալու հանգամանքից անկախ:

Այս համատեքստում կցանկանայինք անդրադառնալ, մասնավորապես, Իսրայելի գերագույն դատարանի կողմից մարդու անձեռնմխելիության իրավունքի ճանաչմանը: Այսպես՝ Կատլանի գործով²² գերագույն դատարանի առջև բարձրացված հարցի էությունը հետևյալում էր. «Բանտի վարչակազմն արդյոք իրավունք ունի՞ կրկն անգամ թմրանյութի հայտնաբերման նպատակով կալանավորված անձին՝ առանց վերջինիս համաձայնության, հոգնա անել այն պայմաններում, երբ պարզվել էր, որ բանտում նման եղանակով թմրամիջոցներ են մուտք արվում»:²³ Գերագույն դատարանը սահմանեց, որ Իսրայելում յուրաքանչյուր ոք ունի անձի անձեռնմխելիության և իր արժանապատվությունը հարգելու իրավունք, այդ թվում՝ կանանավորվածներն ու դատապարտյալները: Կալանավորված անձի նկատմամբ հոգնա կատարելը, առանց նրա համաձայնության և առանց բժշկական ցուցումների, խախտում է կալանավորվածի անձի անձեռնմխելիության իրավունքը և ոտնձգում է նրա արժանապատվության դեմ:

Ինչպես որոշման մեջ նշում է դատավոր Ահարոն Բարաքը՝ մարդու անձեռնմխելիության իրավունքը, *inter alia*, բխում է նաև Անկախության հռչակագրից, ինչի ուժով Իսրայելի իրավական համակարգում համարվում է «գերակա» իրավունք, հետևաբար՝ վարչական մարմինը, առանց օրենքով ուղղակիորեն նախատեսված լինելու, իրավունք չունի դա խախտել»:²⁴ Նույն մոտեցման կիրառմամբ, ինչպես արդեն նշել ենք, դատական որոշումներով ամրագրվեցին ճանաչում ստացած այլ մարդու հիմնական իրավունքներ:

Այդուհանդերձ՝ պետք է ընդունել, որ իրավունքների նման ճանաչումը սահմանափակ բնույթ ունի: Սահմանադրության և դատական վերահսկողության բացակայության պայմաններում դատարանը չէր կարող անվավեր ճանաչել այդ իրավունքներին ակնհայտորեն հակասող ստատուտները: Այսպես՝ Ռոզոգինկսին ընդդեմ Իսրայելի պետության գործով Իսրայելի գերագույն դատարանը սահմանեց, որ «ստատուտը, որով Իսրայելի պետությունում հրեաների ամուսնության և ամուսնալուծության հարցերը վերապահվում են ռաբբինական դատարանների իրավասությանը, և որը, միաժամանակ, սահմանում է, որ նման ամուսնություններն ու ամուսնալուծությունները պետք է կատարվեն Թորայի իրավունքի համաձայն, գերակայություն ունի խղճի ազատության սկզբունքի նկատմամբ»:²⁵

Այսպիսին էր իրավունքների դատական ամրագրման ընդհանուր բնութագիրն Իսրայելի պետությունում՝ նախքան 1992թ.: Ինչպես հաճախ նշվում է մասնագիտական գրականության մեջ՝ «իրավունքների դատական բիլլ», գոնե մարդու իրավունքների մասով, փոխարինեց պետության սահմանադրությանը: Անվիճելի է, որ մարդու իրավունքների դատական

²⁰ Այդ թվում՝ այնպիսի քաղաքական իրավունքներ, ինչպիսիք են ընտրելու և ընտրվելու իրավունքները, ինչպես նաև տնտեսական և սոցիալական մի շարք իրավունքներ:

²¹ S'tu Basic Law: Human Dignity and Liberty; 1992 http://www.knesset.gov.il/laws/special/eng/basic3_eng.htm:

²² S'tu HCJ 355/79 Katlan v. Prison Services, 34(3) PD 294, 298:

²³ S'tu նույն տեղը:

²⁴ Դատարանի որոշման մեջ, մասնավորապես, ասվում է. «Յուրաքանչյուր մարդ Իսրայելում ունի իր անձի անձեռնմխելիության իրավունք: Դա ամփոփված է սույն դատարանի կողմից ճանաչված «իրավունքների դատական հռչակագրում»: Բանտի պատերը դատապարտյալներին չեն մեկուսացնում իրենց արժանապատվությունից... դատապարտյալը գրկված է ազատությունից, նա չի գրկվի նաև արժանապատվությունից»: S'tu Navot S., նշված աշխատությունը, էջ 200-201:

²⁵ S'tu CA 450/70 Rogozinsky v. State of Israel, 26(1) PD 129:

ամրագրումը գերագույն դատարանի կատարած ամենամեծ ներդրումն էր Իսրայելի ժողովրդավարության զարգացման հարցում²⁶: Սակայն, միևնույն ժամանակ, ակնհայտ էր, որ այս իրավունքները «թույլ» իրավունքներ էին²⁷ այն իմաստով, որ դրանց ուժով գերագույն դատարանն իրավասու չէր անվավեր ճանաչելու մարդու իրավունքներին ակնհայտորեն հակասող ստատուտները:

Հետևաբար՝ Իսրայելի սահմանադրաիրավական համակարգում մարդու իրավունքների հռչակագրի հիմնական դերակատարությունը պետք է լիներ հիմնական իրավունքների կարգավիճակի ուժեղացումը, որը, մի կողմից՝ թույլ կտար սահմանափակել Քնեսեթի՝ մարդու իրավունքները սահմանափակելու օրենսդրական իրավազորությունը և, մյուս կողմից՝ կերաշխավորեր դատական վերահսկողության իրականացումը՝ այդ սահմանափակումների պահպանումն ապահովելու նպատակով: Հատկապես վերջին գործառույթի կյանքի կոչման համար կարևոր էր ոչ այնքան մարդու իրավունքների ոլորտում Հիմնական օրենքների ընդունումը, որքան 1995թ., այսպես կոչված, Միգդալի բանկի գործով Իսրայելի գերագույն դատարանի կողմից դրանց տված մեկնաբանությունը, որին և անդրադառնում ենք ստորև:

Այսպես՝ մարդու իրավունքների կարգավիճակի հետ կապված կարևորագույն փոփոխությունն արձանագրվեց 1992թ.՝ Քնեսեթի կողմից «Մարդու արժանապատվության և ազատության մասին» և «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքների ընդունմամբ²⁸: Այնուհետև մի շարք դատական գործերով՝ «Բանկ հա՛միգրաֆի հա՛մեուխադ» գործից սկսած²⁹, Իսրայելի գերագույն դատարանը սահմանեց, որ այս Հիմնական օրենքները կազմում են Իսրայելի մարդու իրավունքների հռչակագիրը³⁰: Այդ օրենքներով ամրագրվեցին մի շարք իրավունքներ՝ մարդու արժանապատվությունը, ազատությունը, սեփականությունը, մասնավոր կյանքի գաղտնիությունը, զբաղվածության ազատությունը, ինչպես նաև ապօրինի կալանավորումից, ազատազրկումից և արտահանձնումից արգելքի սկզբունքը: Հիմնական օրենքներով սահմանվեց նաև, որ նշված բոլոր մարդու իրավունքները ենթակա են «սահմանափակող դրույթի» գործողությանը³¹, որի համաձայն՝ արգելվում է նշված Հիմնական օրենքներով սահմանված իրավունքի (իրավունքների) որևէ խախտում՝ բացառությամբ, եթե դա նախատեսված է Իսրայելի պետության արժեքներին համապատասխանող՝ արդարացի նպատակի համար ընդունված օրենքով կամ այդ-

²⁶ Ընդունված է համարել, որ Իսրայելի Գերագույն դատարանի դերը, որպես քաղաքականություն մշակողի, բավականին մեծ է (Barak A. The Constitutional Revolution - 12th Anniversary // Law&Business 3, 5 (2004)): Վերջինս իր գործունեությունն իրականացնում է «Դատական իշխանության մասին» Հիմնական օրենքի հիման վրա: Գերագույն դատարանը, ինչպես ընդունված է համարել, երկու հիմնական գործառույթ ունի: Առաջինը, որպես ընդհանուր իրավասության դատարան, նա լսում է իր իրավասությանը վերապահված բոլոր գործերը: Երկրորդ, որպես առաջին ատյան, *inter alia*, լսում է օրենքին հանրային իշխանության մարմինների գործունեության համապատասխանության հարցերով գործերը: Երկրորդ խումբ գործերը քննելիս Գերագույն դատարանը հանդես է գալիս որպես Արդարադատության բարձր դատարան (Եբրայերեն հապավումը՝ ԲԱԳԱՅ): «Դատական իշխանության մասին» Հիմնական օրենքի ամբողջական տեքստի համար տես https://www.knesset.gov.il/laws/special/eng/basic8_eng.htm:

²⁷ Այս իրավունքներն ունեին «փափուկ» սահմանադրական սկզբունքների կարգավիճակ: Դրանք այնպիսի սկզբունքներ են, որոնք կարող են սահմանափակվել օրենսդիր մարմնի կողմից՝ օրենքների հիման վրա, միաժամանակ, սակայն, օրենքները մեկնաբանելիս պետք էր ղեկավարվել դրանց պահանջներով, իսկ գործադիր իշխանության մարմիններն իրենց վարչական հայեցողությունն իրականացնելիս պետք է հաշվի առնեին դրանց պահանջները: Միևնույն ժամանակ՝ դրանք համարվում են «փափուկ» իրավունքներ, քանի որ չէին սահմանափակում Քնեսեթի օրենսդրական իշխանությունը:

²⁸ Նշված Հիմնական օրենքներով ամրագրված մարդու հիմնական իրավունքների մանրամասն վերլուծության, ինչպես նաև մարդու իրավունքների միջազգային իրավունքի և, մասնավորապես՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագրի համատեքստում դրանց համապատասխանության մասին, տես, օրինակ՝ Kretzmer D. Constitutional Law: Introduction to the law of Israel // Introduction to the Law of Israel / edited by Shapira A., DeWitt-Arar K. C. The Hague, London, Boston. Kluwer Law International, 1995, 39-58 էջ: Հիմնական օրենքների ամբողջական տեքստի համար տես http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Basic_Law_Human_Dignity_and_Liberty.html, http://www.jewishvirtuallibrary.org/jsource/Politics/Basic_Law_Freedom_of_Occupation.html:

²⁹ Տես United Mizrahi Bank v. Migdal Agricultural Cooperative, supra note 6.

³⁰ Տես, օրինակ՝ HCJ 5578/02 Manor v. The Minister of Finance [2004] IsrSC 59 (1) 729:

³¹ Տես «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենք, Մաս 8-րդ, ինչպես նաև «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքի Մաս 4-րդ, նշված տեղերում:

պիսի օրենքով ուղղակիորեն նախատեսված որոշմամբ և իրականացվում է պահանջվածից ոչ ավելի չափով (համաչափորեն՝ Վ.Կ.):»³²: Հիմնական օրենքներերով սահմանված մեկ այլ դրույթի համաձայն՝ պետական կառավարման բոլոր մարմինները պարտավոր են հարգել նշված մարդու իրավունքները³³:

Անդրադառնալով Իսրայելի գերագույն դատարանի՝ նախկինում արտահայտած դիրքորոշմանն առ այն, որ պետական իշխանության մարմիններին վերաբերող Հիմնական օրենքները թեև կազմում են երկրի Սահմանադրությունը, այդուհանդերձ՝ դրանք սովորական ստատուտի կարգավիճակ ունեն, պրոֆ. Ահարոն Բարաքը հիմնական օրենքների կարգավիճակի վերաբերյալ հարցադրում է անում, թե՛ արդյո՞ք նման դիրքորոշումը կիրառելի է նաև մարդու իրավունքներին վերաբերող Հիմնական օրենքների նկատմամբ³⁴:

Այս հարցադրումների պատասխանը, ինչպես արդեն նշել ենք, տրվեց 1995թ.: Այսպես՝ «Բանկ հա՛միզրախի հա՛մեուխադ» գործով³⁵ կայացված համապարփակ դատական որոշմամբ սահմանվեց, որ մարդու իրավունքներին վերաբերող Հիմնական օրենքներն ունեն սահմանադրական, վերօրենսդրական կարգավիճակ: Դատարանի որոշմամբ սահմանվեց նաև, որ Հիմնական օրենքներում թվարկված մարդու իրավունքները խախտող և «սահմանափակող դրույթի»³⁶ պահանջներին չհամապատասխանող սովորական ստատուտը հակասահմանադրական է, և ցանկացած դատարան կարող է դա անվավեր ճանաչել:

Այսպես՝ ինչպես մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել՝ 1995թ. Իսրայելում տեղի ունեցավ սահմանադրական հեղափոխություն³⁷: Հիմնական օրենքներով ամրագրված մարդու իրավունքներին տրվեց սահ-

³² Այսինքն՝ եթե նախկինում Հիմնական օրենքները միայն «ըստ ձևի» էին պաշտպանված՝ փոփոխության համար հատուկ մեծամասնության վերաբերյալ պահանջով, հետայսու դրանք պետք է պաշտպանվեին նաև ըստ բովանդակության՝ նշված «սահմանափակող դրույթի» ուժով: Այդուհանդերձ՝ մարդու իրավունքների ոլորտում ընդունված Հիմնական օրենքներից «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքում ևս ըստ ձևի պաշտպանություն էր նախատեսված: Այսպես՝ «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենքի Մաս 7-րդի համաձայն՝ «Հիմնական օրենքը չի կարող փոփոխվել այլ կերպ, քան Քնեսեթի անդամների ձայների մեծամասնությամբ ընդունված Հիմնական օրենքով»: Այսինքն՝ տվյալ դեպքում պաշտպանված էր Հիմնական օրենքն ամբողջությամբ, ավելին՝ Հիմնական օրենքը կարող էր փոփոխվել միայն մեկ այլ Հիմնական օրենքով, ինչը նորամուծություն էր նախկինում ընդունված Հիմնական օրենքների համեմատությամբ: «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենքը, որի Մաս 1-ի համաձայն՝ դրա նպատակը մարդու արժանապատվության և ազատության պաշտպանությունն է, թեև ըստ ձևի պաշտպանված չէր, այսինքն՝ փոփոխության համար հատուկ մեծամասնություն չէր պահանջվում, բայց, ինչպես նշվել է, պարունակում էր «սահմանափակող դրույթ», այսինքն՝ պաշտպանված էր ըստ բովանդակության:

³³ Տե՛ս «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենք, Մաս 11-րդ, ինչպես նաև «Զբաղվածության ազատության մասին» Հիմնական օրենք, Մաս 5-րդ՝ նշված տեղերում:

³⁴ Անդրադառնալով մարդու իրավունքների ոլորտում ընդունված Հիմնական օրենքների կարգավիճակին՝ պրոֆ. Ա.Բարաքը հարցադրումներ է անում, թե. «Արդյո՞ք դրանք ունեն սովորական ստատուտի կարգավիճակ, ինչպես Նոր Զելանդիայում: Արդյո՞ք դրանց կարգավիճակը նույնն է, ինչ Անգլիայում 1998թ. Մարդու իրավունքների վերաբերյալ օրենքով սահմանված մարդու իրավունքների կարգավիճակը: Կամ էլ, գուցե, դրանք ունեն այն նույն կարգավիճակը, ինչ Մարդու իրավունքների և ազատությունների կանադական խարտիայով կամ էլ ամերիկյան Իրավունքների բիլով սահմանված մարդու իրավունքների կարգավիճակը»: Ապա շարունակում է. «Հիմնական օրենքներում դրանց իրավական կարգավիճակին վերաբերող որևէ դրույթ չկա: Ոչ էլ նշում կա այդ Հիմնական օրենքների՝ Սահմանադրության մաս կազմելու վերաբերյալ: Ավելին՝ Հիմնական օրենքների և սովորական օրենքների միջև հնարավոր հակասության դեպքում Հիմնական օրենքների գերակայությունը սահմանող որևէ դրույթ նույնպես նախատեսված չէ: Եվ, վերջապես՝ դրանց գերակայությունը սահմանող որևէ նորմ ևս առկա չէ»: Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Barak A., նշված աշխատությունը, էջ 17-18):

³⁵ Տե՛ս United Mizrahi Bank v. Migdal Agricultural Cooperative, նույն տեղը:

³⁶ Ինչպես հիշում ենք՝ ըստ սահմանափակող դրույթի՝ Հիմնական օրենքներով ամրագրված մարդու իրավունքների խախտումը թույլատրվում էր, եթե նման հնարավորությունը՝ ա) նախատեսված է Իսրայելի պետության արժեքներին համապատասխանող օրենքով, բ) օրենքն ինքնին պետք է ընդունված լիներ արդարացի նպատակի համար, և գ) նման խախտումը չպետք է գերազանցեր անհրաժեշտ չափը կամ էլ, եթե նշված պահանջներին համապատասխան ընդունված օրենքն ուղղակիորեն նախատեսեսուն է դրա հիման վրա ընդունված որոշմամբ նման խախտում իրականացնելու հնարավորությունը:

³⁷ Տե՛ս Barak A. The Constitutional Revolution-12th Anniversary, Law&Business 3, 5 (2004): Այս կապակցությամբ առավել հետաքրքրական է սահմանադրագետ պրոֆ. Սյուզի Նավոտի տեսակետը, ըստ որի. «Սահմանադրական հեղափո-

մանադրական, վերօրենսդրական կարգավիճակ: Պաշխատանքային իշխանությունը սահմանափակվեց: Հեղափոխությունն ունեցավ նաև հեռահար ազդեցություն. իսրայելյան իրավունքը սահմանադրականացվեց³⁸: Ինչպես նշվում է հիշատակված որոշման մեջ. «Իրավունքի յուրաքանչյուր ճյուղ, յուրաքանչյուր իրավական նորմ այլևս պետք է համապատասխանի այս նոր իրավակարգին: Իրավունքի յուրաքանչյուր ոլորտ պետք է փոխի իր հիմնարար հայեցակարգերը և հիմնական գաղափարներն այս նոր սահմանադրական իրավակարգին համապատասխանելու համար: Իրականում՝ սահմանադրական հեղափոխությունը հաստատեց նոր հաշվեկշիռ՝ անձնական ազատության և պետական իշխանության միջև, ինչպես նաև մարդկանց՝ մեկը մյուսի հանդեպ ազատության առնչությամբ: Ներքին կապ ստեղծվեց մարդու իրավունքների և դրանց սահմանափակումը հիմնավորող հանրային շահի միջև: Իրավունքը և այդ իրավունքի սահմանափակումը հետայսու բխում են նույն հիմքից»³⁹: Ինչպես նշում է պրոֆ. Բարաքը՝ եթե նախկինում իրավական հռետորաբանությունը հիմնված էր իշխանության, ուժի և իշխանական հայեցողության վրա, ապա ներկայումս դրա կենտրոնում նաև մարդու իրավունքներն են: Նախկինում՝ իշխանական ուժերի հաշվեկշիռն էր սահմանում մարդու իրավունքները, այժմ «արդարացիորեն»

հաշվեկշռված մարդու իրավունքներն են որոշում պետական իշխանությունը⁴⁰:

Իսրայելյան սահմանադրական հեղափոխությանը հաջորդած ավելի քան քսան տարիների ընթացքում որևէ Հիմնական օրենք, այդ թվում՝ մարդու իրավունքների ոլորտում, այլևս չընդունվեց: Ինչպես և ժամանակին կարծիք էր հայտնվում մասնագիտական գրականության մեջ՝ եթե Քնեսետը չհաջողի Սահմանադրությունն ավարտին հասցնելու իր գործը, գերագույն դատարանն «իշխանությունը կվերցնի իր ձեռքը»՝ ավարտին հասցնելով՝ Հիմնական օրենքները մեկնաբանելով այնպես, որ դրանց մեջ ներառվեն նաև այն իրավունքները, որոնք ուղղակիորեն ամրագրված չեն այդ Հիմնական օրենքներում: Մասնավորապես՝ պրոֆ. Ա. Բարաքի կողմից որդեգրված այս մոտեցման շնորհիվ՝ մի շարք մարդու իրավունքներ և հիմնարար ազատություններ մեկնաբանվեցին՝ որպես Հիմնական օրենքով երաշխավորված արժանապատվության իրավունքի մաս կազմող⁴¹: Այդուհանդերձ՝ այնպիսի կարևոր իրավունքներ, ինչպիսիք են կրոնի և խղճի ազատությունը, իրավահավասարությունը և այլն, այդպես էլ օրենսդրական ամրագրում չունեն մինչ օրս, ինչը, թերևս, պետք է ընկալել Իսրայելի երկակի՝ հրեական և ժողովրդավարական բնույթի համատեքստում, որը, սակայն, դուրս է սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակներից:

խությունն ակնհայտորեն տեղի չի ունեցել մարդու իրավունքների ոլորտում, այլ, առավելապես՝ ինստիտուցիոնալ-սահմանադրական ոլորտում: Սահմանադրական հեղափոխությունը կարևոր է հատկապես Հիմնական օրենքների կարգավիճակում տեղի ունեցած փոփոխության առումով, մինչդեռ իրավունքների կարգավիճակն ինքնին էապես չի փոխվել Հիմնական օրենքների հետևանքով: Այդ իրավունքներն արդեն իսկ գոյություն ունեին գերագույն դատարանի որոշումներում, պարզապես դրանցից որոշները ներկայումս պաշտպանված են Հիմնական օրենքներում: Էական փոփոխությունը ոչ թե իրավունքների առկայության կամ բացակայության հարցում է, այլ՝ պաշտպանված իրավունքներին հակասող օրենքներն անվավեր ճանաչելու՝ գերագույն դատարանի իրավասության մեջ, ինչը նախկինում իրագործելի չէր (այս մասին տես Navot S., նույն տեղ, էջ 203):

³⁸ Տես Barak A. The Constitutionalization of the Israeli legal system as Result of the Basic Laws and its Effect on Procedural and Substantive Criminal Law // 31 Israel Law Review 3, 1997:

³⁹ Տես United Mizrahi Bank v. Migdal Agricultural Cooperative, նույն տեղը:

⁴⁰ Տես Barak A., նշված աշխատությունն, էջ 19:

⁴¹ Այսպես՝ Ահարոն Բարաքը փորձում է որոշ իրավունքներ «բխցնել»՝ «Մարդու արժանապատվության և ազատության մասին» Հիմնական օրենքով երաշխավորված մարդկային արժանապատվության գուտ էությունից: Փորձելով ցույց տալ արժանապատվության կարևորությունը՝ պրոֆ. Բարաքը նշում է. «Կացարանից զրկված մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է, քաղցած մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է, առանց առաջին բժշկական օգնության թողնված մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է, անմարդկային պայմաններում ապրող մարդը մարդ է, ում արժանապատվությունը ոտնահարված է»: Ըստ այդմ՝ ըստ Բարաքի՝ մարդու արժանապատվությունը հարգելու հարցում պետությունն ունի թե՛ դրական և թե՛ բացասական պարտականություններ: Նման մոտեցման պայմաններում, ըստ Բարաքի՝ առաջին պլան է մղվում սահմանափակող դրույթը: Սահմանափակող դրույթի՝ պրոֆ. Բարաքի մեկնաբանության և առնչակից այլ հարցերի հետ կապված ավելի մանրամասն տես Barak A., նշված աշխատությունը, էջ 21-23:

ՍԱՄՎԵԼ ՅՈՒՉԲԱՇՅԱՆ

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի
իրավունքի ամբիոնի դասախոս,
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱԼԿԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

**ԴԱՏԱԽԱՉԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ
ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱԿՆԵՐՈՒՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ
ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ՈՒ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Դատախազի և քննիչի դատավարական փոխհարաբերությունները մշտապես գտնվում են տեսաբանների և պրակտիկ աշխատողների ուշադրության կենտրոնում: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ քրեական հետապնդման իրականացման հարցում, որի ընթացքում էականորեն շոշափվում են քաղաքացիների իրավունքներն ու օրինական շահերը, դատախազն ու քննիչն ունեն որոշիչ դեր: Սակայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի որոշ դրույթներ, որոնք, ըստ հեղինակների, բավականաչափ չեն կարգավորում կոնկրետ իրավահարաբերություններ, հող են ստեղծում վերոնշյալ փոխհարաբերությունների ընթացքում խնդիրների առաջացման համար: Ուստի արդիական է նշված փոխհարաբերությունների շրջանակում առաջացող որոշ հիմնախնդիրների վերլուծությունը:

Քրեական գործով վարույթը քրեական դատավարության ընթացակարգ է, որն սկսվում է քրեական գործի հարուցման հարցը լուծելիս և ներառում է գործով իրականացվող և ընդունվող դատավարական որոշումներն ու գործողությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածն իմպերատիվ կերպով ամրագրում է այն հիմքերը, որոնց առկայության դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել, և քրեական հետապնդում չի կարող իրակա-

նացվել, իսկ հարուցված քրեական գործով վարույթը ենթակա է կարճման: Չնայած դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը նախատեսում է դատարանի, դատախազի և քննիչի համար հայեցողական լիազորություն քրեական գործով վարույթը կարճել՝ ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան հիմքերի առկայության դեպքում:

Ըստ Ֆատկուլինի և Տարասով-Ռոզնինի՝ քրեական գործով վարույթի կարճումը դատավարական ակտ է՝ համապատասխան պաշտոնատար անձանց կողմից կայացված որոշում՝ քրեադատավարության պայմանների բացակայության և դրա հետագա իրականացման բացառման վերաբերյալ¹:

Ըստ Ա. Ղամբարյանի. «Քրեական գործի վարույթը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը քրեական գործով վարույթն ավարտելու ձևերից է, որի դեպքում իրավասու նախաքննության մարմինն ամփոփում և վերլուծում է կատարված աշխատանքը, գնահատում ձեռք բերված ապացույցները և օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում որոշում կայացնում՝ քրեական վարույթը շարունակելու_անհնարինության կամ անպատասխանարության մասին»:²

Վոլոդինայի կարծիքով՝ քրեական գործով վարույթի կարճումն իրավական ակտ է՝ պե-

¹ Дорноступ И.П. Нереабилитирующие основания прекращения уголовного преследования в деятельности органов предварительного расследования системы МВД России: Дис. ... канд. юрид. наук (12.00.09). СПб., 2002; Опарин Н.Б. Прекращение уголовного дела следователем по реабилитирующим основаниям: Автореф. дис. ... канд. юрид. наук. М., 1984. - С. 10-11.

² Ա. Ղամբարյան «Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում», 2016, էջ 76:

տական իրավասու մարմնի կամարտահայտություն, որը հանգեցնում է պաշտոնատար անձանց կողմից վարույթը հետագայում շարունակելու բացառմանը, ինչպես նաև քրեական հետապնդման ենթարկված անձի վարույթի շրջանակներում իրավունքների և պարտականությունների ամբողջության դադարեցում:³

Այսինքն՝ տեսության մեջ քրեական գործով վարույթի կարճումը համարվում է իրավաբանական կամ դատավարական ակտ⁴: Այնուամենայնիվ, դա չպետք է դիտարկել միայն տեխնիկական տեսանկյունից, քանզի այդ ակտը ներառում է նախաքննության համակարգային փուլ:

1. Քրեական գործով ձեռք բերված ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ստուգում, որի հիման վրա եզրահանգում է կատարվում արարքում հանցակազմի առկայության, դրա որակման, քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու հիմքերի վերաբերյալ, ինչպես նաև կասկածյալի կամ մեղադրյալի անձի վերաբերյալ:
2. Քրեական գործով ձեռք բերված ապացույցների վերլուծություն և գնահատում՝ քրեական գործով վարույթը կարճելու մասին հիմնավոր եզրահանգում կատարելու և համապատասխան հիմք մատնանշելու տեսանկյունից:
3. Նախաքննության իրականացման ընթացքում թույլ տրված բացերի լրացում:
4. Քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման նախագծի կազմում:
5. Անձին, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, իր կատարած քրեական օրենքով չթույլատրված արարքի, քրեական գործով վարույթը կարճելու հիմքի վերաբերյալ պարզաբանում և նրա կողմից համաձայնության ստացում:
6. Դատախազի կողմից քրեական գործով վարույթը կարճելու մասին համաձայնության ստացում:

7. Քրեական գործով վարույթը կարճելու մասին հիմնավոր որոշման կայացում:
8. Որոշման արդյունքով ծագած դատավարական գործողությունների իրականացում (խափանման միջոցի վերացում և այլն):
9. Կասկածյալին, մեղադրյալին քրեական գործով վարույթը կարճելու մասին իրազեկում, նրան իր իրավունքների մասին պարզաբանում, միջնորդությունների քննարկում:

Այնուամենայնիվ, սույն հոդվածի շրջանակներում հեղինակների կողմից քննարկման առարկա է դարձել հիմնախնդիր, որը վերաբերում է քննիչի կողմից քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման կայացմանը, երբ անհրաժեշտ է լինում դատախազի համաձայնությունը:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը, դատախազը, ինչպես նաև, դատախազի համաձայնությամբ՝ քննիչը կարող են քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 72-րդ, 73-րդ և 74-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում: Ընդ որում՝ որպես հավելյալ պայման օրենսդիրը ամրագրել է ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ և 74-րդ հոդվածների հիմքով քրեական գործով վարույթը կարճելու դեպքում անձի կողմից, ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում, նշված հիմքերի դեմ չառարկելը:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի վերլուծությունից ակնհայտ է դառնում, որ քննիչի կողմից նշված հայեցողական լիազորությունից օգտվելը կապված է ևս մեկ՝ լրացուցիչ պայմանի առկայությամբ, այն է՝ դատախազի համաձայնությունը:

Նշված պայմանի բավարարման գործընթացը պրակտիկայում որոշակի խնդիրներ է առաջացնում, ուստի թե՛ տեսական և թե՛ գործնական առումով անհրաժեշտություն է առաջացել մեկնաբանել իրավադրույթը և հիմնախնդիր

³ Володина Л.М. Задачи уголовного судопроизводства и прекращение уголовных дел по нереабилитирующим основаниям // Вестник ЛГУ. 1975. №27. Вып.3.– С. 127-130.

⁴ Дубинский А.Я. Прекращение уголовного дела.– С. 25.

լուծման առումով օպտիմալ լուծում առաջարկել:

Այսպես՝ իրավակիրառ պրակտիկայում քրեական գործի նախաքննության ընթացքում քննիչը՝ հաստատված համարելով ՀՀ քրեական օրենսգրքի 72-րդ (քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զոջալու դեպքում), 73-րդ (քրեական պատասխանատվությունից ազատելը տուժողի հետ հաշտվելու դեպքում) կամ 74-րդ (քրեական պատասխանատվությունից ազատելն իրադրության փոփոխման դեպքում) հոդվածներով քրեական գործով վարույթը կարճելու հիմքերի առկայությունը, կարող է որոշում կայացնել քրեական գործով վարույթը կարճելու և քրեական հետապնդումը դադարեցնելու մասին՝ դատախազի համաձայնությամբ: Ակնհայտ է, որ դատախազը, իրականացնելով դատավարական ղեկավարում և դատախազական հսկողություն քրեական գործի նախաքննության օրինականության նկատմամբ, ստուգելով քրեական գործի հանգամանքների հետազոտման բազմակողմանիությունը, լրիվությունը և օբյեկտիվությունը, պետք է նույնպես եզրահանգի, որ առկա են ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմամբ մատնանշված վերոշարադրյալ հիմքերը:

Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի տրամաբանությունից պարզ է դառնում, որ քննիչի կողմից կայացված որոշումը իրավական ուժ կարող է ստանալ միայն դատախազի կողմից համաձայնության առկայության դեպքում:

Պրակտիկայում՝ նշված որոշումները, քննիչի կողմից կայացվելուց հետո, քրեական գործի հետ միաժամանակ ուղարկվում են դատախազին՝ որոշման վրա համաձայնության նշումը կատարելու նպատակով: Սակայն լինում են դեպքեր, երբ դատախազը, ստուգելով բոլոր հանգամանքները, հանգում է այն եզրակացությանը, որ քրեական գործի նախաքննության ընթացքում չեն կատարվել անհրաժեշտ հնարավոր բոլոր դատավարական գործողությունները, ինչի պատճառով կայացված որոշումը վաղաժամ է, կամ առկա չեն քրեական գործով վարույթը կարճելու ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված համապատասխան հիմքերը:

Այդ դեպքում հարց է առաջանում, թե արդյո՞ք դատախազը կարող է չհամաձայնվել որոշման հետ, ինչ եղանակով, և ինչ գործողություններ պետք է հաջորդեն դրան:

Սահմանադրությամբ ամրագրված է, որ. «Դատախազությունը հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ»: 2015թ. դեկտեմբերի 6-ի սահմանադրական բարեփոխումների արդյունքով՝ նշված նորմը ենթարկվել է փոփոխության, սակայն բովանդակային առումով նույնական է. «Դատախազությունը հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ»: Սահմանադրաիրավական այս նորմն իր ամրագրումն է ստացել նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում, մասնավորապես՝ քրեական դատավարության օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «...դատախազը ... հսկողություն է իրականացնում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ...»: Օրինականությունը քրեական դատավարության հիմնարար սկզբունքներից մեկն է, որն իր ամրագրումն է ստացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որի համաձայն՝ վարույթն իրականացնող, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել ՀՀ սահմանադրությունը և օրենքները: Օրինականությունը ենթադրում է նաև, որ պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: Իսկ դատախազի՝ մինչդատական վարույթի նկատմամբ հսկողական գործառնության բուն էությունն այն է, որ վարույթն իրականացնող մարմնի կողմից չկատարվեն այնպիսի գործողություններ, կամ ընդունվեն այնպիսի որոշումներ, որոնք կհակասեն օրինականության սկզբունքին:

Այն հարցին, թե ինչ եղանակով կարող է դատախազը չհամաձայնվել քննիչի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշմանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը, մասնավորապես՝ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետը, նա-

խատեսում է դատախազի լիազորությունը՝ վերացնելու քննիչի որոշումը քրեական գործով վարույթը կարճելու մասին: Սակայն, ինչպես արդեն նշվել է՝ քննիչի կողմից կայացված որոշումը իրավական ուժ կարող է ստանալ միայն դատախազի կողմից համաձայնության առկայության դեպքում: Ուստի, ձևական առումով, կայացված որոշումը դեռևս չունի իրավական ուժ, այլ, փաստացի, քննիչի կողմից կայացված որոշման նախագիծ է, որին իրավական ուժ է տալիս հսկող դատախազը՝ դրա հետ համաձայնվելու վերաբերյալ նշում կատարելով:

Այսպիսով՝ դատախազի կողմից ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով քննիչի կողմից կայացված «որոշումը» չի կարող դատախազի կողմից վերացման առարկա հանդիսանալ:

Մյուս տարբերակը քննիչի որոշման հետ չհամաձայնելն է: Նման դեպքում արդյո՞ք բավարար է դատախազի կողմից չհամաձայնելու մասին որոշման վրա պարզ շարադրանքը, թե՞ վերջինս պետք է այդ մասին որոշում կայացնի:

Պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքը չի նախատեսում դատախազի համար քրեական գործով վարույթը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով կարճելու դեպքում անհամաձայնության վերաբերյալ որոշում կայացնել: Հետևաբար՝ դատախազը չի կարող կայացնել նման որոշում:

Բացի այդ՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված «դատախազի համաձայնությամբ՝ քննիչը» եզրույթից ակնհայտ է դառնում, որ դատախազի համաձայնությունը պետք է նախորդի քննիչի կողմից կայացված որոշմանը: Ուստի քննիչի կողմից կայացված որոշման վրա անհամաձայնության վերաբերյալ

նշում կատարելն էլ, a priori, չի կարող ընկալվել որպես պայմանի բավարարում:

Հետևաբար՝ տվյալ դեպքում պետք է քննարկել ոչ թե քննիչի կողմից արդեն իսկ կայացված որոշման դեպքում դատախազի լիազորությունների իրականացման շրջանակը, այլ անհրաժեշտ է նախատեսել այնպիսի իրական՝ քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված մեխանիզմ, որը և հնարավորություն կտա դատախազի դիրքորոշումը ստանալու և թույլ կտա վերջինիս օգտվելու ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված այլ իրավասություններից:

Մեր կարծիքով՝ այս խնդրի լուծման միակ հնարավոր տարբերակը մինչև քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը քննիչի կողմից դատախազին ներկայացվող փաստաթուղթն է, որով վերջինս ներկայացնում է այն հիմքերը, որոնք կարող են թույլ տալ կիրառել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածը: Նույնական մեխանիզմ կիրառվում է նաև որպես խափանման միջոց կիրառված կալանավորումը վերացնելու հարցը քննարկելու դեպքում: Այսպես՝ եթե վերացել է դրա անհրաժեշտությունը, քննիչը գրությամբ ներկայացնում է խափանման միջոցը փոփոխելու կամ առհասարակ վերացնելու հարցը քննարկելու վերաբերյալ «միջնորդություն»: Որպես արդյունք՝ կայացվում է համապատասխան որոշում, կամ գրությամբ տեղեկացվում է, որ, օրինակ՝ վաղաժամ է նման հարցի քննարկումը:

Անդրադառնալով քննարկվող խնդրին՝ հարկ է ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի կիրառման «միջնորդություն» ներկայացնելու դեպքում քրեական գործը դատախազին ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է՝ հաշվի առնելով, որ վարույթը կարճելուց հետո դատախազը, այնուամենայնիվ, ստուգելու է որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը, ուստի պետք չէ դատավարական այս ընթացակարգը տեղափոխել ավելի վաղ փուլ:

Այս փուլում դատախազը ստուգում է քննիչի կողմից ներկայացված հիմքերի բավարարությունը և խնդրո առարկա քրեադատավարական նորմը կիրառելու հնարավորության

հարցը, որի արդյունքով վարչական ակտով՝ գրությամբ, քննիչին տեղեկացնում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի հիմքով քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում կայացնելու՝ իր համաձայնության կամ անհամաձայնության մասին:

Համաձայնությունն ստանալուց հետո քննիչը կայացնում է քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշում և քրեական գործի հետ ուղարկում դատախազին՝ օրինականությունն ստուգելու համար: Ընդ որում՝ այլևս անհրաժեշտ չէ նշված որոշման վրա դատախազի կողմից համաձայնության վերաբերյալ նշում կատարել:

Օրինականության ստուգման ընթացքում, եթե դատախազը պարզում է, որ քննիչի կողմից «միջնորդության» տեսքով ներկայացված հիմքերը չեն համապատասխանում քրեական գործում առկա տվյալներին կամ ընդհանրապես առկա չեն, ապա նա կարող է օգտվել իր դատավարական իրավունքից և վերացնել որոշումը՝ չնայած դրա վերաբերյալ իր համաձայնության առկայությունը: Այս պարագայում դատախազը պետք է շարադրի քննիչի ներկայացրած հիմքերի առկայությամբ իր համաձայնության վերաբերյալ և կայացնի քրեական գործում դրանց բացակայությամբ պայմանավորված հիմնավորված որոշում:

Պետք է նշել, որ, բացի քրեական գործով վարույթը կարճելու հայեցողական լիազորությունից՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է նաև մինչև հարուցումը՝ նյութերի նախապատրաստման արդյունքով քրեական գործ հարուցելը մերժելու մասին նմանատիպ հայեցողական լիազորություն. «Սույն հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում դատախազը, ինչպես նաև դատախազի համաձայնությամբ՝ քննիչը, կարող են քրեական գործ չհարուցել և քրեական հետապնդում չիրականացնել»:

Ըստ Ա. Ղամբարյանի. «Քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը քրեական գործ հարուցելու փուլը եզրափակող և դատավարության հետագա ընթացքը բացառող

որոշում է...», ընդ որում՝ դրա կայացման համար իրավական նշանակություն չունի ենթադրաբար հանցանք կատարած անձի փաստացի առկայությունը: Մինչդեռ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշումը կայացվում է կոնկրետ անձի նկատմամբ՝ բացառելով տվյալ անձի նկատմամբ կոնկրետ դեպքի առթիվ քրեական հետապնդում իրականացնելը»:⁵

Ըստ էության՝ նկարագրված խնդրի լուծումը վերագրելի է նաև վերոնշյալ դրույթին, սակայն, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի համաձայն՝ այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ստուգել գործ հարուցելու առիթի օրինականությունը և հիմքերի բավարարությունը, գործ հարուցող մարմինը պարտավոր է իրականացնել այդ դատավարական գործողությունները հանցագործության մասին հաղորդումը ստանալու պահից տասն օրվա ընթացքում:

Քրեական գործի հարուցման փուլի վերաբերյալ իրավական դիրքորոշում է արտահայտել նաև ՀՀ Վճռաբեկ դատարանը Գ. Ղևոնդյանի գործով, որի համաձայն. «Քրեական գործի հարուցման փուլը քրեադատավարական ընթացակարգի ինքնուրույն փուլ է, որն ունի իր սկիզբն ու ավարտը, խնդիրները, սուբյեկտները և այլն: Քրեական գործի հարուցման փուլում վարույթն իրականացնող մարմինը պարզում է քրեական գործ հարուցելու առիթների և հիմքերի առկայության կամ բացակայության փաստը: Այս փուլում հանցագործության փաստի հաստատման և անձի մեղքի հարց չի քննարկվում:

Քրեական գործ հարուցելու մասին օրինական, հիմնավորված և ժամանակին (ընդգծումը՝ հեղինակի) կայացված որոշումն անհրաժեշտ նախապայման է հանցագործությունների արագ և ամբողջական բացահայտման, ինչպես նաև կանխարգելման համար: Միևնույն ժամանակ՝ քրեական գործի չհիմնավորված հարուցմամբ սահմանափակվում են անձանց իրավունքներն ու ազատությունները, նրանց վնաս է պատճառվում: Այլ կերպ ասած՝ ինչպես քրեական գործի անհիմն հարուցումը, այնպես էլ հարուցման անհիմն մերժումն օրինականու-

⁵ Ա. Ղամբարյան «Քրեական հետապնդումը (մեղադրանքը) մինչդատական վարույթում», 2016, էջ 89:

թյան կոպիտ խախտումներ են և զգալի վնաս են պատճառում անձին, հասարակությանն ու պետությանը»⁶:

Այնուամենայնիվ, առաջարկվող լուծումների համատեքստում իրավակիրառ պրակտիկայում անխուսափելի են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների ժամանակին կայացման խնդիրները՝ հաշվի առնելով, որ քննիչն ունի ընդամենը 10 օր, ինչը բավական ժամանակ չէ համապատասխան գրագրությունների եղանակով քննիչ-դատախազ-քննիչ կապն ապահովելու համար: Ուստի նման դեպքերում, կարծում ենք, քննիչն անձամբ պետք է

«միջնորդության» տեսքով դատախազին ներկայացնի առկա հիմքերը, ով, իր հերթին, անմիջապես ձեռնամուխ կլինի դրանց ստուգմանը: Դատախազի համաձայնության դեպքում քննիչը կարող է կայացնել քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշում, իսկ հակառակ պարագայում հարուցի քրեական գործ:

Ամփոփելով վերոգրյալը՝ անհրաժեշտ է փաստել, որ առաջարկվող լուծումները պրակտիկայում կիրառելու միջոցով հնարավոր կլինի ապահովել օրենքի տառից բխող և օրենսդրությամբ ամրագրված լիազորությունների իրականացում:



⁶ Վճռաբեկ դատարանի թիվ ԵԿԴ/0044/11/13 որոշում:

ԱՐՈՒՍՅԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ՔԿ Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ,
Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
«Քրեական իրավունքի և քրեական դատավարության»
ամբիոնի հայցորդ

ՀԱՅԵՆՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԿՐԱ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՎԿՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ

ՀՀ Նախագահի 2010թ. ապրիլի 26-ի թիվ ՆԿ-58-Ա կարգադրությամբ ստեղծվել է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը՝ նախապատրաստող աշխատանքային խումբ, որի հիմնական խնդիրներից է ՀՀ Նախագահին ներկայացնել ՀՀ քրեական դատավարության օրենսդրության բարեփոխման հայեցակարգ: Ինչպես հայտնի է՝ այժմ պատրաստ է նաև ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը: Այս նախագծով նախատեսված նոր ինստիտուտներից է հայեցողական քրեական հետապնդումը, որի հիմքում ընկած է հայեցողությունը: Հայեցողական ընթացակարգերի օրենսդրական ամրագրումը, ինչպես նաև հնարավոր չարաշահումներից զերծ մնալու նպատակով կառուցակարգերի սահմանումը և ճիշտ կիրառումը, կապահովեն արդար հավասարակշռություն և տուժողի, և մեղադրյալի, և հասարակության, և պետության օրինական շահերի միջև:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայեցողությունն ինքնին կամայականության մեծ ռիսկ է պարունակում, իրավակիրառողի կողմից հայեցողական լիազորությունների չարաշահման կանխարգելման նպատակով օրենսդրության մեջ պետք է հստակ սահմանվեն իրավակիրառողի հայեցողությունը սահմանափակող իրավական գործիքներ: Օրինակ՝ դատախազի կողմից հայեցողական լիազորությունների կիրառումը պետք է լինի պատճառաբանված, բացի այդ՝ ՀՀ Դատախազության կողմից որդեգրած ընդհանուր քրեական քաղաքականության սկզբունքերին համապատասխանության տեսանկյունից գտնվի դատախազական գերատեսչական վերահսկողության, ինչպես նաև կայացված որոշումների կամ գործողությունների՝ դատավարական ձևին համապա-

տասխանության տեսանկյունից՝ դատական վերահսկողության ներքո:

Քրեական դատավարությունում հայեցողությունն իրավակիրառ գործունեության ընթացքում և դատավարական ձևի շրջանակներում ընձեռված ընտրության հնարավորությունն է, որը պետք է լինի պատճառաբանված և հիմնավորված: Այդ ընտրության վրա ազդեցություն ունեն իրավակիրառողի մասնագիտական աշխարհայացքը, գործի հանգամանքների վերաբերյալ ներքին համոզմունքը: Հայեցողության ընթանրացված իմաստը հանգում է հետևյալին, իրավակիրառ մարմինն իրավունք ունի կատարելու օրենքով նախատեսված վարքագծի մի քանի տարբերակի միջև ողջամիտ, հիմնավորված և արդարացի ընտրություն:

Շուկայական հարաբերությունների զարգացման, համաշխարհային հանրության ինտեգրման, համամարդկային արժեքների ճանաչման հետևանքով՝ զգալիորեն փոփոխվել են օրենսդրական կարգավորումները, բարդացել է նաև իրավակիրառումը, որը պահանջում է իրավակիրառ մարմիններից մասնագիտական ունակությունների և կարողությունների կատարելագործում, ավելի լայն իրավական աշխարհայացք:

Քրեական արդարադատության ոլորտում տիրող այժմյան իրավիճակն ստիպում է կատարել համապատասխան սկզբունքային փոփոխություններ ՀՀ քրեական դատավարության կազմակերպման ոլորտում: Առաջին հերթին՝ անհրաժեշտ է հրաժարվել հանցագործություն կատարած բոլոր անձանց անխտիր քրեական պատասխանատվության ենթարկելու միտումից: Դա հանգեցնում է պետության կողմից հատկացված ուժերի և միջոցների վատնմանը: Այդ միջոցները կիրառվում են հիմնականում ոչ թե

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

ավելի ծանր և հասարակության համար ավելի վտանգավոր բարդ քրեական գործերի քննման և լուծման, այլ՝ բազմաթիվ նվազ վտանգավորություն և նշանակություն ունեցող հանցագործությունների քննման և դրանց հաշվին հաշվետվության բարելավման նպատակով:

Քրեական հետապնդման և քրեական պատասխանատվության այլընտրանքների կիրառման սահմանները գծելիս պետք է հաշվի առնել, որ հասարակությունը շահագրգռված է, որպեսզի հանցագործություն կատարած անձանց մեջ չկուտակվի հանցավոր փորձ, այլ ձևավորվեն պատճառված վնասի հատուցման անհրաժեշտության և անխուսափելիության գիտակցում ու սովորույթ:

Այդ իսկ պատճառով իրավակիրառ մարմինները պետք է տարբերակեն օրենքի «պատահական» իրավախախտողներին նրանցից, ովքեր կայուն կերպով չեն ցանկանում հետևել, պահպանել օրենքը: Բնակչության չափազանց «քրեականացումը» կհանգեցնի հասարակության սոցիալ-մշակութային և բարոյական դեգրադացմանը: Իրավապահ և դատական իշխանության մարմինների գաղափարախոսության մեջ պետք է ամրապնդվի այն սկզբունքը, որ պետությունը չի կարող չարձագանքել որևէ հակաիրավական արարքի, սակայն կարող է գնալ փոխգիշման ոչ միայն պատասխանատվության սահմանների և պատժի չափերի, այլ նաև հենց քրեադատավարական հարաբերությունների ծագման կամ շարունակության վերաբերյալ:

Սույն հոդվածում քննարկվելու են.

- Քրեական դատավարությունում օրինականության սկզբունքը,
- Հայեցողություն հասկացությունը,
- Հայեցողության և օրինականության փոխհարաբերակցությունը:

Օրինականության սկզբունքը քրեական դատավարությունում. Պետական և հասարակական կյանքի նկատմամբ օրենքի գերակայության հաստատումը հնարավոր է միայն օրինականության սկզբունքի հետևողական պահպանման շնորհիվ: Դա առավելագույնս վերա-

բերում է քրեական դատավարությանը՝ որպես օրինականության և իրավակարգի ամրապնդմանն ուղղված օրենքով կարգավորվող գործունեություն: Հանցագործության բացահայտումը, մեղավորին մերկացնելը և արդար պատիժ նշանակելը, քրեական դատավարության ոլորտում մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը պետք է իրականացվեն միայն օրինականության խիստ պահպանման հիման վրա:

Օրինականությունը համընդհանուր իրավական սկզբունք է, որն ընկած է բոլոր սուբյեկտների գործունեության հիմքում: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:¹

Օրինականությունն ունիվերսալ, համընդգրկուն սկզբունք է, որն արտահայտվում է դատավարական իրավունքի բոլոր սկզբունքներում և նորմերում, բնութագրում է քրեական դատավարության բոլոր կողմերը: Այդ սկզբունքը հատուկ տեղ է զբաղեցնում քրեական դատավարության սկզբունքների շարքում: Օրինականությունը քրեական դատավարության սկզբունքների սկզբունքն է:²

Որոշ դատավարագետներ չեն ընդունում օրինականության սկզբունքի ինքնուրույնությունը: Օրինակ՝ Մ.Ս. Ստրոգովիչը համարում է, թե՛ քրեական դատավարությունում օրինականության սկզբունքը դատավարության բոլոր սկզբունքների համակցությունն է և ոչ թե առանձին սկզբունք:³ Նման մոտեցումը գիտնականների կողմից արդարացիորեն միանշանակ չի ընդունվում:⁴ Կարծում ենք՝ յուրաքանչյուր սկզբունք որոշակի բովանդակությամբ ինքնուրույն դատավարական նորմ է, և սկզբունքների համակցությունը նոր սկզբունք չի առաջացնում:

Օրինականությունը՝ որպես ինքնուրույն դատավարական սկզբունք, ամրագրված է ՀՀ

¹ Նույնը նախատեսում է 06.12.2015թ. հանրաքվեով ընդունված Սահմանադրության 6-րդ հոդվածը

² <http://biblioteka.ru/ugolovnoe-pravo-5/38.htm>

³ Строгович М.С. Курс советского уголовного процесса. М., 1968, h1, էջ 175:

⁴ Ս.Դիլբանդյան, Ա.Հարությունյան, Գ.Ղազինյան և այլք. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն. – Երևանի պետ. համալս.– Եր.: Երևանի համաս. իրատ. 2006.– 126 էջ:

քրեական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածում, որի համաձայն՝ «հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը, ինչպես նաև քրեական դատավարությանը մասնակցող այլ անձինք պարտավոր են պահպանել «Սահմանադրությունը, սույն օրենսգրքը և մյուս օրենքները»: Այսինքն՝ օրինականության սկզբունքը ենթադրում է քրեադավարական գործունեության իրականացումը՝ միայն օրենքի և դրանով սահմանված կանոնների համաձայն:

Դատավարական այս սկզբունքի համաձայն՝ վարույթ իրականացնող մարմինները, քրեական գործի հարուցման պահից սկսած մինչև դատավճռի կայացումը, պետք է ճիշտ կիրառեն քրեադավարական օրենսգրքերի նորմերը: Այսինքն՝ իրավակիրառողները պետք է առաջնորդվեն օրենքի ավելի արդյունավետ և արդար (հայեցողական) կիրառման անհրաժեշտությամբ՝ ինչպես հանրային շահերի, այնպես էլ՝ մարդու իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար: Հետևաբար՝ եթե հայեցողության կիրառման մեխանիզմներն ամրագրվեն քրեական դատավարության օրենսգրքում, և դրանց իրականացման ձևաչափերը չհակասեն օրենքում ամրագրված սկզբունքներին, ապա այդ դեպքում հայեցողությունը չի կարող հակասել օրենքին, քանի որ նախատեսված և սահմանված կլինի օրենքով: Այդպիսի հայեցողությունն անհրաժեշտ է օրենքին որպես կարևոր գործիք՝ հասարակական կյանքի բարդ սոցիալական ընթացակարգերի կարգավորման տեսանկյունից:

Հայեցողություն հասկացությունը. «Հայեցողություն» հասկացությունն ունի տարբեր ընկալումներ, և շատ հաճախ դրա վերաբերյալ ծագում են տարբեր մեկնաբանություններ: Իրավաբանական գրականությունում «հայեցողու-

թյուն» հասկացությունը բազմիմաստ նշանակությամբ գործածելը 1923թ. որոշ մեկնաբանների համար առիթ հանդիսացավ առաջարկելու՝ հրաժարվել հայեցողություն եզրույթն օգտագործել:⁵

Այնուամենայնիվ, իրավաբանական բառարանում քննարկվող հասկացությունը շարունակում է լայնորեն գործածվել:

Բացատրական բառարաններում «Հայեցողություն» հասկացությունը մեկնաբանվում է հետևյալ կերպ՝ 1. Ներքին՝ մտավոր գննություն, դատողություն, 2. Դատելը, դատողությամբ որոշելը, այս կամ այն կերպ ընտրելը՝ վճռելը՝ տնօրինելը (ըստ իր դատողության՝ կամքի), 3. Նայվածք, հայացք:⁶ Մեկ այլ բառարանում հայեցողությունը դիտվում է՝ դատողություն, ըստ իր կամքի ընտրություն անել:⁷ Իրավաբանական գրականության մեջ նույնպես որոշ հեղինակներ դատական հայեցողությունը մեկնաբանում են որպես մտային գործունեություն, որի շրջանակներում վերլուծվում են օրենսդրությամբ տրված հնարավորությունները:⁸

Իրավաբանական գրականության մեջ տրվում են հայեցողություն եզրույթի տարբեր սահմանումներ: Ըստ Ա.Բարակի՝ հայեցողությունն իշխանությամբ օժտված անձի լիազորությունն է՝ երկու և ավելի այլընտրանքների միջև կատարել ընտրություն, որտեղ այլընտրանքներից յուրաքանչյուրն օրինական է:⁹ Մեկ այլ տեսակետի կողմնակիցներ նշում են, որ հայեցողությունն իրավակիրառ գործունեության յուրահատուկ տեսակ է, որը բնութագրվում է կոնկրետ իրավաբանական գործով, լավագույն լուծում գտնելու ինտելեկտուալ-կամային ուղղվածություն:¹⁰ Հայեցողության ընդհանրացված իմաստն այն է, որ իրավակիրառ մարմինն իրավունք ունի կատարելու օրենքով նախատեսված վարքագծի մի քանի տարբերակի միջև

⁵ Rosemary Pattenden Judicial Discretion and Criminal Litigation. Contributors: Clarendon Press. Place of Publication: Oxford. 1990
⁶ Աղայան Է.Դ. Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-2, «Հայաստանի Հրատարակչություն». Երևան.- 1976. էջ 811:
⁷ Ջահուկյան Գ.Բ. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (հատոր 3-րդ), Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1974. էջ 283
⁸ Попаденко Е.В. Альтернативные средства разрешения уголовно-правовых конфликтов в российском и зарубежном праве. Автореф. дисс, ... канд. юрид. наук. Краснодар, 2008. С. 14.
⁹ Барак А. Судейское усмотрение. Перевод с англ. М.: Изд. НОРМА. 1999. С. 299
¹⁰ Քրեական դատավարության պարզեցման հիմնախնդիրները: Գիտագործնական ձեռնարկ/Հեղ. խումբ: Գիտ. խմբ.՝ Ա.Ղամբարյան.- Եր. «Աստղիկ Գրատուն», 2011, էջ 90:

ողջամիտ, հիմնավորված և արդարացի ընտրություն:¹¹

Մինչհեղափոխական քրեական դատավարության գիտության մեջ մեղադրական իշխանության պաշտոնատար անձի օրենքով կարգավորված հայեցողությունը կոչվում էր նպատակահարմարության կամ օգտակարության սկզբունք: Ժամանակակից արտասահմանյան քրեական դատավարությունում այդպիսի հայեցողությունը կոչվում է դիսկրեցիոն (հայեցողական) քրեական հետապնդման սկզբունք: Երկու դեպքում էլ խոսքն օրենքով ամրագրված հնարավորության մասին է՝ գործել սեփական հայեցողությամբ օրենքով նախատեսված սահմաններում:¹² Այստեղից «նպատակահարմարություն» և «հայեցողություն» (дискреционность) եզրույթներն իրենց նշանակությամբ, իմաստով կարող են դիտվել որպես նույնանման հասկացություններ:

Հայեցողության իրավաչափության հարցերը սերտ կապված են մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հետ: Մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքներից է «արդյունավետ և արդարացի իրավակիրառումը», որը պայմանավորված է երկու հիմնական պատճառներով.

1) իրավունքի կիրառումն իշխանական պետական գործունեություն է, որն ուղղված է իրավական դրույթների կյանքի կոչմանը, այսինքն՝ իրավահարաբերությունների սուբյեկտների շահերի իրականացման ճանապարհին խոչընդոտների հաղաթահարմանը,

2) իրավահարաբերության սուբյեկտն օրինական շահերի պաշտպանության համար կարող է դիմել իրավասու մարմնին, իսկ իրավակիրառողը պետք է խթանի դրա պահպանումը կամ իրականացումը:¹³

Հայեցողության կիրառման չափանիշը պետք է լինի ինքնին օրինականությունը, որն ոչ միայն ընկալվում է որպես բոլոր պետական մարմինների, պաշտոնատար անձանց, հասա-

րական միությունների կողմից օրենքի կայուն պահպանում և իրականացում, այլ նաև կապված է իրավական պետության հիմնարար սկզբունքների հետ՝ իրավունքի գերակայության, մարդու իրավունքների առաջնայնության, իշխանության բաժանման և այլն:¹⁴

Անկասկած. հայեցողության ամրագրումը ժամանակակից քրեական դատավարությունում պահանջում է իր որոշ սկզբունքների իմաստավորում: Առաջին հերթին՝ դա վերաբերում է օրինականության սկզբունքին:

Հայեցողության և օրինականության փոխհարաբերակցությունը. Իրավակիրառ մարմինն իր հայեցողությամբ որոշում կայացնելիս սահմանափակված է որոշակի ոլորտով և այդ սահմանափակված ոլորտում՝ ընտրության համար սահմանված լրացուցիչ սահմաններով, ուստի չպետք է հավասարության նշան դնել «ազատություն» և «հայեցողություն» հասկացությունների միջև: Բացի այդ՝ իրավակիրառողը պետք է առաջնորդվի օրենքի ընդհանուր սկզբունքներով, նպատակներով, հասարակության զարգացման ընդհանուր օրենքներով: Այդ պարագայում հայեցողությունը ձեռք է բերում պայմանական և սահմանափակ բնույթ:¹⁵

Անկասկած՝ քրեական դատավարությունում հայեցողական կառուցակարգերի ամրագրումը կամայականության մեծ դիսկ է ենթադրում: Սահմանազատելով հայեցողությունը և կամայականությունը՝ պետք է նշել, որ հայեցողության հիմքում ընկած են ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի արդյունավետ ապահովման ձգտումը, ժողովրդավարական իրավակարգի և անվտանգության ամրապնդումը, պետության և հասարակության ներդաշնակ և քաղաքակիրթ զարգացումը: Իսկ կամայականության հիմքում ընկած է մեկ մարդու կամ մարդկանց խմբի անձնական կամ նեղ կորպորատիվ շահերի և պահանջների բավարարման չհիմնավորված ձգտումը՝ ի վնաս այլ

¹¹ Оксюк Т. Усмотрение прокурора в уголовном процессе. Законность. 2010. N 3. С. 3-9.

¹² Апостолова Н.Н. Целесообразность (дикреционность) в российском угоовном судопроизводстве, Автореферат диссертации на соискание ученой степени доктора юридических хаук, Москва.– 2010 <http://www.iuaj.et/node/728>

¹³ Малько А.В., Субочев В.В. Гарантии осуществления законных интересов. // Правоведение. 2007.– №6.– С.146.

¹⁴ Абдрасулов Е.Б. Толкование закона и норм Конституции: теория, опыт, процедура.– Алматы: Оркениет, 2002.– С.177.

¹⁵ Парог А.И., Грачева Ю.В. Понятие, основание, признаки и значение судейского усмотрения в уголовном праве. Государство и право. N 11. 2001. С.93.

անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի, ինչպես նաև ի վնաս պետության և հասարակության մեջ ժողովրդավարական հասարակարգի ձևավորման:

Հայեցողության կիրառումը նշանակում է օրինականության սկզբունքի խիստ պահպանում, քանի որ իրավակիրառ մարմնի հայեցողական գործունեությունն օրենքի նորմի կիրառումն է:

Հայեցողության կիրառումն այդ կանոնի համար բացառություն չէ, քանի որ հայեցողության սահմանները և կիրառման մեխանիզմը, պաշտոնատար անձին ընձեռված վարվելակերպի ընտրության ազատությունը, իրավահարաբերության սուբյեկտների համար նախատեսված իրավունքներն ու պարտականությունները պետք է նախատեսված լինեն օրենքով, որի պարագայում խոսքն ուղղակիորեն կամ անուղղակիորեն կվերաբերի նաև օրինականությանը:

Այսպես՝ Զ.Ռիչարդսոնը, Է.Օգուսը, Պ.Բերուսը նշում են. «Հայեցողությունն ուղղակի ընտրություն չէ, այլ իր մեջ բովանդակում է մարդկանց և կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրենքով պահպանվող շահերի պաշտպանության նպատակով որոշակի սահմաններում ձեռք բերված օրինական ընտրություն, լուծում»:¹⁶

Օրինականության և հայեցողության մեջ չկան և չեն էլ կարող լինել հակասություններ: Ինչպես նշել է Ա.Դ. Բոյկովը. «Համոզմունքն այն մասին, որ օրինականությունը չի կարող լինել նպատակահարմար, ինչպես և նպատակահարմարությունը՝ անօրինական, հազիվ թե համարվում է անվիճելի»:¹⁷ Օրենքի հայեցողությունն իր տարբեր բնույթի խնդիրների լուծումը ապահովելու ունակության մեջ է, որոնք բխում են հասարակության զարգացման պահանջներից: Հայեցողության օրինականությունը ապահովվում է բացառապես օրենքի վրա հիմնված այլընտրանքային որոշման ընտրու-

թյամբ: Այլ կերպ ասած՝ հայեցողության օրինականությունն ապահովվում է օրենքի հայեցողությամբ:

Գրականության մեջ հանդիպում են և այլ դիրքորոշումներ: Ռ.Ս. Դանելյանը կարծում է, որ ընդունվող որոշումների նպատակահարմարությունը, օպտիմալ լինելը գնահատողական բնույթ ունեն, և, որպես կանոն՝ հակասում են արդարության, օրինականության և օրենքի առջև քաղաքացիների հավասարության սկզբունքներին:¹⁸ Այս դիրքորոշման հետ դժվար է համաձայնել: Մեր կարծիքով, օրինակ՝ դատախազի կողմից համապատասխան հայեցողական լիազորություններն իրականացնելիս օրինականության և հայեցողության միաժամանակյա գոյությունը դառնում է հնարավոր՝ անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պայմանների և հիմքերի օրենսդրո-րեն ամրագրելու միջոցով:

Իրավակիրառ մարմինների պրակտիկայում հայեցողական իշխանության դրսևորումը հաճախ նույնացնում են նշված մարմինների բացասական դեվիանտ, շեղված վարվելակերպի հետ: Այսպես՝ Կ.Դեվիսը նշում է. «Հայեցողությունը չի սահմանափակվում նրանով, ինչը լուծված կամ օրինական է, այլ ներառում է որոշակի սահմաններում իշխանական լիազորությունների վրա հիմնված ցանկացած վարվելակերպ»: Հայեցողության նշանակալի մասն անօրինական է կամ օրինականության տեսանկյունից կասկածելի, և դա նշանակում է պրակտիկայում այնպիսի ժողովրդավարական սկզբունքներից հրաժարվել, ինչպիսիք են անձի անմեղության կանխավարկածը, մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:¹⁹

Նման պատկերացումը խանգարում է դատական մարմինների ինքնուրույնության կայացմանը: Նշված տեսակետը ոչ միշտ է արդարացված և պետք է հաղթահարվի այն դեպքերում, երբ իրավասու մարմինները կիրառում են հայեցողական լիազորություններ՝ մարդու

¹⁶ Richardson G., Ogas A., Burrows P. Polising Pollution: A study of Regulation and Enforcement. Oxford:Clarendon Press. 1983. P. 20-21.

¹⁷ Бойков А.Д. Законность и целесообразность в уголовном судопроизводстве // Законность в Российской Федерации. М.,1998.С. 192

¹⁸ Дanelян P.C. Судейское усмотрение. Теоретические, законодательные и правоприменительные аспекты.– ООО, Новая правовая культура, 2007. С. 114.

¹⁹ Davis K.C. Discretionary Justice in Europe and America. Urbana, Chikago,London:University of Illinois Press, 1976.– P. 41.

իրավունքների և ազատությունների պաշտպանության, դրանց ապահովման կանոնների և ընթացակարգերի հաստատման նպատակով այն պարագայում, երբ օրենքը նախատեսում է կարգավորման երկու կամ ավելի մեխանիզմներ:

Օրինականությունը բանական ֆորմալիզմ է, որն իրավախախտողների նկատմամբ պետական հարկադրանքի միջոցների և ձևերի ընտրության հարցում թույլատրում է հայեցողություն: Հայեցողությունը տվյալ գործում պետական մարմնի կողմից (այդ թվում և՛ մեղադրողի) այս կամ այն դատավարական գործողություն ձեռնարկելու իրավահայեցողության օրենքով նախատեսված ազատությունն է, որը պետք է հիմնված լինի դատավարական շահերի իրականացման համար արդյունավետության, շահավետության և խնայողության նկատառումների վրա:

Հայեցողության և օրինականության փոխհարաբերակցության վերաբերյալ դիրքորոշում է հայտնել ՀՀ Վճռաբեկ դատարանը 2013թ. մայիսի 8-ին Հ.Դավթյանի վերաբերյալ գործով. «Դատական հայեցողությունը որոշում կայացնելիս ընտրություն կատարելու դատարանի իրավագործությունն է: Նշված ընտրության հիմքերն ու սահմաններն ամրագրված են քրեադատավարական օրենքով, պետք է համապատասխանեն օրենսդրի կամքին և դատավորի իրավագիտակցությանը, բխեն իրավունքի հիմնարար սկզբունքներից, գործի կոնկրետ հանգամանքներից և հանցավորի անձից: Մեջբերված մոտեցումից հետևում են դատական հայեցողության հատկանիշները, որոնցից առաջինը հայեցողության օրինականությունն է: Այլ կերպ՝ դատական հայեցողությունն օրինական

է, եթե հիմնված է օրենքի վրա: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ օրենքում առկա ձևակերպումները հաճախ «գնահատողական» բնույթ ունեն, որոնք ենթակա են գնահատման յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքների և հանցագործի անձը բնութագրող հատկանիշների համատեքստում: Հետևաբար՝ գնահատողական բնույթ ունեցող ձևակերպումների կիրառման ժամանակ դատական հայեցողությունն օրինական է, եթե դատարանը որոշում կայացնելիս հիմնվում է կոնկրետ գործի հանգամանքների և հանցագործի անձը բնութագրող տվյալների վրա: Դատական հայեցողությունն օբյեկտիվ երևույթ է, հետևաբար՝ դատական հայեցողության երկրորդ հատկանիշն այն է, որ դատարանն իրավասու է ընտրություն կատարել օրենքով սահմանված շրջանակներում»:²⁰

Ամփոփելով վերոգրյալը՝ հանգում ենք այն եզրակացման, որ խիստ օրինականության (լեզալիզմի) գաղափարն ամբողջությամբ չի կարող իրացվել ժամանակակից քրեական դատավարությունում: Ոչ մի իշխանություն ձևական, ֆորմալ օրենքի կոշտ շրջանակներում չի կարողացել ու չի էլ կարողանա հասնել հասարակության և պետության միջև կոնսենսուսի ձևավորմանը:

Հայեցողությունը համատեղելի է օրինականության հետ, և դրանք միմյանց չեն հակասում: Օրենքի նպատակահարմարությունն իր տարբեր բնույթի խնդիրների լուծումն ապահովելու ունակության մեջ է, որոնք բխում են հասարակության զարգացման պահանջներից: Հայեցողության օրինականությունը ապահովվում է բացառապես օրենքի վրա հիմնված այլընտրանքային որոշման ընտրությամբ:



²⁰ ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական գործերով որոշումների ժողովածու 2014.– Եր. 2014, Հ. 5.– 272թ.:

ՆԱՐԵԿ ԴՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի ասպիրանտ

ՌԱՑԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԿՈՂՄԻՑ «ՉԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒԹՅԱԿԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՉԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկության պատմության ընթացքում տեղի են ունեցել բազմաթիվ ցեղասպանություններ՝ վաղ ժամանակներից մինչև մեր օրերը: Ցեղասպանությունն իր բնույթով եզակի հանցագործություն է՝ ամենածանր հանցագործությունը միջազգային քրեական իրավունքի մեջ:

Ցեղասպանությունը որպես միջազգային հանցագործություն սահմանելու գործում մեծ դեր է ունեցել Ռաֆայել Լեմկինը: Նրա կողմից «ցեղասպանություն» եզրույթի իրավաբանական ձևակերպումն օգտագործվում է որպես «ցեղասպանություն» եզրույթի գիտական սահմանում: Մինչ այդ այդ ցեղասպանական գործողությունները կոչվում էին տարբեր անուններով՝ կոտորածներ, ջարդեր, զանգվածային սպանություններ և այլն:

Սույն հոդվածում փորձ է արվում ներկայացնել, թե ինչ կապ գոյություն ունի Հայոց ցեղասպանության և Ռաֆայել Լեմկինի կողմից «Ցեղասպանություն» եզրույթի ստեղծման ու սահմանման միջև:

Փաստերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պատասխանել այն հարցին, թե որքանով է հիմնավոր այն փաստարկը, որ «ցեղասպանություն» եզրույթի ստեղծման հիմքում ընկած է Հայոց ցեղասպանությունը: Այդ նպատակով անհրաժեշտ է անդրադառնալ այն հարցին, թե ինչ իրադարձություններ են հիմք հանդիսացել Լեմկինի համար, որ նա իր ջանքերը ներդնի ցեղասպանությունը որպես միջազգային հանցագործություն սահմանելու և «ցեղասպանություն» եզրույթի ստեղծման գործում:

Լեմկինը դեռ մանկուց հետաքրքրվել է առանձին մարդկային խմբերի տարատեսակ ջարդերի և սպանողների պատմությամբ: Հենրիկ Սենկևիչի «Յո՛րթաս» պատմավեպը, որը վե-

րաբերում էր առաջին դարում Ներոն կայսեր կողմից քրիստոնեություն ընդունած մարդկանց կոտորածներին, տևական և խորը ազդեցություն է ունեցել Լեմկինի մտածողության ու հետագա կարիերայի վրա: Նա իր պատանեկան տարիներին ուսումնասիրել է հուգենոտների, Իսպանիայի մավրերի, Մեքսիկայի ացտեկների, Ճապոնիայի կաթոլիկների և Չինգիզ խանի ազդեցության տակ բազմաթիվ ազգերի նմանօրինակ պատմությունները: Հետագայում Լեմկինը, տեղեկանալով Առաջին աշխարհամարտի ընթացքում Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության դեպքերի մասին, խորապես ցնցվեց: Լեմկինը վճռեց, որ էթնիկական և կրոնական խմբերի ոչնչացումը կանխելու համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան միջազգային օրենք, որը թույլ կտա նման դեպքերում սահմանափակել պետության ինքնիշխանությունը: Նրան հատկապես անհանգստացնում էր ազգային, կրոնական խմբերին ոչնչացնողների և, մասնավորապես՝ երիտթուրք ոճրագործների անպատիժ մնալու հանգամանքը:

Լեմկինն ուսումնասիրեց երիտթուրք ղեկավարների դատապարտման անհաջող գործը և այն իրավական դժվարությունները, որոնք ծագել են այն փաստից, որ այն ժամանակվա միջազգային քրեական իրավունքում չկար միջազգային իրավական հիմք օտարերկրյա կառավարությունների պաշտոնյաներին սեփական քաղաքացիների սպանությունը կազմակերպելու մեղադրանքով պատասխանատվության ենթարկելու համար: Այս առիթով Լեմկինն իր ինքնակենսագրականում գրում է. «Պատերազմից հետո 150 թուրք պատերազմական հանցագործներ ձերբակալվել և բրիտանական կառավարության կողմից ներկայ-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ, № 96 2016

¹ Geoffrey Robertson QS's Opinion, Was There an Armenian Genocide?, London, 2009, p. 4.

վել էին Մայթա կղզում: Հայերը պատվիրակություն ուղարկեցին Վերսալի խաղաղության կոնֆերանս: Նրանք արդարություն էին պահանջում: Ապա ես մի օր կարդացի թերթերում, որ բոլոր թուրք հանցագործներն ազատ են արձակվելու: Ես շոկի մեջ էի»²: Սողոմոն Թեհլիրյանի դատավարությունը ևս մեծ ազդեցություն է ունեցել Լեմկինի վրա, ինչի մասին նա նշում է նաև 1949թ. CBS հեռուստաընկերության հեռուստաձրագրերից մեկին իր տված հարցազրույցում. «Ես հետաքրքրվեցի ցեղասպանությանը, որովհետև դա շատ անգամ տեղի ունեցավ, տեղի ունեցավ հայերի հետ, և դրանից հետո հայերը շատ կոշտ գործարք ստացան Վերսալի կոնֆերանսում, քանի որ նրանց ցեղասպանության իրագործման մեջ մեղավոր հանցագործները չպատժվեցին: Նրանք (օսմանյան թուրքերը) ստեղծել էին ահաբեկչական կազմակերպություն, որն արդարադատությունը վերցրել էր իր ձեռքը: Թալեաթ փաշայի սպանությունը Բեռլինում շատ ուսանելի է: Մի մարդ (Սողոմոն Թեհլիրյան), ում մայրը սպանվել էր ցեղասպանության ժամանակ, սպանեց Թալեաթ փաշային... Այսպես՝ նա կատարեց հանցագործություն: Որպես իրավաբան՝ ես մտածեցի, որ հանցագործությունը ոչ թե պետք է պատժվի զոհերի, այլ՝ դատարանի կողմից ազգային օրենքով»³:

1933թ. Մադրիդում գումարված քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված 5-րդ միջազգային կոնֆերանսում Լեմկինն առաջին անգամ առաջարկեց ստեղծել բազմակողմ կոնվենցիա և մարդկային խմբերի ոչնչացումը որակել որպես միջազգային հանցագործություն⁴: Կոնֆերանսը տեղի ունեցավ մի ժամանակ, երբ միջազգային լարված իրավիճակ էր ստեղծվել, գերմանական պատվիրակությունը դուրս եկավ Ազգերի լիգայից, նացիստական կառավարությունն ընդունել էր հակասեմական օրենսդրություն, և մեկ տարվա ընթացքում հազարավոր

հրեա փախստականներ լքեցին նացիստական Գերմանիան: Լեմկինը Գերմանիայում նացիստների իշխանության գալը և նացիզմի հաստատումը համարում էր սպառնալիք, ինչն անհրաժեշտություն էր առաջացրել նոր միջազգային կոնվենցիայի ստեղծման համար⁵: Լեմկինի մադրիդյան զեկույցը գիտական շրջանակների կողմից դիտարկվում է որպես առաջին քայլ ՄԱԿ-ի՝ ցեղասպանությունը պատժելու և կանխարգելելու հայեցակարգերի ձևավորման ճանապարհին: Իր զեկույցում Լեմկինն առանձնացնում էր հինգ նոր տեսակի հանցագործություններ: Դրանք ներառում են տեռորիզմը, ազգային, կրոնական կամ սոցիալական խմբերի նկատմամբ հալածանքների իրագործումը, որոնք նա անվանում էր «բարբարոսություն», արվեստի և մշակույթի գործերի ոչնչացումը, որը նա կոչում է «վանդալիզմ», միջազգային հաղորդակցության սադրիչ պատահարները, քիմիական աղտոտման պատճառումը:

Լեմկինը սահմանում էր «բարբարոսություն» հանցագործությունը որպես գործողություն, որը կատարվում է մարդու կյանքի դեմ՝ մտադրություն ունենալով ոչնչացնել որոշակի ազգային, կրոնական կամ սոցիալական խմբին: «Վանդալիզմ» հանցագործությունն ուղղված էր ազգային խմբի մշակութային ժառանգության դեմ: Լեմկինի՝ այս երկու հանցագործության վերաբերյալ առաջարկությունը շատ կարևոր պահ էր նրա գիտական գործունեության մեջ, քանի որ այս առաջարկության զարգացումը և արտացոլումը եղավ 10 տարի հետո նրա գրած «Առանցքի իշխանությունն օկուպացված Եվրոպայում» ֆունդամենտալ աշխատության մեջ⁶: Լեմկինն իր զեկույցում պնդում էր, որ աշխարհը կարիք ունի օրենքի, որով կարգելվեն ազգային, կրոնական խմբերի նկատմամբ բռնաճնշումները, և զգուշացնում, որ այդ օրենքն անհրաժեշտ է, որպեսզի կանխվի այլ երկրներում այնպիսի հանցագործության կրկնություն:

² Ռ. Լեմկինի անտիպ ինքնակենսագրություն, Donna-Lee Frieze, “Totally Unofficial: The Autobiography of Raphael Lemkin”, Yale 2013, p. 19.

³ Harut Sassounian, Lemkin Discusses Armenian Genocide, Dec. 8, 2005, (http://www.armeniapedia.org/index.php?title=Lemkin_Discusses_Armenian_Genocide_In_Newly-Found_1949_CBS_Interview).

⁴ Raphael Lemkin, Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations, Madrid (14 -20 October 1933), (<http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm>).

⁵ Նույն տեղում:

⁶ Rafał Lemkin: a Hero of Humankind, Agnieszka Bieńczyk-Missala, Sławomir Dębski, Warszaewa, 2010, Polski Instytut Spraw Międzynarodowych, p.70.

նը, ինչպիսին ժամանակին Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության իրագործումն էր: Այս պարագայում Լեմկինն ուշադրություն էր հրավիրում Հիտլերի իշխանության գալու հանգամանքի վրա⁷:

1933թ. Մադրիդի կոնֆերանսում Լեմկինի առաջարկները, որոնց ներկայացման համար, հավանաբար, հիմք էին ծառայել Հայոց ցեղասպանության դեպքերը, անտեսվեցին միջազգային հանրության կողմից:

1939թ. սեպտեմբերին Երկրորդ աշխարհամարտի բռնկումը և Լեհաստանի բաժանումը Գերմանիայի ու Սովետական միության միջև շրջադարձային եղան Լեմկինի կյանքում: Չնայած այդ հանգամանքին՝ նա չթողեց իր ուսումնասիրությունը միջազգային քրեական իրավունքի ոլորտում: Նա հեռացավ Լեհաստանից և Լիտվայով դեպի Ստոքհոլմ, ապա ԽՍՀՄ-ի ու Ճապոնիայի տարածքով ճանապարհվեց դեպի ԱՄՆ: 1941թ. վերջին ժամանելով ԱՄՆ՝ նա խուսափեց այն ճակատագրից, որը բաժին ընկավ Լեհաստանի հրեաներին. նրանք ոչնչացվեցին նացիստների կողմից օկուպացված Լեհաստանում⁸: 1939-1945թթ. ընթացքում Լեմկինի ընտանիքի 49 անդամ սպանվեցին՝ ներառյալ նրա ծնողները: Հաստատվելով ԱՄՆ-ում՝ Լեմկինն սկսեց իրավունք դասավանդել Դյուկի և Յեյլի համալսարանում:

1941թ. օգոստոսի 24-ին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինսթոն Չերչիլը ռադիոհեռար-

ձակմամբ դիմեց ժողովրդին: Նա նացիստների կողմից իրականացված ցեղասպանությունը անվանում է «Անանուն հանցագործություն»՝ նշելով. «Մենք ականատես ենք մի հանցագործության, որն անուն չունի»: Չերչիլի այս հայտարարությունը փոխեց Լեմկինի մոտեցումը, նա նպատակադրվեց գրել մի գիրք, որում նկարագրելու էր, թե ինչպես էին նացիստներն օգտագործում օրենքը՝ արդարացնելու հրեաների և մյուս եվրոպական փոքրամասնությունների պարբերաբար ոչնչացումը:⁹ Լեմկինը մտադիր էր նոր եզրույթ ստեղծել, որով բնորոշեր ազգային, կրոնական և ռասայական խմբերի սպանությունները: Նոր եզրույթ ընտրելու գործում նա մերժում է գոյություն ունեցող մի շարք առկա հնարավոր տարբերակներ, այդ թվում նաև՝ «ցեղի սպանություն» եզրույթը, որն Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն օգտագործում էր 1915թ. կոտորածների մասին իր զեկույցներում¹⁰:

Նա կարող էր ընդունել նաև «Մարդկության դեմ ուղղված հանցագործություն»¹¹ եզրույթը, որն Անտանտի դաշնակից երկրներն օգտագործեցին՝ մեղադրելու օսմանյան ղեկավարությանը հայերի նկատմամբ հանցագործությունների կատարման հարցում դեր ունենալու մեջ¹²:

Ըստ Լեմկինի՝ «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» եզրույթն անորոշ է և ոչ ճշգրիտ. այդ եզրույթի առնչությունը պատերազմի հետ բացառում է դրա կիրառումը այն

⁷ Geoffrey Robertson QS's Opinion, նշվ. Աշխ. էջ 4:

⁸ Rafał Lemkin: a Hero of Humankind, նշվ. աշխ. էջ 73:

⁹ Dan Eshet, Totally Unofficial: Raphael Lemkin And The Genocide Convention, Adam Strom & the Facing History and Ourselves Staff, 2007, p.17.

¹⁰ Նույն տեղում:

¹¹ «Մարդկության դեմ ուղղված հանցագործություն» արտահայտությունն առաջին անգամ օգտագործել է ֆրանսիական հեղափոխական Մաքսիմիլիան Ռոբեսպիերը՝ գահընկեց արված Լյուդովիկոս 16-րդին անվանելով «մարդկության դեմ ուղղված հանցագործ»: Այդ իսկ պատճառով նա պնդում էր, որ Լյուդովիկոս 16-րդը պետք է մահապատժի ենթարկվի:

¹² Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի 1915թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրում նշվում էր. «Վերջին ամսվա ընթացքում Հայաստանում կատարվում է ջարդ քրդերի և թուրքերի կողմից՝ օսմանյան իշխանությունների բացահայտ թողտվությամբ, հաճախ նաև ուղղակի օժանդակությամբ: Նոր տոմարով ապրիլի կեսերին հայերի ջարդ է տեղի ունեցել Էրզրումում, Դերջանում, Էզհնում, Բիթլիսում, Մուշում, Սասունում, Ձեյթունում և ամբողջ Կիլիկիայում, գլխավոր կոտորվել են Վանի շրջակայքի հարյուր գյուղի բնակիչներ, բուն Վանում հայկական թաղամասը պաշարվել է քրդերի կողմից: Մինչույն ժամանակ՝ Կ. Պոլսի թուրքական կառավարությունը բանտարկման և չտեսնված ճնշումների է ենթարկում խաղաղ հայ բնակչությանը: Ելնելով Թուրքիայի կողմից մարդկության և քաղաքակրթության դեմ կատարված նոր հանցագործություններից՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի և Անգլիայի դաշնային կառավարությունները սրանով հրապարակայնորեն հայտարարում են Թուրքիայի կառավարությանը, որ իրենք այս հանցագործությունների անձնական պատասխանատվությունը դնում են թուրքական կառավարության բոլոր անդամների, ինչպես նաև տեղական ներկայացուցիչների վրա, ովքեր հանցակից են նման կոտորածին»:

զանգվածային սպանությունների նկատմամբ, որոնք կատարվել են ոչ պատերազմական պայմաններում, և դա այն դեպքն էր, երբ հանցագործություններ էին տեղի ունեցել Գերմանիայում հրեաների և մյուս փոքրամասնությունների նկատմամբ նախքան Երկրորդ աշխարհամարտի սկսվելը՝ 1939թ.: Մյուս կողմից՝ այդ եզրույթը չափազանց լայն նշանակություն ուներ. կոնկրետ խմբի անդամների սպանությունն այն բազմաթիվ հանցանքների ձևերից մեկն էր, որն ընդգրկվում է «մարդկության դեմ ուղղված հանցագործություն» սահմանման մեջ¹³:

«Մարդկության դեմ ուղղված հանցագործությունը» միջազգային հանցագործության տեսակ է, որն առնչվում է ցեղասպանության և պատերազմական հանցագործությունների հասկացությունների հետ¹⁴: Միջազգային իրավունքում կիրառվում են «մարդկության դեմ ուղղված հանցագործությունների» տարբեր սահմանումներ, որոնք հիմնականում ներառում են խոցելի խմբերի քաղաքացիական անձանց դեմ իրագործված ֆիզիկական բռնության և հալածանքների մի շարք տարբեր գործողություններ¹⁵:

Նույնքան անբավարար էր «Massacre» (կոտորած) ֆրանսերեն բառը: Այս բառը հաճախ օգտագործվում է Լեմկինի կողմից համապատասխան եզրույթի որոնման ընթացքում: «Massacre» եզրույթը կարելի է սահմանել որպես գործողությունների ձև՝ սովորաբար հավաքական, որի նպատակն է քաղաքացիական բնակչության և ոչ շարային զինվորների ոչնչացումը՝ ներառյալ կանանց, տղամարդկանց, երեխաների և տարեցների, ովքեր չեն կարողանում պաշտպանել իրենց: Սահմանումը նաև կարող

է ներառել այն զինվորների սպանությունը, ովքեր զինաթափվել են¹⁶: Սակայն «Massacre» եզրույթը սահմանափակ նշանակություն ունի: Դարերի ընթացքում դա ասոցացվում էր, օրինակ, Բարդուղիմեոսյան գիշերվա հետ՝ կաթոլիկական դավադրություն, որի նպատակն էր կալվինիստներին դուրս հանել Ֆրանսիայից: Ավելի արմատական եզրույթ էր հարկավոր՝ դրա միջոցով պիտակավորելու, մասնավորապես, բնաջնջում իրականացնելու մտադրությունը¹⁷:

Հետաքրքրական է նաև, որ Լեմկինը ցեղասպանության հանցագործությունը բնորոշելու համար չընտրեց նաև գերմաներեն «Volkermörd» եզրույթը, որը բառացիորեն նշանակում է ամբողջ ազգի ոչնչացում: «Volkermörd» եզրույթն ավելի հաճախ էր հայտնվում 19-րդ դարի ընթացքում 1904-1907թթ. Հերերո և Նամա ժողովուրդների դեմ գերմանական գաղութային պատերազմի մասին զեկույցներում: Այս եզրույթը կրկին կիրառվեց գերմանական ու հաբսբուրգյան պաշտոնական և մասնավորապես լրագրողներում՝ բնորոշելով Օսմանյան կայսրության կողմից կայսրության տարածքում բնակվող հայկական փոքրամասնությանը բնաջնջելու գաղտնի արշավը¹⁸:

1944թ. Միջազգային խաղաղության *Քարենեզի* հիմնադրամը հրապարակեց «Առանցքի ղեկավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատությունը, որում Լեմկինը պնդում էր, որ 1933թ. հանցագործությունների վերաբերյալ իր առաջարկները, փաստորեն, կազմում են ցեղասպանության հայեցակարգը:

«Առանցքի ղեկավարումը բռնազավթված Եվրոպայում» գիրքը նա գրել է Երկրորդ աշխար-

¹³ Նույն տեղում, էջ 18:

¹⁴ 1945թ. Երկրորդ աշխարհամարտում հաղթանակած պետությունները տալիս են այդ եզրույթի սահմանումը: Նյուրնբերգյան տրիբունալի կանոնադրության 4-րդ հոդվածը, որն ընդունվել էր 1945թ. օգոստոսի 8-ի Լոնդոնի կոնֆերանսում, սահմանում էր. տրիբունալը կունենա իրավասություն երեք կարգի հանցագործությունների՝ պատերազմական հանցագործությունների, խաղաղության դեմ հանցագործությունների և մարդկության դեմ ուղղված հանցագործությունների նկատմամբ: Մարդկության դեմ ուղղված հանցագործությունը սահմանվեց հետևյալ կերպ. «Սպանությունը, բնաջնջումը, ստրկացումը, բռնազաղթը և այլ անմարդկային արարքներ, որոնք ուղղված են քաղաքացիական բնակչության դեմ նախքան պատերազմը և պատերազմի ընթացքում, կամ քաղաքական, կրոնական, ազգային հիմքով հալածանքների իրագործում կամ դրանց հետ կապված ցանկացած հանցագործություն տրիբունալի իրավասության սահմաններում՝ անկախ ներպետական դատարանի օրենքի, որտեղ իրագործվել է:

¹⁵ Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Dinah L. Shelton, vol. 1, p. 209.

¹⁶ Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Dinah L. Shelton, vol. 2, p. 661.

¹⁷ Journal of Genocide Research (2005), December 7(4), From the Editor: Lemkin Redux: in quest of a word, p. 444.

¹⁸ Նույն տեղում:

համարտի տարիներին: Գրքում ոչ միայն նկարագրվում էին եվրոպական ազգերի ճակատագիրը, այլ նաև նշվում այն հրամանագրերի և օրենքների ցանկը, որոնք ի ցույց են դնում, որ նացիստները ցանկանում էին նվաճել և ոչնչացնել եվրոպական ազգերին: Լեմկինը, այդ ցանկը ներկայացնելով, ցանկանում էր ցույց տալ, թե ինչպես էին նացիստներն օգտագործում օրենքները՝ քաղաքացիական իրավունքների հիմքերը քայքայելու և օկուպացված տարածքներում որոշ փոքրամասնությունների զանգվածային սպանություններն օրինականացնելու համար: 721 էջանոց գրքի մի փոքր հատվածում քննարկվում է տերմինաբանության հարցը, որի մասին Լեմկինը մտածում էր Չերչիլի «առանց անվանման հանցագործության» մասին ելույթից ի վեր, և այդ բառը, որ նա ընտրեց, «Յեղասպանություն» (Genocide) բառն էր, ինչը նա այսպես է նկարագրում.

«Նոր պայմանները նոր հասկացություններ են պահանջում: «Յեղասպանություն» ասելով՝ նկատի ունենք ազգի կամ էթնիկ խմբի ոչնչացումը: Այս նոր բառն ստեղծվել է հունական Genos բառից (ոսաս, ցեղ) և լատիներեն cide (սպանել): Ընդհանուր ասած՝ ցեղասպանությունը չի նշանակում ազգի անհապաղ ոչնչացում՝ բացառությամբ, երբ իրականացվում է ազգի բոլոր անդամների զանգվածային սպանություն: Դա ավելի շուտ՝ նշանակում է տարբեր գործողությունների համակարգված ծրագիր, որոնց նպատակն է ոչնչացնել ազգային խմբերի կյանքի հիմքերը՝ նպատակ ունենալով ոչնչացնել հենց այդ խմբերին: Այդպիսի ծրագրի նպատակները կարող են լինել քաղաքական և սոցիալական ինստիտուտների կազմալուծումը, մշակույթը, լեզուն, ազգային զգացումները, կրոնը և այդ խմբերի տնտեսական գոյությունը և անձնական անվտանգության, ազատության, առողջության, արժանապատվության և նույնիսկ այդ խմբերի անձանց կյանքի ոչնչացումը: Յեղասպանությունն ուղղված է ազգային խմբի գոյության դեմ, և դրանում ներառվող գործողություններն ուղղված են անհատների դեմ պայմանավորված ոչ թե իրենց ան-

հատական կարգավիճակով, այլ՝ որպես ազգային խմբի անդամներ լինելով»¹⁹:

Իր այս աշխատության մեջ Լեմկինը նշում է, որ Յեղասպանություն (Genocide) եզրույթի ստեղծումը 1933թ. Մադրիդյան կոնֆերանսում իր ներկայացրած առաջարկների տրամաբանական շարունակությունն է, և իր այս աշխատության էությունը ցեղասպանության իրագործողներին պատժի ենթարկելն է: Այս առնչությամբ Լեմկինը գրում է. «Դեռևս 1933թ. ներկայացված աշխատանքի հեղինակն Ազգերի լիգայի միջազգային քրեական իրավունքի միասնականացման 5-րդ համաժողովին ներկայացրել է մի զեկույց, որն ուղեկցվում էր այն գործողությունների մասին հոդվածների նախագծով, որոնց նպատակն է բնակչության նկատմամբ ճնշումները և ոչնչացումը (ինչը կկազմեր փաստացի ցեղասպանության հայեցակարգը), և որոնք պետք է պատժի ենթարկվեն»²⁰:

Լեմկինը ներկայացնում է, որ եթե 1933թ. Մադրիդյան կոնֆերանսում իր առաջարկությունները մասնակից երկրների կողմից ընդունվեին, ապա միջազգային քրեական իրավունքում կներդրվեին երկու նոր հանցագործությունների տեսակներ, և այդ հանցագործությունները կատարողների նկատմամբ պատիժների սահմանումը հնարվորություն չէր տա Գերմանիային և նրա դաշնակիցներին անարգել դիմելու հանցագործությունների իրականացմանը: Նա, մասնավորապես, նշում է. «Հեղինակը ձևակերպեց երկու նոր միջազգային իրավական հանցագործություններ՝ ներդնելու 37 մասնակից երկրների քրեական իրավունքում՝ դրանք անվանելով «բարբարոսություն» հանցագործություն և «վանդալիզմ»... Եթե նախագիծն, ընդունվեք մասնակից երկրների կողմից՝ օգտակար կլինեք՝ ապահովելով արդյունավետ գործիք՝ պատժելու ներկայիս աշխարհի հակամարտությունների պատերազմական հանցագործներին: Պետք է կրկին ընդգծել, որ մադրիդյան կոնֆերանսի հեղինակի կողմից ներկայացված՝ հանցագործ գործողությունների ընդունումը, հեղինակի տեսակետի համա-

¹⁹ Raphael Lemkin, Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation – Analysis of Government – Proposals for Redress, (Washington, D.C.: Carnegie Endowment for International Peace, 1944), p. 79.

²⁰ Նույն տեղում, էջ 91:

ծայն, կփակեր գործողությունների մեծ դաշտը, որոնք տեղի են ունեցել Առանցքի երկրների անդամների կողմից:²¹

1945թ. ապրիլին դաշնակից երկրները համաձայնեցրին պատերազմական հանցագործների դատավարության հիմնական սկզբունքները: ԱՄՆ-ի գերագույն դատարանի դատավոր Ռոբերտ Ջեքսոնը նշանակվեց ամերիկյան պատվիրակության ղեկավար 1945թ. օգոստոսին տեղի ունեցած Լոնդոնի կոնֆերանսում, որտեղ դաշնակիցները վերջապես պայմանավորվեցին Միջազգային ռազմական դատարանի կանոնադրության հարցում: Կանոնադրությունում սահմանվում էին երեք տարբեր հանցագործություններ, որոնք պետք է քննվեին՝ խաղաղության դեմ ուղղված հանցագործություններ, պատերազմական հանցագործություններ և մարդկության դեմ ուղղված հանցագործություններ²²: Ճիշտ է՝ կանոնադրության մեջ չէր օգտագործվում Ռաֆայել Լեմկինի «Յեղասպանություն» (Genocide) բառը, սակայն առաջին անգամ կոդիֆիկացվում էր «մարդկության դեմ ուղղված հանցագործությունը»:

Լեմկինը միացավ Նյուրնբերգյան դատավարության պատերազմական հանցագործներին մեղադրանք ներկայացնող ամերիկյան անձնակազմին և դարձավ ամերիկյան գլխավոր դատախազ Ջեքսոնի իրավախորհրդատուն: Լեմկինը հույս ուներ, որ «ցեղասպանություն» հասկացությունը կընդգրկվի հիմնական պատերազմական հանցագործների դեմ մեղադրական եզրակացությունում²³: Լեմկինի հաջողությունը լիակատար չէր. չնայած՝ եզրույթն օգտագործվում էր մեղադրական եզրակացությունների և դատավարության ավարտական

փաստարկումների մեջ, սակայն «Յեղասպանությունը» չէր ճանաչվում որպես առանձին սահմանված հանցագործություն: Լեմկինին անհանգստացնում էր ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի, Մեծ Բրիտանիայի նվիրվածությունը պետության ինքնիշխանության գաղափարին, քանի որ նրանք կասկածի տակ չէին դնում ներքին գործերում Գերմանիայի բացարձակ իշխանության հարցը նախքան պատերազմը²⁴: Այնուամենայնիվ, միջազգային բնույթի առաջին փաստաթուղթը, որում օգտագործվում էր «ցեղասպանություն» (Genocide) եզրույթը, 1945թ. հոկտեմբերի 18-ի՝ Նյուրնբերգի միջազգային ռազմական դատարանի մեղադրական եզրակացությունն²⁵ էր գերմանական հիմնական հանցագործների դեմ, ովքեր կանգած էին Նյուրնբերգի ռազմական տրիբունալի առաջ:

1946թ. «American Scholar» ամսագրում հրատարակված «Յեղասպանություն» (Genocide) վերնագրով և ցեղասպանության հանցագործության խնդրի հետազոտությանը նվիրված իր հոդվածում Ռաֆայել Լեմկինը, անդրադառնալով նացիստների կողմից Եվրոպայում հրեաների և մյուս ազգերի նկատմամբ իրականացրած ցեղասպանությանը, ներկայացնում է ցեղասպանությունների պատմական օրինակներ. «Ակնհայտ է՝ գերմանական փորձն ամենից վաղ, կանխամտածված և մանրակրկիտ է, բայց պատմությունը մեզ տրամադրել է ամբողջական ազգերի, էթնիկ և կրոնական խմբերի ոչնչացման այլ օրինակներ: Կան, օրինակ՝ Կարթագենի ոչնչացումը, կրոնական խմբավորումների ոչնչացումն իսլամական և խաչակրաց արշավանքների պատերազմների ընթացքում, արբիզոյցիների և վալդենսների կոտորածները, և ավելի վերջերս՝ հայերի կոտորածները»²⁶:

²¹ Նույն տեղում:

²² Charter of the International Military Tribunal - Annex to the Agreement for the prosecution and punishment of the major war criminals of the European Axis ("London Agreement"), (<http://www.refworld.org/docid/3ae6b39614.html>)

²³ Daniel Marc Segesser & Myriam Gessler (2005): Raphael Lemkin and the international debate on the punishment of war crimes (1919–1948), Journal of Genocide Research, 7:4, p.463

²⁴ Dan Eshet, նշվ. աշխ., p. 30.

²⁵ Նացիստական առաջնորդների նյուրնբերգյան դատավարության 3 մեղադրական եզրակացություններում նշվում էր. «Նրանք (ամբաստանյալները) իրականացրել են կանխամտածված և համակարգված ցեղասպանություն, այսինքն՝ ռասայական և ազգային խմբերի ոչնչացում, ընդդեմ օկուպացված տարածքների քաղաքացիական բնակչության, որպեսզի ոչնչացնեն կոնկրետ ռասաների և դասային պատկանելության մարդկանց խմբերին և ազգային, կրոնական խմբերին, մասնավորապես՝ հրեաներին, լեհերին, գնչուներին և մյուսներին:

²⁶ Raphael Lemkin, Genocide, American Scholar, Volume 15, no. 2 (April 1946), p. 227. (<http://www.preventgenocide.org/lemkin/americanscholar1946.htm>)

Լեմկինը Հայոց ցեղասպանությունը ներկայացնում է որպես ցեղասպանություն հանցագործության իրականացման նախավերջին օրինակը:

Իր այս հոդվածում Լեմկինն ուշադրություն է հրավիրում այն խնդրին, թե ինչպես ինքն ստեղծեց «Ցեղասպանություն» (Genocide) եզրույթը, և ինչպես է դա սահմանում: Հոդվածում նա, նախ, հարց է բարձրացնում, թե կարո՞ղ է արդյոք զանգվածային սպանությունը համարժեք անուն լինել այդ երևույթը (ցեղասպանությունը) նկարագրելու համար, ապա ներկայացնում իր կարծիքը, որ չի կարող համարժեք լինել, քանի որ իր նշանակության մեջ չի ներառում հանցագործության դրդապատճառները, հատկապես՝ երբ դրանք հիմնվում են ռասայական, ազգային կամ կրոնական համոզմունքների վրա: Լեմկինը ոչ համարժեք է համարում նաև «Ապազգայնացում» (denationalization) եզրույթի կիրառումը (Լեմկինը «Ապազգայնացում» եզրույթը բնորոշում է, թե դա հասկացվում է որպես ազգին ոչնչացնելու և մշակութային ինքնությունը վերացնելու փորձ), քանի որ դա չի նշանակում կենսաբանական ոչնչացում, իսկ մյուս կողմից՝ այդ եզրույթն օգտագործվում է քաղաքացիությունից զրկելու գործողության իմաստով: Լեմկինը հավելում է, որ որոշ հեղինակներ, ընդհանուր եզրույթ օգտագործելու փոխարեն, կիրառում են այնպիսի եզրույթներ, որոնք արտահայտում են միայն ազգերի և ռասաների ոչնչացման հասկացության ֆունկցիոնալ ասպեկտները: Այսպես՝ նա անհամարժեք է համարում նաև «Գերմանիզացիա» (Germanization), «Իտալյանիզացիա» (Italianization), «Մագուարիզացիա» (Magyarization) եզրույթները²⁷:

Այս հոդվածում Ռաֆայել Լեմկինը սահմանում է ցեղասպանությունը որպես միջազգային հանցագործություն. «Ցեղասպանությունը հանցագործություն է՝ ոչնչացնելու ազգային, ռասայական կամ կրոնական խմբերին: Ոչ գործնական է ցեղասպանությունն ազգային հանցագործություն համարելը, քանի որ իր բնույթով այն կատարվում է պետության կամ հզոր խմբերի կողմից, որոնք ունեն պետության

աջակցությունը: Պետությունը երբեք քրեական գործ չի հարուցում կամ սատարում է ինքնին: Իր իրավական, բարոյական և մարդասիրական բնույթով դա պետք է համարվի միջազգային հանցագործություն»²⁸:

Լեմկինը նշում է, որ եղել են բազմաթիվ դեպքեր, երբ պետություններն արտահայտել են իրենց մտահոգությունն այլ պետության քաղաքացիների նկատմամբ վարվեցողության վերաբերյալ, ապա ներկայացնում համապատասխան օրինակներ. «ԱՄՆ-ը հանդիմանեց ցարական կառավարությանը, ինչպես նաև Ռուսիայի կառավարությանը դաժան ջարդեր հրահրելու և թույլ տալու համար: Դիվանագիտական գործողություն եղավ նաև ի պաշտպանություն հույների և հայերի, երբ նրանք կոտորվում էին թուրքերի կողմից...»²⁹:

Նյուրնբերգի դատավարությունից հետո Լեմկինն իր ջանքերն ուղղեց ՄԱԿ Գլխավոր Ասամբլեայի նիստին ցեղասպանությունը դատապարտող միջազգային փաստաթղթի ստեղծման գործին: Լեմկինը ներկայացրեց ցեղասպանության կոնվենցիայի բանաձևի նախագիծ: 1946թ. դեկտեմբերի 11-ին ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունում է թիվ 96 բանաձևը, որի ընդունման համար նիստ էր հրավիրել ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը, կազմելու համար միջազգային պայմանագիր, որը կպարտադրի պետություններին կանխել և պատժել ցեղասպանական գործողությունների համար: Բանաձևի համաձայն՝ ՄԱԿ-ի ԳԱ-ն հաստատում էր, որ ցեղասպանությունը միջազգային իրավական հանցագործություն է: Բանաձևում նշվում էր. «Ցեղասպանությունն ամբողջ մարդկային խմբի գոյության իրավունքի ժխտումն է, քանի որ սպանությունը մարդկային էակների ապրելու իրավունքի ժխտումն է, ինչպես մարդկային խոցի գոյության ժխտումն է... և հակասում է բարոյական օրենքներին և ՄԱԿ-ի ոգուն ու նպատակներին: Գլխավոր ասամբլեան, հետևաբար, պնդում է, որ ցեղասպանությունը ոճիր է՝ միջազգային իրավունքի համաձայն... Անկախ այն հանգամանքից, թե հանցագործությունը կատարվել է կրոնական,

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում:

²⁹ Նույն տեղում, էջ 228:

ռասայական, քաղաքական կամ այլ հիմքերով, դա պատժելի է»³⁰:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Տրիգվե Լին խնդրեց Լեմկինին պատրաստել ցեղասպանության կոնվենցիայի նախագիծ: Նախագծի մշակումը Լեմկինի, Ֆրանսիացի իրավաբան Դոնադյե դը Վաբրի և ռումինացի իրավական փորձագետ Վեսպասիան Պելլայի կողմից տեղի ունեցավ 1947թ. ապրիլ-մայիս ամիսներին: Լեմկինը ձգտում էր բացառել քաղաքական խմբերին վերաբերող հարցի ընդգրկումը նախագծի մեջ՝ վախենալով, որ միջազգային անհամաձայնությունը կվտանգի պայմանագիրը: Նա լրբինգ արեց պայմանագիրը ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի Փարիզի նստաշրջանում, սակայն հանդիպեց խոչընդոտների: Հատկապես զգալի առարկություններ եղան նախագծի՝ մշակությանը ցեղասպանությանը վերաբերող հոդվածի վերաբերյալ³¹:

Նախագիծը 1948թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ներկայացվեց ՄԱԿ-ի ԳԱ-ին: Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիայի տեքստն ընդունվեց ՄԱԿ-ի ԳԱ-ի կողմից 1948թ. դեկտեմբերի 9-ին (Կոնվենցիան ուժի մեջ մտավ 1951թ. հունվարի 12-ին): Տվյալ կոնվենցիայի հիմնական նպատակն էր հաստատել այն փաստը, որ ցեղասպանությունը, միջազգային իրավունքի համաձայն, համարվում է հանցագործություն: Կոնվենցիայում տրվում էր ցեղասպանության միջազգայնորեն ճանաչված սահմանումը, որը ներառվեց շատ երկրների ազգային քրեական օրենսդրությունների մեջ:

Փաստաթղթի 2-րդ հոդվածում, մասնավորապես, նշվում է, որ ցեղասպանությունը նշանակում է հետևյալ գործողություններից ցանկացածը՝ կատարված ազգային, էթնիկական, ցեղական կամ կրոնական որևէ խմբի, որպես այդպիսին, լրիվ կամ մասնակի ոչնչացման մտադրությամբ. (ա) այդ խմբի անդամների սպանությունը, (բ) այդ խմբի անդամներին մարմնական լուրջ վնասվածքներ կամ մտա-

վոր վնաս պատճառելը, (գ) որևէ խմբի համար կյանքի այնպիսի պայմանների միտումնավոր ստեղծումը, որոնք ուղղված են նրա լրիվ կամ մասնակի ֆիզիկական ոչնչացմանը, (դ) այդ խմբի միջավայրում մանկածնությունը կանխելուն միտված միջոցների իրականացումը, (ե) երեխաների բռնի փոխանցումը մարդկային մի խմբից մյուսին³²: *Ընդ որում՝ բավարար է վերը նշվածներից անգամ մեկ գործողության առկայությունը, և կարելի է պնդել ցեղասպանության իրագործման մասին:*

Նշենք, որ կոնվենցիայում տեղ գտած ցեղասպանության՝ որպես միջազգային հանցագործության բոլոր բաղադրիչները համընկնում են այն գործողությունների հետ, որոնք իրականացվել են Օսմանյան իշխանությունների կողմից հայերի նկատմամբ: Այս իմաստով՝ կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված ցեղասպանության իրագործման համար հիմք հանդիսացող բոլոր 5 գործողությունները առկա էին Հայոց ցեղասպանության իրագործման պարագայում:

Հայոց ցեղասպանության դատապարտման խնդրի շուրջ Լեմկինի անհանգստությունը հանգեցրեց այն արդյունքին, որ նա իր առջև հստակ նպատակ դրեց հասնել, որ Թուրքիան լինի վավերացնող առաջին երկրներից: Լեմկինը գիտակցում էր, որ խոչընդոտների է հանդիպելու այս հարցում. «Իմ մտքում հասունացել էր համարձակ ծրագիր, որ Թուրքիան լինի կոնվենցիան 20 առաջին վավերացնողների թվում: Դա քավություն կլինի հայերի ցեղասպանության համար: Սակայն ինչպե՞ս հասնել դրան... Թուրքերը հպարտանում են իրենց հանրապետական կառավարման ձևով և առաջադեմ գաղափարներով, որոնք օգնեցին նրանց փոխել Օսմանյան կայսրության կառավարումը: Ցեղասպանության կոնվենցիան պետք է դրվի սոցիալական և միջազգային առաջընթացի շրջանակներում: Ես գիտեի, որ, սակայն, այս խոսակցության երկու կողմն ստիպված են լինելու խուսափել մի առարկայի հիշատակումից, թեև դա միշտ կլինի նրանց

³⁰ United Nations General Assembly Resolution 96 of 11 December 1946, (<https://documents-dds-ny.un.org/doc/RESOLUTION/GEN/NR0/033/47/IMG/NR003347.pdf>).

³¹ Encyclopedia of Genocide and Crimes Against Humanity, Dinah L. Shelton, vol. 2, p.625.

³² Ցեղասպանության հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիա, 1948թ. դեկտեմբերի 9 (http://www.un.am/res/UN%20Treaties/III_1.pdf).

գիտակցության մեջ՝ հայերը»³³, – գրում է Լեմկինը:

Ամփոփելով՝ նշենք հետևյալ եզրակացությունները.

- Պատմության ընթացքում ցեղասպանությունների անարգել իրագործման դեպքերը և, հատկապես՝ Հայոց ցեղասպանության իրագործումն ու դրա համար պատասխանատու երիտթուրք ղեկավարների անպատիժ մնալու հանգամանքը եղան հիմնական իրադարձությունները, որոնք Ռաֆայել Լեմկինին մղեցին, որպեսզի նա 1933թ. Մադրիդի կոնֆերանսում ներկայացնի ցեղասպանության կոնվենցիա ստեղծելու և ցեղասպանական գործողությունները որպես հանցագործություն սահմանելու վերաբերյալ իր առաջարկները: Լեմկինի առաջարկները պայմանավորված էին նաև այն մտավախությամբ, որ այն դեպքերը, որոնք տեղի ունեցան Օսմանյան կայսրությունում 1915թ., կարող են կրկնվել այս Եվրոպայում նացիստների կողմից, ինչի նախադրյալները կային:
- Ռաֆայել Լեմկինի կողմից «Առանցքի իշխանությունն օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ «ցեղասպանություն» (Genocide) եզրույթի ստեղծումը եղավ այն իրողության հետևանքը, որ 1933թ. Մադրիդի կոնֆերանսում նրա՝ «բարբարոսություն» և «վանդալիզմ» հանցագործությունների վերաբերյալ առաջարկները, որոնք գլխավորապես պայմանավորված էին Հայոց ցեղասպանության

նության իրագործման և երիտթուրք հանցագործների անպատիժ մնալու հանգամանքների հետ, մերժվեցին: «Ցեղասպանություն» (Genocide) եզրույթի ստեղծումը կարելի է համարել Լեմկինի 1933թ. առաջարկների տրամաբանական զարգացումը, որի դեպքում հաշվի էին առնվել ինչպես Հայոց ցեղասպանությունը, այնպես էլ նացիստական Գերմանիայի կողմից հրեաների և մյուս ազգերի նկատմամբ ցեղասպանության իրագործումը:

- «Ցեղասպանություն» եզրույթի ստեղծելու փնտրտուքում Ռաֆայել Լեմկինն անբավարար համարեց բոլոր այն եզրույթները, որոնք մինչ այդ գոյություն ունեին և թերի էին ցեղասպանության բնորոշումը տալու հարցում:
- Ցեղասպանություն հանցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին կոնվենցիան, որի նախագիծը կազմելու գործում մեծ դեր է ունեցել Ռաֆայել Լեմկինը, սահմանում էր ցեղասպանությունը որպես միջազգային հանցագործություն, իսկ կոնվենցիայի 2-րդ հոդվածում նշված՝ ցեղասպանության իրագործման համար հիմք հանդիսացող բոլոր 5 գործողությունները առկա էին Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակ, ինչը փաստում է այն մասին, որ կոնվենցիան կազմելիս ցեղասպանության դասական օրինակ է դիտարկվել հենց Հայոց ցեղասպանությունը:



³³ Encyclopedia of genocide, Israel W Charny, Institut on the Holocaust and Genocide, Jerusalem, 1999, p. 79.

ՌՈՄԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ միջազգային իրավունք մասնագիտացման մագիստրոս

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԶԵՎԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դիվանագիտական պաշտպանության ինստիտուտն արտասահմանում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների պաշտպանության տարածված և արդյունավետ միջոցներից է: Միջազգային իրավունքի շրջանակում պետությունը պատասխանատվություն է կրում իր անօրինական գործողության կամ անգործության հետևանքով օտարերկրացուն պատճառված վնասի համար: Դիվանագիտական պաշտպանությունը տուժող անձի քաղաքացիության երկրի կողմից իրականացվող ընթացակարգ է, որն ուղղված է տվյալ անձի պաշտպանությունն ապահովելուն և միջազգային հակաիրավական արարքի հետևանքով պատճառված վնասի համար փոխհատուցում ստանալուն¹:

Սակայն դիվանագիտական պաշտպանություն իրականացնելու տեսանկյունից միջազգային հանրությունը դեռևս բախվում է մի շարք խնդիրների: Մասնավորապես՝ երբեմն շփոթություն է առաջանում այնպիսի եզրույթների մեկնաբանության տեսանկյունից, ինչպիսիք են դիվանագիտական գործողություն, հյուպատոսական օժանդակություն, դիվանագիտական պաշտպանություն:

Որոշ տեսաբանների շրջանակներում էլ հակասություններ են առաջացել՝ ընդհանրապես դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի արդյունավետության հետ կապված: Հիմնվելով այն փաստի վրա, որ ժամանակակից միջազգային իրավունքը մարդու իրավունքների պաշտպանության շրջանակներում պարտավորեցնում է պետություններին հավասար

պաշտպանություն տրամադրել ինչպես սեփական քաղաքացիներին, այնպես էլ օտարերկրացիներին, այդ տեսաբանները պնդում են, որ դիվանագիտական պաշտպանության ինստիտուտն իրեն սպառել է:

Ժամանակակից միջազգային իրավունքում դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի կայացման հարցում էական նշանակություն է ունեցել ՄԱԿ-ի միջազգային իրավունքի հանձնաժողովի կողմից երկրորդ ընթերցմամբ 2006թ. ընդունված «Դիվանագիտական պաշտպանության վերաբերյալ հոդվածների նախագիծը», որում տեղ գտած հոդվածների նախագծերն ու դրանց վերաբերյալ մեկնաբանությունները փորձ են անում համակարգել մինչ այդ միջազգային իրավունքում դիվանագիտական պաշտպանության վերաբերյալ գործող սովորության նորմերը: 19 հոդվածից բաղկացած «Դիվանագիտական պաշտպանության վերաբերյալ հոդվածների նախագիծ» 1-ին հոդվածում տրվում է դիվանագիտական պաշտպանության սահմանումը, մասնավորապես՝

Հոդված 1²

Սույն հոդվածների նախագծի նպատակների համար դիվանագիտական պաշտպանությունը մի պետության կողմից մեկ այլ պետությանը դիվանագիտական գործողության կամ խաղաղ կարգավորման այլ միջոցներով ուղղվող պատասխանատվության կոչ է՝ վերջինիս միջազգային հակաիրավական արարքի հետևանքով առաջին պետության քաղաքացի հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական ան-

● ՕՐԻՆԱԿԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ, № 96 2016

¹ S՛n ԵՋԵԳՈԴՆԻԿ ԿՈՄԻՏՏԻԻ ՄԵՋԴՆԱՐՈԴՈՒՄԻ ԴՐԱՎԱ – Доклад Комиссии международного права Генеральной Ассамблеи о работе ее пятьдесят восьмой сессии, Дипломатическая защита, 2006 A/CN.4/SER.A/2006/Add.1 (Part 2) <http://legal.un.org/docs/index.asp?path=../ilc/reports/2006/russian/chp4.pdf&lang=EFSRAC&referer=http://legal.un.org/ilc/reports/2006/>

² S՛n Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.

ծին պատճառված վնասի համար՝ հետապնդելով նմանատիպ պատասխանատվության իրագործման նպատակ:

Պետք է նշել, որ շատ դատական որոշումներ տարբերակում են «դիվանագիտական գործողությունը» «դատական գործընթացներից»,³ երբ մեկնաբանում են այն գործողությունների շրջանակը, որոնք կարող են կիրառվել պետության կողմից դիվանագիտական պաշտպանության դիմելիս: Նման տարբերակում առաջին անգամ հստակ նշվել է Միջազգային արդարադատության մշտական դատարանի կողմից Panevezys-Saldutiskis Railway⁴ դատական գործում: Նույն մեկնաբանությունը հետագայում Արդարադատության միջազգային դատարանի կողմից կրկնվել է մի շարք գործերում, ինչպես, օրինակ՝ Nottebohm նախադեպում⁵: «Դիվանագիտական պաշտպանության վերաբերյալ հոդվածների նախագծի» հոդված 1-ը պահպանում է այս մոտեցումը և, առաջ անցնելով՝ դատավարական գործընթացները դասակարգում է «խաղաղ կարգավորման այլ միջոցների ներքո»⁶:

«Դիվանագիտական գործողություն» եզրույթը ներառում է մի պետության կողմից մեկ այլ պետությանն իր տեսակետների և մտահոգությունների մասին տեղեկացնելու բոլոր օրինական գործընթացները՝ ներառյալ բողոքարկում, հետաքննություն անցկացնելու պահանջ կամ վեճի կարգավորման նպատակով բանակցությունների անցկացում: «Խաղաղ կարգավորման այլ միջոցներ» արտահայտությունն ընդգրկում է վեճի իրավական կարգավորման բոլոր ձևերը՝ բանակցությունից, միջնորդությունից և հաշտեցումից սկսած, մինչև վեճի արբիտրաժային կամ դատական կարգավորում: Ինչ վերաբերում է ուժի կիրառմանը,

որն արգելված է ՄԱԿ-ի Կանոնադրության հոդված 2-րդի 4-րդ մասով, պետք է նշել, որ դա թույլատրելի մեթոդ է դիվանագիտական պաշտպանության իրավունքի կիրարկման համար: Դիվանագիտական պաշտպանությունը չի ընդգրկում նաև դեմարշները կամ դիվանագիտական այն գործողությունները, որոնք չեն ներառում մյուս պետության իրավական պատասխանատվության հարցերը, ինչպիսիք են, օրինակ՝ ոչ պաշտոնական պահանջները⁸:

Հաճախ կառավարություններն արտասահմանում իրենց քաղաքացու անունից ձեռնարկում են գործողություններ, որոնք հիմնված չեն որևէ միջազգային պարտավորության նկատմամբ պահանջի վրա և չեն ընդգրկվում պաշտպանության հայեցակարգում: Վ. Կառլ Գեքը իր մեկնաբանությամբ պարզ է դարձնում, որ այն հայցերը, որոնց հիմքում ընկած չէ իրավունքի պահանջը, չեն համարվում դիվանագիտական պաշտպանություն, մասնավորապես.

«Դիվանագիտական և հյուպատոսական այն գործողությունները, որոնք ուղղված են նստավայր պետությունից իրենց քաղաքացիների համար փոխզիջումների կամ պետական պայմանավորվածությունների ձեռքբերմանը կամ էլ որևէ ազատազրկված քաղաքացու համար իրավական պաշտպանության շուրջ պայմանավորվածությունների ձեռքբերմանը, չեն ընդգրկվում այս իմաստով դիվանագիտական պաշտպանության մեջ: Դրանք սովորաբար ո՛չ ուղղված են մյուս պետության դեմ, ո՛չ էլ հիմնվում են իրավունքի իրական կամ ենթադրյալ խախտման վրա»⁹:

Այս համատեքստում պետք է նշել, որ դիվանագիտական պաշտպանությունը տարբերվում է հյուպատոսական օժանդակությունից: Ինչպես նշում է Ջ. Դուգարդը դիվանագիտա-

³ Տե՛ս նույն տեղում:

⁴ Տե՛ս The Panevezys-Saldutiskis Railway Case, Estonia v. Lithuania, 1939.

⁵ Տե՛ս DIPLOMATIC PROTECTION- First report on diplomatic protection, by Mr. John R. Dugard, Special Rapporteur/ DOCUMENT A/CN.4/506 and Add. 1, 2000, էջ 217:

⁶ Տե՛ս Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.

⁷ Տե՛ս ЕЖЕГОДНИК КОМИССИИ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА – Доклад Комиссии международного права Генеральной Ассамблеи о работе ее пятьдесят восьмой сессии, Дипломатическая защита, 2006 A/CN.4/SER.A/2006/Add.1 (Part 2) <http://legal.un.org/docs/index.asp?path=../ilc/reports/2006/russian/chp4.pdf&lang=EFSRAC&referer=http://legal.un.org/ilc/reports/2006/>

⁸ Տե՛ս Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.

⁹ Տե՛ս DIPLOMATIC PROTECTION- First report on diplomatic protection, by Mr. John R. Dugard, Special Rapporteur/ DOCUMENT A/CN.4/506 and Add. 1, 2000, էջ 217:

կան պաշտպանության վերաբերյալ իր զեկույցում՝ «գործողություն» եզրույթի ոչ ճիշտ մեկնաբանության հետևանքով շատ տեսաբաններ, դիվանագիտական պաշտպանություն ասելով՝ ներառում են նաև հյուպատոսական օժանդակությունը¹⁰:

Այս երկու ինստիտուտն էլ գործում են ի շահ քաղաքացու, սակայն դրանց միջև առկա են էական տարբերություններ մի քանի ասպեկտով: 1963թ. ընդունված հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի¹¹ 5-րդ հոդվածը մասնավորեցնում է հյուպատոսական անձնակազմի գործառույթները, որոնց թվում նշվում է նստավայր պետությունում միջազգային իրավունքով թույլատրելի սահմաններում հավատարմագրող պետության և վերջինիս քաղաքացիների, այդ թվում՝ ինչպես անհատների, այնպես էլ կորպորատիվ մարմինների, շահերի պաշտպանության, ինչպես նաև ուղարկող պետության քաղաքացիներին օգնելու և աջակցելու մասին: Հոդված 5-րդի (i) մասով մեկնաբանվում է հյուպատոսության կողմից ի շահ քաղաքացու տրամադրվող իրավական օգնության հնարավորությունը¹²: Իսկ նույն կոնվենցիայի 55-րդ հոդվածը արգելում է հյուպատոսական մարմիններին միջամտել նստավայր պետության ներքին գործերին¹³: Հետևաբար, այս դրույթները համադրելով, պետք է ընդգծել, որ հյուպատոսները առանձնահատուկ դեր ունեն քաղաքացիներին օգնություն տրամադրելու հարցում, մասնավորապես՝ այցելելով ձերբակալվածներին, գտնելով փաստաբանների և կապ հաստատելով տեղական իշխանությունների հետ: Սակայն հյուպատոսական մարմիններն իրավասություն չունեն միջամտելու դատավարական գործընթացներին կամ նստավայր պետության ներքին գործերին, տալ իրավական

խորհրդատվություն կամ հետաքննություն իրականացնել հանցագործության շուրջ¹⁴: Դիվանագիտական պաշտպանությունը և հյուպատոսական օժանդակությունը միմյանցից տարբերվում են նաև այնքանով, որ դիվանագիտական պաշտպանությունն իրականացվում է պետության ներկայացուցիչների կողմից, ովքեր գործում են պետության շահերի շրջանակներում, մինչդեռ հյուպատոսական օժանդակությունը տրամադրվում է հյուպատոսական ծառայողների կողմից, ովքեր ներկայացնում են անհատի շահերը՝ գործելով «Հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ Վիեննայի կոնվենցիայի» շրջանակներում¹⁵: Բացի այդ՝ այս երկու ինստիտուտի տարբերակման համար գոյություն ունի մեկ ուրիշ տարր ևս: Հյուպատոսական օժանդակությունը հաճախ ունի կանխարգելիչ բնույթ և իրականացվում է նախքան տեղական դատական միջոցների սպառումը կամ նույնիսկ նախքան միջազգային հակաիրավական արարքի ի հայտ գալը: Այս հանգամանքը թույլ է տալիս հյուպատոսական օժանդակությանն ունենալ ոչ այնքան պաշտոնական բնույթ և միևնույն ժամանակ՝ լինել հյուրընկալ պետության կողմից առավել նախընտրելի¹⁶: Փաստորեն, դիվանագիտական պաշտպանությունն ունի «ուղղիչ» բնույթ և ուղղված է միջազգային հակաիրավական գործողության պարագայում տուժած քաղաքացուն օգնություն տրամադրելուն, իսկ հյուպատոսական օժանդակությունն ուղղված է սեփական քաղաքացու նկատմամբ միջազգային հակաիրավական արարքի կանխարգելմանը¹⁷:

«Դիվանագիտական պաշտպանության վերաբերյալ հոդվածների նախագծի» մեկնաբանություններում նշվում է նաև, որ դրանք չեն կարգավորում որևէ միջազգային կազմակերպության կողմից գործակալին պաշտպանու-

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

¹¹ Տե՛ս Vienna Convention on Consular Relations - VCCR, 1963/ United Nations, Treaty Series, vol. 596, p. 261:

¹² Տե՛ս Vienna Convention on Consular Relations - VCCR, 1963/ United Nations, Treaty Series, vol. 596, p. 261

¹³ Տե՛ս Vienna Convention on Consular Relations - VCCR, 1963/ United Nations, Treaty Series, vol. 596, p. 261:

¹⁴ Տե՛ս MALCOLM N. SHAW-INTERNATIONAL LAW/Fifth edition, Cambridge University press,2003, էջ 688:

¹⁵ Տե՛ս Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.

¹⁶ Տե՛ս A.M.H. Vermeer-Künzli- The Protection of Individuals by means of Diplomatic Protection, 2007, էջ 84:

¹⁷ Տե՛ս ЕЖЕГОДНИК КОМИССИИ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА – Доклад Комиссии международного права Генеральной Ассамблеи о работе ее пятьдесят восьмой сессии, Дипломатическая защита, 2006 A/CN.4/SER.A/2006/Add.1 (Part 2) <http://legal.un.org/docs/index.asp?path=../ilc/reports/2006/russian/chp4.pdf&lang=EFSRAC&referer=http://legal.un.org/ilc/reports/2006/>

թյուն տրամադրելու վերաբերյալ հարցերը, ինչը ներկայացվում է որպես «գործառույթային պաշտպանություն»¹⁸: Չնայած գործառույթային պաշտպանության և դիվանագիտական պաշտպանության միջև առկա է զգալի նմանություն, սակայն գոյություն ունեն նաև կարևոր տարբերություններ: Դիվանագիտական պաշտպանությունն ավանդաբար համարվում է պետության ֆիզիկական կամ իրավաբանական անձին հասցված վնասի փոխհատուցման համար նախատեսված մեխանիզմ, ինչը հիմնվում է այն սկզբունքի վրա, որ այդ անձին հասցված վնասը ուղղակիորեն համարվում է վերջինիս քաղաքացիության պետությանը հասցված վնաս: Իսկ գործառույթային պաշտպանությունը միջազգային կազմակերպության արդյունավետ գործունեության խթանմանն ուղղված ինստիտուտ է, որն իրականացվում է վերջինիս գործակալների նկատմամբ հարգանքի ապահովման ճանապարհով:

Դիվանագիտական պաշտպանությունը ներառում է հիմնականում այն քաղաքացիների պաշտպանությունը, ովքեր ընդգրկված չեն պետության անունից իրականացվող միջազգային պաշտոնեական «բիզնեսում»¹⁹: Այդ պաշտոնյաները պաշտպանվում են միջազգային իրավունքի այլ նորմերով և միջոցներով, ինչպիսիք են «Դիվանագիտական հարաբերությունների վերաբերյալ 1961թ. Վիեննայի կոնվենցիան»²⁰ և 1963թ. «Հյուպատոսական հարաբերությունների վերաբերյալ Վիեննայի կոնվենցիան»²¹:

«Դիվանագիտական պաշտպանության վերաբերյալ հողվածների նախագծի» երկրորդ հողվածի սահմանումից պարզ է դառնում, որ պետությունն է նախաձեռնում և իրականացնում դիվանագիտական պաշտպանությունը, որ պետությունն է այն մարմինը, ում տրվել է հայց ներկայացնելու իրավունքը: Պետության կողմից դիվանագիտական պաշտպանություն իրականացնելը չի գտնվում որևէ պարտավորության շրջանակում: Պետության ներքին օ-

րենսդրությամբ կարող է պետությանը պարտադրվել իրականացնել դիվանագիտական պաշտպանություն, սակայն միջազգային իրավունքը նման որևէ պարտավորություն չի սահմանում²²: Այս մոտեցումը պարզորոշ կերպով նշվել է Արդարադատության միջազգային դատարանի կողմից Barcelona Traction դատական նախադեպում, մասնավորապես. «Միջազգային իրավունքով թույլատրելի սահմաններում պետությունը կարող է իրականացնել դիվանագիտական պաշտպանություն այն միջոցներով և այն մակարդակում, որ ինքն է նախընտրում՝ համարելով, թե դա իր սեփական իրավունքն է, որ պետությունն իրացնում է: Նույնիսկ եթե ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում անունից գործում է պետությունը, համարում է, թե իր իրավունքները պատշաճ կերպով պաշտպանված չեն, միևնույն է՝ չունի միջազգային իրավունքով սահմանված որևէ միջոց: Միակ միջոցը, որ նրան մնում է, ներպետական օրենսդրությանը դիմելն է, եթե միջոցները հասանելի են՝ նպատակ ունենալով ընթացք տալ գործին կամ ստանալ փոխհատուցում: Պետությունը պետք է դիտարկել որպես միակ դատավոր, ով որոշում է, թե արդյոք իր պաշտպանությունը կտրամադրվի, թե ինչ չափով կտրամադրվի և երբ կդադարի: Այս առումով՝ պետությունը պահպանում է հայեցողական իշխանությունը, ինչի իրականացումը սահմանվում է՝ քաղաքական կամ այլ բնույթի նկատառումներից ելնելով՝ բացառությամբ մասնավոր դեպքերի»²³:

Ներկայումս ներպետական օրենսդրությամբ և որոշ դատական նախադեպերով խթանվում է այն տեսակետը, որ այս հարցում որոշակի պարտավորություն է ընկնում պետության վրա՝ պաշտպանելու իր քաղաքացիներին արտասահմանում, երբ վերջիններս բախվում են մարդու իրավունքների կոպիտ խախտումների: Համապատասխանաբար, 19-րդ հողվածի նախագիծը սահմանում է, որ այն պետությունը, որն իրավասու է իրականացնել դիվանագիտական

¹⁸ Stü Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.
¹⁹ Stü Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.
²⁰ Stü Vienna Convention on Diplomatic Relations – VCDR, 1961/ United Nations, Treaty Series, vol. 500, p. 95.
²¹ Stü Vienna Convention on Consular Relations – VCCR, 1963/ United Nations, Treaty Series, vol. 596, p. 261.
²² Stü Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.
²³ Stü Case concerning the Barcelona Traction Light and Power Company Limited (Belgium v. Spain), ICJ, 1970.

պաշտպանություն, «պետք է... պատշաճ ուշադրություն հատկացնի դիվանագիտական պաշտպանություն իրականացնելու անհրաժեշտությանը, հատկապես՝ երբ հասցվել է զգալի վնաս»²⁴:

Ինչ վերաբերում է դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի և մարդու իրավունքների պաշտպանության համակարգի հարաբերակցությանը՝ պետք է նշել, որ այս հարցում առկա են բազմաբնույթ և հակասական տեսակետներ: Շատ տեսաբանների կարծիքով՝ դիվանագիտական պաշտպանության ինստիտուտը հնացել է²⁵: Նման կարծիքի ձևավորման համար հիմք են հանդիսացել միջազգային իրավունքի մի շարք էական փոփոխություններ: Նախկինում անհատներին միջազգային իրավունքում հատկացված էր չնչին դեր, և վերջիններս չէին համարվում միջազգային իրավունքի սուբյեկտներ: Միջազգային իրավունքի հիմնական սուբյեկտները պետություններն էին, որոնք էլ դիվանագիտական պաշտպանության միջոցով իրականացնում էին իրենց քաղաքացիների պաշտպանությունը: Ժամանակի ընթացքում մարդու իրավունքների վերաբերյալ այս ընդունված մոտեցումը փոխվեց: Հատկապես նացիստական ռեժիմի սարսափներից հետո միջազգային հանրությունը հանգեց այն տեսակետին, որ մարդու իրավունքների պաշտպանությունը չպետք է մնա բացառապես պետության հայեցողության ներքո²⁶: Որպես արդյունք՝ ներկայումս միջազգային իրավունքում ձևավորվել է մարդու իրավունքների պաշտ-

պանության բավականին կոռ համակարգ, որը թույլ է տալիս անհատներին պաշտպանել իրենց իրավունքները ոչ միայն օտար պետության, այլև սեփական պետության դեմ: Այնուամենայնիվ, մարդու իրավունքների պաշտպանության համակարգի զարգացումը չի կարող հանգեցնել դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի անարդյունավետությանը, քանի որ այս երկու համակարգի միջև առկա են զգալի տարբերություններ²⁷: Այդ տարբերություններից գլխավորն այն է, որ դիվանագիտական պաշտպանության իրավունքը պատկանում է բացառապես պետությանը²⁸, իսկ մարդու իրավունքները հիմնականում անհատական իրավունքներ են:

Ամփոփելով՝ պետք է նշել, որ դիվանագիտական պաշտպանությունը մարդու իրավունքների պաշտպանության կարևորագույն մեխանիզմ է:

Այն հանգամանքը, որ ժամանակակից միջազգային իրավունքը ֆիզիկական և իրավաբանական անձանց ավելի շատ հնարավորություններ է ընձեռում հատուկ ստեղծված միջազգային դատական աստիճաններ անձամբ դիմելու համար, չի փոխում դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի էությունը: Մարդու իրավունքների և օտարերկրյա ներդրումների պաշտպանության միջազգային մեխանիզմները լրացուցիչ միջոցներ են, որոնք զգալի չափով ընդլայնում են վերոնշյալ անձանց իրավունքների և օրինական շահերի ապահովման հնարավորությունները:



²⁴ Տե՛ս Draft Articles on Diplomatic Protection with commentaries, UN 2006.
²⁵ Տե՛ս John Dugard-Diplomatic Protection <http://legal.un.org/avl/ha/adp/adp.html>
²⁶ Տե՛ս A.M.H. Vermeer-Künzli – The Protection of Individuals by means of Diplomatic Protection, 2007, էջ 180:
²⁷ Տե՛ս Д. С. Гвоздецкий – Соотношение института дипломатической защиты с иными формами защиты прав индивида [file:///C:/Users/user/Downloads/sootnoshenie-instituta-diplomaticheskoy-zaschity-s-inymi-formami-zaschity-prav-individa%20\(1\).pdf](file:///C:/Users/user/Downloads/sootnoshenie-instituta-diplomaticheskoy-zaschity-s-inymi-formami-zaschity-prav-individa%20(1).pdf)
²⁸ Տե՛ս М. С. Волкова – Дипломатическая защита как элемент международного стандарта в вопросах правового регулирования положения иностранцев/ЭЛЕКТРОННОЕ ПРИЛОЖЕНИЕ К «РОССИЙСКОМУ ЮРИДИЧЕСКОМУ ЖУРНАЛУ» 2/2012.

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի «Գլաձոր» համալսարանի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՉԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱԿԱՆ ՀԻՄՆԱՆԵՂԻՐՆԵՐԸ**

Մարդու իրավունքներն ու ազատությունները նրա սուբյեկտիվ, այսինքն՝ անհատական իրավունքներն ու ազատություններն են: Սակայն դրանք իրականացվում են հասարակության մեջ, առավելապես, համատեղ կոլեկտիվ հիմունքներով, ինչը պահանջում է մարդկանց համագործակցություն: Այդ իրավունքների իրականացումն ուղեկցվում է մարդու պատասխանատվությամբ, իրավունքների հնարավոր սահմանափակումներով, որոնք որոշվում են ինչպես ազատության չափով ու սահմաններով, այնպես էլ իրավունքի կողմից սահմանված մարդասիրության, համերաշխության ու բարոյականության սկզբունքներով:

Անհատական ազատության ցանկացած սահմանադրական սահմանափակում ենթադրում է, որ դա պայմանավորված է պաշտպանության ենթակա հասարակական արժեքների բախման հնարավորությամբ: Ուստի նման սահմանափակումը ճանաչվում է իրավունքի կողմից: Այս սկզբունքը համապարփակ է: Սահմանափակումն ուղղված է բախվող սահմանադրաիրավական արժեքների միջև համապատասխան ներդաշնակության ապահովմանը:

Իրավունքների և ազատությունների սահմանափակումներին վերաբերող դրույթն ամենից առաջ ձևակերպված է «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 29-րդ հոդվածում, որտեղ ասված է. «Իր իրավունքներն ու ազատություններն իրականացնելիս յուրաքանչյուր ոք ենթակա է միմիայն սահմանափակումների, որոնք սահմանված են օրենքով, բացառապես ուրիշների իրավունքների և ազատությունների պատշաճ ճանաչումն ու հար-

գանքը երաշխավորելու ժողովրդավարական հասարակությունում բարոյականության հասարակական կարգի և ընդհանուր բարեկեցության արդարացի պահանջներն ապահովելու նպատակով»:¹

Իրավունքների և ազատությունների սահմանափակում նախատեսված է նաև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրում, որը հռչակում է՝ պետական սահմաններից անկախ, բանավոր, գրավոր կամ մամուլի միջոցով մարդու կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը: Դաշնագրի 19-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ վերոհիշյալ իրավունքից օգտվելն առաջացնում է հատուկ պարտականություններ և պատասխանատվություն: Հետևաբար՝ դա ենթակա է որոշ սահմանափակումների, որոնք, սակայն, պետք է սահմանվեն օրենքով և լինեն անհրաժեշտ՝

ա) այլ անձանց իրավունքներն ու հեղինակությունը հարգելու համար.

բ) պետական անվտանգության, կամ հասարակական կարգի, կամ բնակչության առողջության կամ բարոյականության պաշտպանության համար²:

Բացի դրանից՝ դաշնագրով արգելվում է պատերազմի ցանկացած քարոզչություն, ազգային, ռասայական, կրոնական ատելություն պարունակող որևէ ելույթ, որը խտրականության, թշնամանքի կամ բռնության սադրանք է (տե՛ս նույն դաշնագրի 20 հոդվածը):

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակում նախատեսված է նաև «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնա-

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

¹ Տե՛ս Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր: Պաշտոնական հայերեն թարգմանություն: Փաստաթղթերի ժողովածու: Գիրք Ա., Երևան, 2001, էջ 20:

² Տե՛ս նույն տեղը, էջ 76:

գրով՝ միայն այնքանով, որքանով դա համատեղելի է նշված իրավունքների բնույթի հետ և բացառապես նպատակ է հետապնդում ժողովրդավարական հասարակության մեջ ապահովել ընդհանուր բարօրությունը (հոդվ. 4):

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 11-րդ հոդվածը հռչակում է, որ իրավունքներն ու ազատությունները ենթակա են սահմանափակումների միայն օրենքով նախատեսված դեպքում և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակության մեջ՝ ի շահ պետական անվտանգության ու հասարակական անդորրի, անկարգություններն ու հանցագործությունները կանխելու, այլ անձանց առողջությունն ու բարոյականությունը կամ նրանց իրավունքներն ու ազատությունները պաշտպանելու նպատակով:³

Մարդու իրավունքների ու ազատությունների սահմանափակումների վերաբերյալ նշված միջազգային իրավական փաստաթղթերի դրույթներն ուղղակիորեն արտացոլված են պետությունների ազգային օրենսդրություններում: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 76-րդ հոդվածում ամրագրված է. «Արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, բացառությամբ Սահմանադրության 23-26-րդ, 28-30-րդ, 35-37-րդ հոդվածներում, 38-րդ հոդվածի 1-ին մասում, 5-րդ մասի 1-ին նախադասությունում և 8-րդ մասում, 52-րդ հոդվածում, 55-րդ հոդվածի 2-րդ մասում, 56-րդ, 61-րդ, 63-72-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես կասեցվել կամ լրացուցիչ սահմանափակումների ենթարկվել միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակը՝ արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնված միջազգային պարտավորությունների շրջանակներում»:

Սահմանադրական նորմերի վերը շարադրված վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել մարդու և քաղաքացու իրավունքների

ու ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմունքները, տալու դրանց համալիր սահմանումը և բացահայտելու դրանց էությունն ու նշանակությունը:

Ինչ վերաբերում է իրավունքների ու ազատությունների սահմանափակումների կոնկրետ սահմանադրական հիմունքների (սկզբունքների) բացահայտմանը և ձևակերպմանը՝ այստեղ հեղինակը հիմնվում է Լ.Դ. Վոնոգինի կարծիքի վրա, ով նշում էր. «Այս կամ այլ կանոնը սկզբունք հայտարարելն ունի կամ օբյեկտիվ բնույթ (եթե հաստատականապես նշանակալի է և գրված է պետության հիմնական օրենքի մեկ կամ մի քանի նորմերում), կամ սուբյեկտիվ բնույթ, այսինքն՝ Սահմանադրության կամ օրենքի ամբողջ բովանդակությունը հաշվի առնելով և դրա հիման վրա ձևակերպված»:⁴

Հաշվի առնելով վերը շարադրված նկատառումները՝ հեղինակը համարում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների սահմանափակումների սահմանադրական հիմունքներին կարելի է վերագրել հիմնական օրենքի այն նորմերը, որոնք ամրագրում են հետևյալ հիմնարար հիմքերը՝

ա) մարդուն, նրա իրավունքներն ու ազատությունները որպես բարձրագույն արժեք ճանաչելը և անձի արժանապատվությունը հարգելը,

բ) սահմանափակումների համապատասխանությունը սահմանադրորեն ամրագրված նպատակներին,

գ) սահմանափակումների համաչափությունը սահմանադրական նպատակներին,

դ) իրավունքների ու ազատությունների սահմանափակումների հավասարությունը,

ե) իրավունքների ու ազատությունների խտրական սահմանափակման արգելքը,

զ) սահմանափակումներն ամրագրելու որոշակի իրավական ձևի պահանջ (սահմանափակումները պետք է սահմանվեն բացառապես օրենքով),

է) իրավունքների ու ազատությունների սահմանափակումների համապատասխանությունը միջազգային չափորոշիչներին:

³ Տե՛ս նույն տեղը, էջ 29:

⁴ Տե՛ս Воеводин Л. Д., Юридический статус личности в России. М., 1997, էջ 59:

Բովանդակային և ձևական-իրավաբանական կողմը հաշվի առնելով՝ իրավունքների ու ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմունքների նշանակությունը, հեղինակի կարծիքով, այն է, որ դրանք՝

1. անհատի ազատության սահմանները (չափը) որոշող ընդհանուր գաղափարի (հայեցակարգի) կենտրոնացված իրավաբանական արտահայտումն են:

2. Անձնական (անհատական) և հասարակական (իրապարակային) շահերը համաձայնեցնելու մեխանիզմի մաս են և անհրաժեշտ հավասարակշռություն են ամրագրում առանձին անհատի շահերի և այլ անհատների, հասարակության և պետության շահերի միջև:

3. Նորմատիվ են:

Ինչպես նշում է Վ.Տ. Կաբիշևը՝ չնայած սահմանադրական սկզբունքները «...չեն ձևակերպում որոշակի իրավունքներ և պարտականություններ, դրանք ղեկավար հրահանգ են պետական մարմիններին, պաշտոնատար անձանց, քաղաքացիներին՝ կատարելու սահմանադրական նորմերի բոլոր ցուցումները: Սահմանադրական սկզբունքները պահպանում են նորմերի՝ որպես հասարակական հարաբերություններն անմիջապես կարգավորողի, հատկանիշները»:⁵

4. Հրամայական նորմ են և, հետևաբար՝ պարտադիր կարգով պետք է հաշվի առնվեն իրավաստեղծ սուբյեկտների, նախ և առաջ՝ օրենսդիրների կողմից, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կարգավորող նորմատիվ-իրավական ակտերը մշակելիս:

Սահմանափակումների ընդհանուր պայմանների (հիմունքների) սահմանադրական ամրագրումը հաղորդում է դրանց հրամայականության, իրավական պահանջի հատկանիշներ և, հետևաբար՝ այդ սկզբունքները պետք է դրվեն օրենսդրության հիմքում, սահմանափակումների հնարավորությունը, դրանց բնույթը օրենսդրի կողմից պետք է որոշվի ոչ թե կամա-

յականորեն, այլ ՀՀ Սահմանադրությանը համապատասխան:

Ֆ. Լասսալը համարում էր, որ պետության մեջ կարող են գոյություն ունենալ և «...արձակվել միայն այն օրենքները, որոնք խստորեն կհամաձայնեցվեն սահմանադրության՝ որպես Հիմնական Օրենքի, սկզբունքների հետ»⁶: Առանց այդ սկզբունքների իմացության և հասկացության՝ բացառվում է օրենքներ և ենթաօրենսդրական ակտեր ստեղծելու ուղղությամբ որևէ հաջողակ գործունեություն. չէ՛ որ մարդու իրավունքներին ու ազատություններին նվիրված սահմանադրական նորմերի գործողությունը նպատակին է հասնում՝ միայն փոխկապակցված, ընթացիկ օրենսդրության հետ համալիր լինելով»:

Եթե ՀՀ Սահմանադրության 2-րդ գլուխը դիտարկենք որպես ՀՀ-ում մարդու իրավունքների գործունեության ծրագիր, ապա դրա խնդիրն է օրենքներ ընդունելու միջոցով ապահովել ժողովրդավարական, իրավական պետության մեջ անձի առավել հնարավոր ազատության աստիճանը, և այդ նպատակին հասնելը ենթադրում է օրենսդրի կողմից իր օրենսդրական գործունեության մեջ անվերապահ հաշվի առնել սահմանադրության այն պահանջները, որոնք վերաբերում են իրավունքների ու ազատությունների սահմանափակումներին: Իրավունքների ու ազատությունների վերաբերյալ սահմանադրական ցուցումների իրագործումը «...իրականացվում է նպատակների, սկզբունքների, խնդիրների և այլնի տեսքով ձևակերպված կարևորագույն սահմանադրական նորմերի ձևափոխության շնորհիվ առաջացած ճյուղային նորմերի բովանդակության նորացման պահանջների՝ իրավունքի այլ ճյուղերի վրա «պրոյեկցիայի» միջոցով»:⁷ Օրենքը մշակելիս օրենսդրի առջև կանգնած բազմաթիվ խնդիրների շարքում, ինչպես նշում է Դ.Ա. Կերիմովը, կարևորագույններից է՝ «...նախագծվող օրենքի տվյալ իրավական համակարգի ընդհանուր առմամբ և, նախ և առաջ՝ Սահմանադրության հետ կապի, համապատասխանու-

⁵ Տե՛ս Конституционное право России: Лекции / Отв. ред. В.Т. Кабышев, Е.В. Колесников. Саратов, 1995, էջ 35-36:

⁶ Տե՛ս Лассаль Ф. О сущности Конституции. СПб., 1906, էջ 7:

⁷ Տե՛ս Зражевская Т.Д. Реализация конституционного законодательства. Проблемы теории и практики. / Автореф. дисс. ...докт. юрид. наук. Саратов, 2000, էջ 3:

թյան և փոխգործության որոշումը...»⁸ Հետևաբար՝ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների բնագավառում օրենսդրության կատարելագործության կարևորագույն պայմաններից մեկն է ընդունվող օրենքների բովանդակության՝ «Սահմանադրության հիմքում դրված սահմանափակումների սկզբունքներին համապատասխանության ապահովումը:

5. Միջոց են պետական իշխանության սահմանները սահմանելու համար: Նման սահմանների՝ որպես Սահմանադրության և սահմանադրականության էական հատկանիշի ճանաչումը ներկայումս հանրաճանաչ է: Իրավունքների ու ազատությունների սահմանափակումների պայմանների ամրագրումը հենց Հիմնական Օրենքում ծառայում է որպես օրենսդիր և գործադիր իշխանության այլ կերպ չսահմանափակված լիազորությունների սահմանափակում, այսինքն՝ պետք է ապահովվի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը պետության կամայականությունից, ապահովվի նրա ազատությունը հասարակության շրջանակներում: Վ.Ի. Լաֆիտսկու արտահայտությամբ՝ միշտ անհրաժեշտ է հիշել. «Սահմանադրությունը չի օժտում իշխանությամբ, այլ՝ սահմանափակում»⁹:

6. Իրավաբանական հիմք են ճյուղային իրավունքի սահմանափակումների համար, այսինքն՝ կանխորոշում են ճյուղային սահմանափակումների մասնավոր հիմքերը և կոնկրետ եղանակները: Ճյուղային սահմանափակումների բոլոր տեսակները և եղանակները պետք է դիտարկվեն որպես սահմանափակումների սահմանադրական հիմունքների մասնավոր դեպքեր և պետք է ուղղվեն իրավունքի (ազատության) յուրաքանչյուր կոնկրետ օգտագործման համաձայնեցմանը տարբեր անհատների կամ պետության օրինական շահերի հետ, դրանց համատեղ գոյության առումով: Հենց սկզբունքներում է մարմնավորվում իրավական նորմերում առկա գլխավորը, վճռորոշը:

7. Ունեն բարձրագույն իրավաբանական ուժ, հետևաբար՝ բոլոր մյուս (ճյուղային) սահմանափակումները պետք է համապատասխանեն

ներն դրանց: Սահմանադրական սկզբունքներին ճյուղային այս կամ այն նորմերի հակասելու դեպքում վերջիններս ենթակա են վերափոխման կամ բեկանման:

8. Պետք է օգտագործվեն նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրականության նկատմամբ վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից՝ դրանք իրավունքի համակարգից վերացնելու նպատակով, այսինքն՝ հիմունքները հանդես են գալիս որպես նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրականության չափանիշներ:

9. Իրացվում են մարդու և քաղաքացու կոնկրետ սահմանադրական իրավունքների իրականացման ընթացքում:

10. Բնութագրվում են առանձնահատուկ հաստատունությամբ կայունությամբ, քանի որ ամրագրված են Սահմանադրությամբ:

Հարկ է նաև խոսել իրավունքների ու ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմունքների և «Սահմանադրությամբ առանձին իրավունքների ու ազատությունների կոնկրետ սահմանափակումների հարաբերակցության մասին:

«Սահմանադրական դատարանն իր որոշումներում բազմիցս անդրադարձել է իրավունքների սահմանափակումների հիմնախնդրին: Մասնավորապես՝ 4 հոկտեմբերի 2006 թվականի ՍԴՈ-649 որոշման մեջ (կետ X) արձանագրել է. «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11 հոդվածի 2-րդ մասի դրույթների վերլուծությունը վկայում է, որ իրավակիրառական պրակտիկայում իրականում առկա է ոչ թե իրավունքների համաչափ սահմանափակման, այլ սահմանադրորեն սահմանափակման ոչ ենթակա (խոսքը չի վերաբերում ռազմական կամ արտակարգ իրավիճակներին) առանձին իրավունքների արգելափակման իրողությունը: 2006թ. դեկտեմբերի 22-ի ՍԴՈ-669 որոշմամբ (կետ 6) Սահմանադրական դատարանը նշել է, որ «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթների շրջանակներում օրենսդիր կողմից ոչ միայն հետևողականություն չի դրսևորվել սահմանադրական դրույթների օրենսդրական

⁸ Տե՛ս Керимов Д. А. Законодательная техника. Научно-методическое и учебное пособие. М., 1998, էջ 8:

⁹ Տե՛ս Лафитский В. И., Основы конституционного строя США. М.: 1998, էջ 94:

երաշխավորումն ապահովելու ուղղությամբ, այլև օրենքում տեղ են գտել նորմեր, որոնք շեղվում են սահմանադրական կարգավորման տրամաբանությունից: Գործող օրենքով առավել հեշտացվել են կուսակցությունների գործունեության արգելման ընթացակարգերը՝ շրջանցելով Սահմանադրական դատարանը: Փաստորեն, Սահմանադրությամբ նախատեսված՝ միավորումների (կուսակցությունների) ազատության սահմանափակումները «Կուսակցությունների մասին» ՀՀ օրենքում դառնում են լուծարման ճանապարհով այդ ազատության արգելափակման միջոց: 2007թ. հունվարի 16-ի ՍԴՈ-673 որոշման մեջ (մաս 9) Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքի 12 հոդվածի վիճարկվող նորմի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 14, 15 հոդվածների, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 15, 16 հոդվածների նորմերի համադրումից ակնհայտ է անձի իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության իրարամերժ երաշխավորումը, մասնավորապես՝ պետական մարմնի իրավական ակտի բողոքարկման իրավունքի, իրացման մասով: Այսպիսի դեպքերում իրավական համակարգում առկա միմյանց հակասող նորմերը ոչ միայն չեն ապահովում հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորում, այլև սահմանափակում են ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված անձի իրավունքների պաշտպանության իրավական հնարավորությունները, այդ թվում՝ դատական կարգով, որպես արդյունք՝ չեն բխում ՀՀ միջազգային պարտավորություններից, հետևաբար՝ նաև ՀՀ Սահմանադրության 43 հոդվածի (2-րդ մաս) պահանջներից: 2007թ. փետրվարի 7-ի ՍԴՈ-677 որոշման մեջ (մաս 5) դատարանն ընդգծել է, որ Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և

պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար:

Այդ հիմնախնդրին Սահմանադրական դատարանն անդրադարձել է նաև 2008թ. ապրիլի 15-ի ՍԴՈ-751 (մաս 9) և 2008թ. հոկտեմբերի 8-ի ՍԴՈ-765 (մաս 16) որոշումներում: Իսկ 2008թ. հոկտեմբերի 14-ի ՍԴՈ-766 որոշման մեջ (մաս 6) Սահմանադրական դատարանն իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ պետական իշխանությունն իրականացվում է գործառույթ-ինստիտուտ-իրավասություն եռամիասնական սահմանադրական ներդաշնակության հիման վրա՝ մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրորեն նախատեսված սահմանափակումների շրջանակներում: Այդ եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառույթն իրականացնելու համար, ինչը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց շնորհիվ երաշխավորվում են պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը: Դրանցից դուրս իրականացվող գործողությունները ճանաչվում են որպես հակաիրավական:

Վերոշարադրյալից կարելի է եզրակացնել, որ՝

1) մարդու իրավունքների և ազատությունների ինչպես սահմանման, այնպես էլ սահմանափակման առումով պետությունների ազգային օրենսդրությունը պետք է համապատասխանի միջազգային իրավունքի նորմերին.

2) չկան բացարձակ իրավունքներ և ազատություններ, դրանք կարող են սահմանափակվել միայն օրենքի հիման վրա, միջազգային իրավունքի պահանջներին և չափանիշներին համապատասխան, պետությունների Սահմանադրություններով նախատեսված շրջանակներում և դրանցով հստակ սահմանված նպատակներին համապատասխան:

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակմանն ուղղված միջոցառումները պետք է անհրաժեշտ լինեն օրինա-

կան նպատակին հասնելու համար: Եթե այդ նպատակին հասնելու ճանապարհին կան մի քանի միջոց, ապա պետք է ընտրել դրանցից այնպիսինը, որից կարելի է ակնկալել նվազագույն ազդեցություն պաշտպանվող սահմանադրական բարիքների վրա:

3) Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հանգամանքներին, որպեսզի չոտնահարվեն սահմանադրական արժեքները:

4) Եթե Սահմանադրության համապատասխան որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակվում է, ապա պետք է սահմանափակվի բացառապես օրենքով, որը պետք է ունենա ընդհանուր բնույթ, այլ ո՛չ վերաբերի կոնկրետ դեպքի: Ընդ որում՝ օրենքում պետք է նշվի, թե ո՞ր իրավունքն է սահմանափակվում՝ ժամկետով կամ անժամկետ, հղում կատարվի Սահմանադրության համապատասխան հոդվածին: Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս

պետք է հաշվի առնվեն դրանց էությունն ու իմաստը:

5) Սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է իրականացվեն օրինական հիմքով: Էական սահմանափակումները պետք է նախատեսված լինեն հենց օրենքում: Բացառություն են լուրջ, անմիջական վտանգ պարունակող դեպքերը, որոնք չեն կարող կանխվել այլ միջոցներով:

6) Սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է արդարացված լինեն հասարակական շահերով կամ երրորդ անձանց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությամբ:

7) Սահմանադրական իրավունքների և ազատությունների սահմանափակումները պետք է համաչափ լինեն հանգամանքներին:

8) Սահմանադրական իրավունքների և ազատությունների առանցքային բովանդակությունը չի կարող փոփոխվել:



ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ,
 իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հանրային ծառայությունը, ինչպես ցանկացած սոցիալ-իրավական ինստիտուտ, շարունակ գտնվում է փոփոխման, զարգացման գործընթացում: Հանրային ծառայության համակարգում իրականացվող բարեփոխումների մեծ մասը թելադրված է պետական կառավարման նոր գաղափարախոսությամբ, որն ստացել է «նոր հանրային կառավարում» անվանումը (New Public Management)¹: Այդ բարեփոխումների կարևոր նպատակներից մեկը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է և բնակչության ու մասնավոր հատվածի կողմից իշխանության նկատմամբ վստահության ամրապնդումը²:

Հասարակական կյանքում ընթացող փոփոխություններն անհրաժեշտություն առաջացրին վերաիմաստավորելու հանրային ծառայությունը կանոնակարգող *իրավական և բարոյական նորմերը*: Այդ կարգավորիչների արդյունավետ փոխգործունեությամբ է պայմանավորված հասարակության անդամ հանդիսացող քաղաքացիների իրավագիտակցության, իրավական մշակույթի և օրինապահության մակարդակը: Պարզ է, որ, ինչպես և հասարակական գիտակցության այլ ոլորտներում, այնպես էլ հանրային ծառայության համակարգում, որպես վարքի և փոխհարաբերությունների կարգավորիչներ հանդես են գալիս *իրավունքը և բարոյականությունը*, որոնց ազդեցությունն իրականացվում է փոխհամաձայնեցված: Հետևապես՝ հանրային ծառայողների վարքագծի՝ հասարակության կողմից մշակված գնահատման բարոյական չափանիշները շատ առումներով որոշում են իրավական նորմերի բովանդակությունը:

Ժողովրդավարության հետագա զարգացումն անհնար կլինի, եթե կառավարման համակարգը հաշվի չառնի իշխանության ներկայացուցիչների մասին ժողովրդի պատկերացումները, հանրային ծառայողների, նրանց գործողությունների և որոշումների հասարակական գնահատականը և այլն: Ժողովրդավարության պայմաններում առանց հասարակական կարծիքի հետ հաշվի նստելու ուղղակի անհնար է պետական կառավարումը: Իշխանության և նրա ներկայացուցիչների ցածր բարոյական հեղինակությունը հասարակության ծայրահեղ անկայունության, նրա մասնատվածության, ներքին լարվածության գլխավոր պատճառներից մեկն է: Նման պայմաններում ոչ միայն շատ դժվար է որևէ լուրջ վերափոխում իրականացնել, այլև ցանկացած իրավիճակում չի բացառվում բացարձակ անկանխատեսելի արձագանք հասարակության կողմից:

Պետական կառավարման մարմիններում բարոյական մթնոլորտը, պատասխանատու պաշտոնյայի անփութությունը կարող են լրջորեն վարկաբեկել իշխանության ցանկացած բարի մտադրություն:

Հանրային ծառայողի էթիկայի վերլուծության կարևորությունը՝ որպես պետական կարգավորման և էթիկական կարգավորման կառուցակարգերի ձևավորման օբյեկտ, պայմանավորված է այն իրական խնդիրներով, որոնց ներկայումս բախվում է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունը, մասնավորապես՝ պաշտոնյաների ոչ արդյունավետ աշխատանքը, կոռուպցիոն ռիսկերի առկայությունը, հասարակության անվստահությունը

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

¹ Որոշ աղբյուրներում «New Public Management» թարգմանվում է որպես «նոր հանրային մենեջմենթ»:

² Տե՛ս Ս.Վ. Փրոնկին, Օ.Է. Սեդուխովա. Государственное управление зарубежных стран: учебное пособие /С.В.Пронкин, О.Е. Петрунина, 3-е изд., доп. и перераб., М., КДУ, 2007, с. 441.

պետական կառավարման մարմինների հանդեպ³:

Հասարակության վստահությունը հանրային ծառայողների նկատմամբ արդյունավետ պետական կառավարման հիմնարար պայման է: Հանրային ծառայողների վարքագծի բարոյական չափանիշները պետական կառավարման արդյունավետության և որակի վրա ազդող կարևորագույն գործոններ են:

Հանրային ծառայողների գործունեությունը կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերը միայն մասամբ են լուծում հանրային ծառայողների բարոյականության պահպանման խնդիրը: Ներկայումս միայն այդ կառուցակարգը բավարար չէ⁴:

Ֆրանսիացի հետազոտող Ժակ Շևալյեի կարծիքով՝ հանրային ծառայության համակարգը ծառայում է պետության իդեալականացված կերպարի ձևավորմանը՝ մտահոգված բացառապես իր ենթականների բարեկեցությամբ⁵:

Հանրային ծառայողների էթիկայի կանոնները սահմանում են վարքագծի որոշակի ոճ՝ դառնալով այն սկզբունքի երաշխավորը, որ մարդիկ ընդհանուր նպատակին հասնելու համար կարող են հենվել միմյանց վրա և խուսափել միջանձնային բախումներից: Էթիկայի կանոնները հիմնված են բարոյականության համընդհանուր սկզբունքների վրա և միտված են կարգավորելու մարդկանց վարվելակերպի, վարքագծի և փոխհարաբերությունների յուրահատկությունները:

Հանրային ծառայողների էթիկայի կանոնները սահմանված են մի շարք իրավական ակտերում, մասնավորապես՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածում,

«Ազգային Ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածում, ՀՀ դատական օրենսգրքի 87-90-րդ հոդվածներում և «ՀՀ դատավորի վարքագծի կանոններում»⁶ և այլն: Քաղաքացիական ծառայողների համար ներկայումս առանձին էթիկայի կանոններ սահմանված չեն⁷, ինչը նշանակում է, որ նրանց վրա տարածվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված էթիկայի կանոնները:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանրային ծառայողի և բարձրաստիճանի պաշտոնատար անձի էթիկայի կանոնները նորմերի համակարգ են, որոնք միտված են ապահովելու հանրային ծառայողի և բարձրաստիճանի պաշտոնատար անձի պատշաճ վարքագիծը, բացառելու հանրային և մասնավոր շահերի բախումը, ամրապնդելու հասարակության վստահությունը հանրային ինստիտուտների նկատմամբ: Այդ պահանջները վերաբերում են հանրային ծառայողի և բարձրաստիճանի պաշտոնատար անձի ինչպես լիազորությունների իրականացմանը, այնպես էլ ամենօրյա վարքագծին:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային ծառայողի և բարձրաստիճանի պաշտոնատար անձի էթիկայի կանոններն են՝

- 1) հարգել օրենքը և ենթարկվել օրենքին.
- 2) հարգել հանրության բարոյական նորմերը.
- 3) իր գործունեությամբ նպաստել իր զբաղեցրած պաշտոնի և իր ներկայացրած մարմնի նկատմամբ վստահության և հարգանքի ձևավորմանը.
- 4) ամենուրեք և ցանկացած գործունեու-

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

³ Տե՛ս նաև ՀՀ կառավարության 2014թ. ապրիլի 10-ի նիստի N 14 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած հանրային կառավարման համակարգում կոռուպցիայի դեմ պայքարի հայեցակարգ:
⁴ Տե՛ս նաև Атаманчук Г.В. Управление – фактор развития (размышления об управленческой деятельности) /Г.В. Атаманчук, М. ЗАО “Издательство “Экономика”, 2002, с. 126.
⁵ Տե՛ս Глазунова Н.И. Система государственного управления: Учебник для вузов, М., ЮНИТИ-ДАНА, 2002, с. 516.
⁶ Հաստատվել է ՀՀ դատավորների ընդհանուր ժողովի 2014թ. սեպտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության դատավորի վարքագծի կանոնները սահմանելու մասին» N 01-Ն որոշմամբ:
⁷ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2012թ. սեպտեմբերի 26-ի «Քաղաքացիական ծառայողների էթիկայի հանձնաժողովների ձևավորման, գործունեության կարգը և նրանց գործառույթները սահմանելու մասին» N 844-Ն որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2002թ. մայիսի 31-ի «Քաղաքացիական ծառայողի էթիկայի կանոնները հաստատելու մասին» N 13-Ն և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2004թ. դեկտեմբերի 1-ի «Էթիկայի հանձնաժողովների կանոնադրությունը հաստատելու մասին» N 1050-Ն որոշումները:

թյամբ զբաղվելիս դրսևորել իր պաշտոնին վայել վարքագիծ.

- 5) հարգալից վերաբերմունք ցուցաբերել բոլոր այն անձանց նկատմամբ, ում հետ շփվում է իր լիազորություններն իրականացնելիս.
- 6) բացառապես ծառայողական նպատակներով օգտագործել իր գործունեության առնչությամբ տրամադրված նյութատեխնիկական, ֆինանսական և տեղեկատվական միջոցները, պետական այլ գույքը և ծառայողական գաղտնիք պարունակող տեղեկատվությունը.
- 7) ձգտել կառավարել իր ներդրումներն այնպես, որ հնարավորինս նվազագույնի հասցվեն շահերի բախման իրավիճակները:

Ընդ որում՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի վարքագծի կանոնները սպառիչ չեն: Էթիկայի լրացուցիչ կանոններ և դրանց նկատմամբ հսկողության այլ մեխանիզմներ կարող են սահմանվել տվյալ ոլորտի առանձնահատկությունները կարգավորող օրենքներով:

Թվարկված էթիկայի կանոններն այն ընդհանուր կողմնորոշիչները և ուղղություններն են, որոնք նպատակաուղղված են ապահովելու հանրային ծառայության (որպես համակարգի) ամբողջականությունն ու կենսունակությունը և արտահայտում են նրա բարձրագույն արժեքները:

Այսպիսով՝ 2012թ. ուժի մեջ մտած «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով փորձ արվեց ընդհանրացնելու հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց վարքագծի (էթիկայի) կանոնների սահմանման պրակտիկան: Սակայն հարկ է նշել, որ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով հանրային ծառայողների և բարձրաստիճան պաշտոնատար անձանց համար սահմանված էթիկայի կանոնները լիարժեք չեն և իրենց

բովանդակությամբ չեն համապատասխանում ՏՀՀ-ի (Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն) կողմից հաստատված հանրային ծառայողների էթիկայի կանոնների ուղեցույցի պահանջներին: Բացի այդ՝ նշված դրույթներն իրենց էությամբ ոչ թե էթիկայի կանոններ են, այլ՝ ընդհանրական ու ոչ ամբողջական սկզբունքներ և ուղենիշներ:

Հանրային ծառայությունում, որտեղ հարաբերությունները կառուցվում են ենթակայության հիմքի վրա, շփման յուրաքանչյուր տեսակ ունի իր յուրահատկությունները և ենթարկվում է գործնականում իր ձևավորած էթիկայի կանոններին, որոնք ուղղորդված են դեպի պատիվն ու արժանապատվությունը՝ որպես բարձրագույն արժեքներ:

Արժեքներն առավել կարևոր նախապատվությունների համախումբ է՝ ընդունված կազմակերպության անդամների կողմից, որոնք հանձնարարվում են մարդկանց՝ որպես նրանց վարքագծի և գործողությունների կողմնորոշիչներ⁸:

Իր ժամանակի հայտնի սոցիոլոգ Պիտի-րիմ Սորոկինը պնդում էր. «Ընդ արժեքներն են յուրաքանչյուր մշակույթի հիմքը և հիմնաքարը»⁹:

Հանրային ծառայողի բարոյականությունը որոշվում է նաև հասարակական պահանջներով: Ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում էթիկայի կանոններին հետևելը ենթադրում է վերահսկողության հատուկ ընթացակարգ և մեթոդներ, որոնք սահմանվում են նաև էթիկայի կանոնակարգով:

Հանրային ծառայության բարոյականության ձևավորմանը նպաստող կառուցակարգերում առավել արդյունավետ է համարվում հանրային ծառայողների էթիկայի հատուկ մշակված կանոնակարգը, որն ընդամենը նմուշային է, այլ ոչ թե ընդունված օրինագիծ: Նմանատիպ կանոնակարգեր ընդունվել են Մեծ Բրիտանիայում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Իսպանիայում և այլ երկրներում:

Առաջարկվող կանոնակարգի նմուշային

⁸ Стѣи Глазунова Н.И. Государственное (административное) управление: учеб.-М.: ТК Велби, Изд-во Проспект, 2004, с. 307.

⁹ Стѣи Сорокин П.А. Человек. Цивилизация. Общество /Общ. ред., сост. и предисл. А.Ю. Согомонов: Пер. с англ., М., Политиздат, 1992. с. 429.

լինելը, առաջին հերթին, պայմանավորված է այն հանգամանքով, որ դրա հիմնական ուղղությունները, սկզբունքները, նորմերի բովանդակությունը, շարադրման ձևը կարող են նպաստել ՀՀ հանրային ծառայողների, սուբյեկտների, պետական մարմինների և գերատեսչությունների համար վարքագծի համապատասխան կանոնակարգի ձևավորմանը:

Ինչ վերաբերում է Ռուսաստանի դաշնությանը՝ Ռուսաստանի Դաշնության Նախագահին կից Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նախագահության կողմից 23.12.2010թ. որոշմամբ (արձանագրություն թիվ 21) հաստատվել է «Ռուսաստանի Դաշնության պետական ծառայողների և համայնքային ծառայողների էթիկայի և ծառայողական վարքագծի կանոնների» նմուշային օրենսգրքը: Դա մասնագիտական ծառայողական էթիկայի ընդհանուր սկզբունքների և ծառայողական վարքագծի հիմնական կանոնների ամբողջություն է, որոնցով պետք է ղեկավարվեն պետական և համայնքային ծառայողները՝ զբաղեցրած պաշտոնից անկախ¹⁰: Այդ նմուշային օրենսգրքի նպատակն է սահմանել պետական և համայնքային ծառայողների վարքագծի կանոններ, որոնք թույլ կտան արժանապատվորեն կատարել աշխատանքը, կնպաստեն պետական և համայնքային ծառայողների հեղինակության ամրապնդմանը, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ բնակչության վստահության ամրապնդմանը, կապահովեն պետական և համայնքային ծառայողների վարքագծի միասնական նորմեր:

Էթիկայի կանոնակարգը, ընդհանրապես, կառավարման կարևոր գործիք է, որը կարող է դրականորեն ձևավորել այս կամ այն կազմակերպության մշակույթը: Դա պետք է սահմանի տվյալ պետական մարմնի աշխատակազմի վարքագծի չափորոշիչները, որոնք կօգնեն լուծելու իրենց աշխատանքում հանդիպած էթիկական երկրնտրանքները: Շեշտը պետք է դրված լինի էթիկապես օրինակելի վարքագծի վրա, ծառայողները պետք է տեղեկացված լինեն նաև, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ կանոնակարգի խախտումը: Գործուն լինե-

լու համար կանոնակարգը չպետք է անորոշ սկզբունքներ պարունակի, իսկ արդյունավետության համար՝ չպետք է պատվիրված կամ պատվիրակված կանոնների ժողովածու լինի, այլ՝ մշակված լինի յուրաքանչյուր պետական կառավարման մարմնի ու նրա աշխատակազմի կողմից և ընդգրկի նրան բնորոշ պահանջներ: Բացի դրանից՝ կանոնակարգը պետք է նպաստի տվյալ մարմնում բարոյական մշակույթի ձևավորմանը:

Կարծում ենք՝ հանրային ծառայության գործունեության արդյունավետության տեսանկյունից անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր պետական մարմին (կազմակերպություն) ունենա իր էթիկայի (վարվելակերպի) կանոնակարգը, որը, մշակվելով որպես խորհրդարկական բնույթի փաստաթուղթ, թույլ կդնի ոչ միայն պետական մարմնի ղեկավարին, այլև բոլոր ծառայողներին մեկնաբանել ընդգրկվող հարցերի համալիրը: Ավելին՝ հակակոռուպցիոն ցանկացած ռազմավարության հաջողության առավել կարևոր նախապայմանը, անկասկած, իշխանության բարձրագույն մակարդակում համապատասխան կանոնները համարժեքորեն կիրառելու ուժեղ կամքն է և էթիկական վարքի հարցերում ղեկավարի դերի բացառիկ օրինակի ապահովումը:

Հանրային ծառայողների էթիկայի նորմերի սահմանված լինելը դեռևս չի նշանակում գործնականում դրանց պահպանում և կիրառում:

Էթիկայի կանոնակարգի արդյունավետության առաջին նախապայմանը բովանդակության պարզությունն է: Կանոնակարգի նորմերը պետք է հեշտ հասկանալի և իրագործելի լինեն համապատասխան թիրախային խմբի համար: Դրանք պետք է լինեն հստակ, հետևողական և համապարփակ: Հետևողականությունը նշանակում է, որ կանոնակարգը համահունչ է առկա օրենսդրությանը և ընթացակարգերին, իսկ հստակության նպատակն անորոշությունը նվազագույնի հասցնելն է: Կանոնագրքի արդյունավետությունը կարող է նվազել, եթե համարժեք կերպով չի արտացոլում տվյալ կազմակերպության մշակույթը: Այս համատեքս-

¹⁰ Стѣ Государственное и муниципальное управление: Учебник/Под ред. Н.И.Захарова., М., ИНФРА-М, 2014.– 288 с., 163-164 с.

տում խելամիտ չէ մի կառույցի էթիկայի կանոնակարգի պատճենումը մեկ այլ մարմնի կողմից:

Էթիկայի կանոնակարգի արդյունավետության հաջորդ գործոնն առնչվում է դրա իրականացման փուլին: Ուստի, վարվելակերպի կանոնագիրքը մշակելով, գործընթացը չի ավարտվում է, դա միայն առաջին քայլն է: Դրանից հետո անհրաժեշտ է կանոնագրքի՝ որպես կենսունակ փաստաթղթի, մասին աշխատակազմին տեղեկացնելու համար ճիշտ ու ներազդեցիկ ուղիներ գտնելը:

Հաշվի առնելով հանրային ծառայողների բարոյական խնդիրների կարգավորման կառուցակարգերի կատարելագործման անհրաժեշտությունը՝ ներկայացնում ենք հետևյալ դադողությունները.

1. ՀՀ հանրային ծառայողների բարոյական զարգացման կառավարման կարգավորիչ կառուցակարգերը չպետք է սահմանափակվեն չինովնիկների վարքագծի կանոնների և սկզբունքների իրավական բնույթի փաստաթղթերով. դրանք անհրաժեշտ է լրացնել այնպիսի ոչ իրավական կարգավորիչներով, ինչպիսիք են էթիկայի կանոնակարգերը, որոնք ունեն ոչ թե պարտադրող, այլ՝ խորհրդատվական բնույթ: Իրավական նորմերով ամրագրված են բարոյականության առանցքային պահանջներ, մինևույն ժամանակ՝ կարևոր դեր են խաղում պարզապես անձնական բարոյական կարգավորիչները, որոնցով պայմանավորված է հանրային ծառայողների ներքին շահադրդումը՝ իր մասնագիտական գործունեության փորձով պահպանել և փոխանցել բարոյական բարձր հատկանիշներ:

2. Էթիկայի ընդհանուր սկզբունքները և դրանցից բխող հանրային ծառայողների ծառայողական վարքագծի կանոնները (որոնք առկա են ՀՀ հանրային ծառայողների բարոյական զարգացման կառավարման այնպիսի տեխնոլոգիական կառուցակարգում, ինչպիսին է էթիկայի կանոնակարգը) առաջին հերթին պետք է արտացոլեն քաղաքացիների մեծամասնու-

թյան կողմից ընդունված պահանջները բարոյականության նկատմամբ:

3. Կազմակերպական կառուցակարգերի զարգացումն առաջին հերթին պահանջում է այնպիսի պետական կառավարման համակարգի ստեղծում, որը կունենա հանրային ծառայողների բարոյական կառավարման գործառույթներ, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ստեղծում, որոնք կարող են ազդել այդ գործընթացների վրա օրենսդրությամբ նախատեսված կարգով:

4. Ֆինանսատնտեսագիտական կառուցակարգերը ենթադրում են հանրային ծառայողների խրախուսման և պատժամիջոցների համակարգի կատարելագործում պաշտոնեական պարտականությունների բարեխիղճ կամ անբարեխիղճ կատարման համար, որոնք անհրաժեշտ են նորմերի խախտումները կանխարգելելու և պատշաճ բարոյականության սկզբունքներն ապահովելու համար:

5. ՀՀ հանրային ծառայողների բարոյական զարգացման կառավարման տեխնոլոգիական կառուցակարգերը կատարելագործման կարիք ունեն ուղղորդման և մասնագիտական սոցիալականացման, կրթական տեխնոլոգիաների զարգացման հաշվին, որոնք ուղղված են ծառայողական էթիկայի նորմերի և սկզբունքների ձևավորմանը. տեխնոլոգիաների զարգացում՝ ուղղված հանրային ծառայողների շահադրդմանը ծառայողական պարտականությունների բարեխիղճ կատարման նկատմամբ և կապված խրախուսանքների ու տույժերի արդյունավետ համակարգի կառուցման հետ:

6. ՀՀ հանրային ծառայողների բարոյական զարգացման կառավարման տեղեկատվական կառուցակարգերը պետք է պայմաններ ստեղծեն հանրային ծառայողների բարոյականության պարբերաբար մշտադիտարկման համար՝ հասարակական կարծիքի ուսումնասիրման և պետական-հասարակական հսկողության արդյունավետ համակարգի ներդրման միջոցով:

ՀՐԱՅՐ ԹՈՎՄԱՍՅԱՆ

ՀՀ Աժ աշխատակազմի ղեկավար – գլխավոր քարտուղար,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի դոկտորանտ

**ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(ՊՈՐՏՈՒԳԱԼԻԱ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ)**

Հոդվածում անդրադարձ է կատարվում Պորտուգալիայում և Հայաստանի Հանրապետությունում գործող կառավարման ձևերին, ցույց են տրվում դրանց նմանություններն ու տարբերությունները:

Բանալի բառեր. կառավարման կիսանախագահական համակարգ, կառավարման խորհրդարանական համակարգ, Հանրապետության Նախագահ, պառլամենտ, կառավարություն, կառավարության երկակի պատասխանատվություն:

ГРАЙР ТОВМАСЯН

Руководитель – генеральный секретарь аппарата НС РА,
кандидат юридических наук, доцент,
докторант академии государственного управления РА

**СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ФОРМ ПРАВЛЕНИЯ
(ПОРТУГАЛИЯ, РЕСПУБЛИКА АРМЕНИЯ)**

Статья относится к видам правления Португалии и Республики Армения, в ней показаны их сходства и различия.
Ключевые слова: полупрезидентская система правления, парламентская система правления, Президент Республики, парламент, правительство, двойная ответственность правительства.

HRAYR TOVMASYAN

The RA NA Chief of Staff – Secretary General,
PhD in Law, Associate Professor,
Postdoctoral Researcher of the Public Administration Academy of RA

**COMPARATIVE ANALYSIS OF FORMS OF GOVERNMENT
(PORTUGAL, REPUBLIC OF ARMENIA)**

The article discusses the forms of government in Portugal and the Republic of Armenia, the similarities and differences between them are shown.

Keywords: semi-presidential form of government, parliamentary form of government, President of the Republic, Parliament, Government, double responsibility of government.

* * *

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

ՎԱՐՍԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի
գրասենյակի ղեկավարի տեղակալ,
ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի ասպիրանտ,
Հայդելբերգի համալսարանի հրեագիտության
ինստիտուտի մագիստրանտ (Հայդելբերգ, Գերմանիա)

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐՆ
ԻՍՐԱՅԵԼԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հոդվածում ուսումնասիրվում է Իսրայելի պետությունում մարդու իրավունքների ճանաչման, ամրագրման ու պաշտպանության պատմական զարգացումը՝ Իսրայելի սահմանադրաիրավական զարգացումների համատեքստում:

Պատմական և սոցիալ-քաղաքական իրողությամբ թելադրված՝ մեկ միասնական Սահմանադրության, ինչպես նաև Մարդու իրավունքների հռչակագրի ընդունման անհնարինության պայմաններում Իսրայելի պետությունը որդեգրեց մարդու իրավունքների դատական ճանաչման ու ամրագրման ուղին: Աստիճանաբար գրեթե բոլոր մարդու իրավունքներն ու հիմնարար ազատություններն իրենց ամրագրումն ստացան դատական որոշումներում՝ կազմելով, այսպես կոչված, «իրավունքների դատական հռչակագիրը»: Այս իրավունքները, սակայն, «թույլ» իրավունքներ էին:

դրանց ուժով Իսրայելի գերագույն դատարանն իրավասու չէր անվավեր ճանաչելու մարդու իրավունքներին ակնհայտորեն հակասող ստատուտները:

Այս ոլորտում կարևորագույն փոփոխություններն արձանագրվեցին 1990-ական թվականների սկզբներին՝ Իսրայելի խորհրդարանի կողմից 1992թ. մարդու իրավունքների ոլորտում առաջին երկու Հիմնական օրենքների ընդունմամբ և դրանց հիման վրա Իսրայելի գերագույն դատարանի կողմից 1995թ. «Բանկ հա՛Միզրաֆի հա՛Մեուխադ» գործի շրջանակներում կայացված որոշմամբ: Մասնագիտական գրականության մեջ այս գործընթացները որակվեցին որպես «սահմանադրական հեղափոխություն»: Այսպես, մի կողմից, սահմանափակվեց Քնեսեթի՝ մարդու իրավունքները սահմանափակելու օրենսդրական իրավագործությունը և, մյուս կողմից՝ երաշխավորվեց դատական վերահսկողության իրականացումը՝ այդ սահմանափակումների պահպանումն ապահովելու նպատակով:

Նշված երկու Հիմնական օրենքների ընդունումից հետո Իսրայելի պետությունում այլևս որևէ Հիմնական օրենք չընդունվեց: Ստեղծված պայմաններում Իսրայելի գերագույն դատարանը որդեգրեց Հիմնական օրենքով երաշխավորված արժանապատվության իրավունքը լայն մեկնաբանելու պրակտիկան՝ դրա բաղկացուցիչ մաս համարելով մի շարք սոցիալ-տնտեսական իրավունքներ:

Այդուհանդերձ՝ արևմտյան ժողովրդավարություններում լայնորեն ճանաչված մի շարք իրավունքներ և ազատություններ, մասնավորապես՝ կրոնի և խղճի ազատությունը, օրենքի առջև բոլորի հավասարությունն Իսրայելի պետությունում մինչ օրս օրենսդրական ամրագրում չունեն: Հատկանշական է, որ, մեծ հաշվով՝ հենց այս իրավունքների օրենսդրական ամրագրման հարցն էր, որ ի սկզբանե անհնարին դարձրեց Իսրայելի պետությունում Սահմանադրության ընդունումը:

Բանալի բառեր. Իսրայելի իրավական համակարգ, մարդու իրավունք, հիմնարար ազատություն, հիմնական օրենք, սահմանադրական հեղափոխություն, պաշտպանված իրավունք, սահմանափակող դրույթ:

ВАРСЕР КАРАПЕТАН

Заместитель руководителя канцелярии общественного Защитника Палаты адвокатов Республики Армения, Аспирант юридического факультета ЕГУ, Магистр института иудаики университета Гейдельберга (Гейдельберг, Германия)

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ ПРАВОВОГО РЕГУЛИРОВАНИЯ ПРАВ ЧЕЛОВЕКА В КОНТЕКСТЕ КОНСТИТУЦИОННЫХ РАЗВИТИЙ ИЗРАИЛЯ

В статье изучается историческое развитие признания, закрепления и защиты прав человека в государстве Израиль в контексте конституционных развитий Израиля.

Продиктованное историческими и социально-политическими реалиями, в ситуации невозможности принятия одной единой Конституции, так же как и Декларации по правам человека, государство Израиль избрало путь судебного признания и закрепления прав человека. Постепенно почти все права и основные свободы человека получили свое закрепление в судебных решениях, образуя так называемую «Судебную декларацию прав». Однако эти права были «слабыми», так как в силу этих законов верховный суд Израиля не мог признать недействительными статуты, заведомо противоречащие правам человека.

В этой области наиважнейшие изменения произошли в начале 1990-ых годов – в 1992-ом году принятием парламентом Израиля двух Основных законов в области прав человека и, основываясь на них, принятием в 1995-ом году Верховным судом Израиля решения в рамках дела «Банк ха-Мирзахи ха-Меухад». В профессиональной литературе этот процесс назван как «конституционная революция». Итак, с одной стороны были ограничены законодательные полномочия Кнессета по ограничению прав человека и с другой стороны – была гарантирована реализация судебного надзора с целью соблюдения обеспечения этих ограничений.

После принятия обозначенных двух Основных законов в государстве Израиль не было принято ни одного Основного закона. В сложившейся ситуации Верховный суд Израиля начал применять практику широкого комментария, гарантированного Основным законом права на достоинство, считая его основной частью ряда социально-экономических прав.

Тем не менее, широко признанный в западных демократиях ряд прав и свобод, в частности, свобода религии и совести, равенство всех перед законом, в Израиле не имеют законодательного закрепления. Примечательно, что, по большому счету, проблема законодательного закрепления именно этих прав сделало невозможным принятие Конституции в государстве Израиль.

Ключевые слова: правовая система Израиля, права человека, основные свободы, основной закон, конституционная революция, защищенное право, ограничивающее положение.

VARSER KARAPETYAN

Deputy Head at the Public Defender Office of the Chamber of Advocates,
PhD student at the YSU, Law Department
MA, University of Heidelberg, Hochschule for Jewish Studies
(Heidelberg, Germany)

ISSUES OF THE LEGAL REGULATION OF HUMAN RIGHTS IN THE CONTEXT OF ISRAELI CONSTITUTIONAL DEVELOPMENTS

The article studies historical development of recognition, adoption and protection of human rights in the State of Israel in the context of the Israeli constitutional developments.

Due to historical and socio-political reality, facing the inability to enact one codified Constitution, as well as Human Rights Declaration, the State of Israel adopted the way of judicial recognition and adoption of human rights. Step by step almost all the human rights and fundamental freedoms were adopted in court decisions, thus constituting, so called, 'judicial bill of rights'. These were, however, "weak" rights: the Supreme Court of Israel wasn't entitled to declare null and void statutes obviously contradicting to human rights by virtue of these rights.

The most important developments in this sphere were marked in the beginning of 1990s; the enactment by the Israeli Parliament of two Basic Laws in the field of human rights and the adoption by the Israeli Supreme Court a decision on the 'Bank ha'Mizrachi ha'Meuchad' case. In the professional literature, these processes were titled as 'constitutional revolution'. Thus, on the one hand, the legislative power of the Knesset to curtail human rights was restricted and, on the other hand, judicial review to ensure these limitations was guaranteed.

Since the adoption of these Basic Laws no other Basic Law was adopted in the State of Israel. In these circumstances Israeli Supreme Court adopted the practice of broader interpretation of the right to dignity, guaranteed by the Basic Law, thus interpreting certain social-economic rights as a constituent part of the latter.

Nevertheless, many human rights and fundamental freedoms, widely practiced in western democracies, particularly freedom of religion and conscience and equality before the law, doesn't have statutory recognition in the State of Israel. Interestingly enough, the issue of the statutory recognition of these human rights, to a huge extent, was the primary reason hindering the adoption of the Constitution in the State of Israel.

Keywords: legal system of Israel, human rights, fundamental freedoms, basic law, constitutional revolution, entrenched right, limitation clause.

* * *

ՍԱՄՎԵԼ ՅՈՒՋԲԱՇՅԱՆ

Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազ,
Հայաստանում ֆրանսիական համալսարանի
իրավունքի ամբիոնի դասախոս,
Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
քրեական իրավունքի և քրեական դատավարության
իրավունքի ամբիոնի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

ԱԼՎԻՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանում ֆրանսիական համալսարանի
իրավաբանական ֆակուլտետի ուսանող

ԴԱՏԱԽԱՋԻ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾՈՎ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊԵՆԴԻՄԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՆ ՈՒ ԴՐԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտական հոդվածի շրջանակներում հեղինակներն անդադարձել են դատախազի համաձայնությամբ քննիչի կողմից քրեական գործի վարույթի կարճման և քրեական հետապնդման դադարեցման, ինչպես նաև քրեական գործ հարուցելը մերժելու հայեցողական դատավարական ընթացակարգերին, իրավակիրառ պրակտիկայում դրանց հետ առնչվող խնդիրներին:

Հեղինակների կողմից ուսումնասիրվել են օրենսդրական ակտեր, ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումներ, գիտնականների կարծիքներ:

Ուսումնասիրության և վերլուծության արդյունքով՝ հեղինակներն առաջարկել են հնարավոր լուծումը՝ միասնական պրակտիկա ապահովելու նպատակով:

Բանալի բառեր. քրեական գործով վարույթը կարճել և քրեական հետապնդումը դադարեցնել, քրեական գործ հարուցելը մերժել, հայեցողական լիազորություն, դատախազի համաձայնություն:

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

САМВЕЛ ЮЗБАШЯН

Прокурор военной прокуратуры Ереванского гарнизона,
 Преподаватель кафедры права
 Французского университета в Армении,
 Преподаватель кафедры уголовного права и уголовно-процессуального
 права Российско-армянского (Славянского) университета,
 кандидат юридических наук

АЛВИНА САРГСЯН

Студент юридического факультета
 Французского университета в Армении

**ПРОЦЕССУАЛЬНЫЙ ПОРЯДОК ПРЕКРАЩЕНИЯ УГОЛОВНОГО ДЕЛА И УГОЛОВНОГО
 ПРЕСЛЕДОВАНИЯ С СОГЛАСИЕМ ПРОКУРОРА И ЕГО ПРОБЛЕМЫ**

В рамках научной статьи авторы обращаются к некоторым проблемам, возникающим в правоприменительной
 практике в связи с дискреционным процессуальным порядком прекращения уголовного дела и уголовного преследования
 с согласия прокурора, а также с дискреционным порядком отказа в возбуждении уголовного дела.

Авторами изучены законодательные акты, решения Кассационного суда РА и мнения ученых.

В результате исследования и анализа авторы предлагают возможное решение проблемы для обеспечения
 единой практики.

Ключевые слова: прекращение уголовного дела и уголовного преследования, отказ в возбуждении уголовного
 дела, дискреционное полномочие, согласие прокурора.

SAMVEL YUZBASHYAN

Prosecutor at the Office of
 Military Prosecutor of Yerevan Garrison,
 Law lecturer in French university in Armenia,
 Lecturer at the Department of Criminal Law and
 Criminal Procedural Law at the Russian-Armenian (Slavonic) University
 Ph.D.

ALVINA SARGSYAN

Student of faculty of law in French university in Armenia

**THE TERMINATION PROCEDURE OF CRIMINAL CASE AND CRIMINAL PROSECUTION WITH THE
 CONSENT OF THE PROSECUTOR AND PROBLEMS RELATED TO IT**

Within the framework of the scientific article the authors examine some problems arising in law enforcement practice
 regarding the discretionary procedural order of the termination of the criminal proceedings and criminal prosecution with
 the consent of the prosecutor, as well as the discretionary order of the dismissal of initiation of criminal prosecution.

The authors analyze the legislation, decisions of the RA court of appeal, and the views of legal scholars.

As a research output authors offer a possible solution to ensure common practice.

Keywords: termination of the criminal proceedings and criminal prosecution, dismissal of initiation of criminal
 prosecution, discretion, consent of prosecutor.

* * *

ԱՐՈՒՍԱԿ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ ՔԿ Երևան քաղաքի ՔԿ Արաբկիր
 վարչական շրջանի քննչական բաժնի քննիչ,
 Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
 «Քրեական իրավունքի և քրեական դատավարության» ամբիոնի հայցորդ

**ՀԱՅԵՑՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԵՎ ԴՐԱ ՓՈԽՀԱՐԱՐԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ
 ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ**

Հոդվածում ներկայացված են հայեցողություն հասկացության վերաբերյալ ուսումնասիրություններ, հայեցողու-
 թյան ընկալման մասին հայրենական և արտասահմանյան գիտնական-իրավաբանների կարծիքներ, հայեցողության
 փոխհարաբերակցությունը նպատակահարմարության հետ: Հիմնավորելով հայեցողության՝ պրակտիկայում առաջա-
 ցող տարբեր բնույթի խնդիրների լուծումն ապահովելու ունակությունը, հայեցողության կիրառման, հայեցողական ըն-
 թացակարգերի օրենսդրորեն ամրագրելու անհրաժեշտությունը՝ անդրադարձ է կատարվել հայեցողության և օրինա-
 կանության սկզբունքի համատեղելիությանը: Հայեցողական ընթացակարգերի կիրառումն օբյեկտիվ պահանջարկ է,
 որը բխում է հասարակության զարգացման պայմաններից: Հայեցողության օրինականությունն ապահովվում է բա-
 ցառապես օրենքի վրա հիմնված այլընտրանքային որոշման ընտրությամբ: Իրավակիրառ մարմնի հայեցողական
 գործունեությունն օրենքի նորմի կիրառումն է:

Բանալի բառեր: հայեցողություն, օրինականություն, նպատակահարմարություն, դիսպոզիտիվություն, կամա-
 յականություն, հայեցողական լիազորություն:

АРУСЯК АЛЕКСАНИЯ

Следователь следственного отдела
по административному району Арабкир города Ереван,
соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального
права Российско-Армянского (Славянского) университета

УСМОТРЕНИЕ В УГОЛОВНОМ ПРОЦЕССЕ И ЕГО СООТНОШЕНИЕ С ЗАКОННОСТЬЮ

В статье представлены исследования о понятии усмотрения, точки зрения отечественных и зарубежных ученых-юристов о восприятии усмотрения, его соотношение с целесообразностью, а также совместимость дискреции и принципа законности. Представлена способность дискреции по разрешению разных видов проблем, возникающих на практике, и необходимость ее законодательного закрепления. Обосновывая способность усмотрения по разрешению разных видов проблем, возникающих на практике, и необходимость применения усмотрения, законодательного закрепления дискреционных процедур, представлена совместимость усмотрения и принципа законности. Применение дискреционных процедур является объективной потребностью, которая вытекает из условий общественного развития. Законность усмотрения обеспечивается выбором альтернативного решения, основанного исключительно на законе. Дискреционная деятельность правоприменительного органа является применением нормы права.

Ключевые слова: усмотрение, законность, целесообразность, диспозитивность, произвол, дискреционное полномочие.

ARUSYAK ALEKSANYAN

The investigator of Investigative Division of
Arabkir administrative district of Yerevan,
PhD Student of Criminal Law and Criminal Procedure
of Russian-Armenian /Slavonic/ University

DISCRETION IN THE CRIMINAL PROCESS, AND ITS RELATION TO THE LEGALITY

The article presents a study on the concept of discretion, the ratio of the expediency, the point of view of domestic and foreign legal scholars about the perception of discretion, as well as compatibility of discretion and principle of legality. It is presented the ability of discretion to solve various kinds of problems encountered in practice and the necessity of its legislative consolidation. Justifying the ability of discretion to resolve different kinds of problems that arise in practice and the necessary of discretion, legislative consolidation of discretionary procedures, referred to the discretion compatibility and the principle of legality. Application discretionary procedures is an objective necessity, that flows out from the conditions of social development. The legality of discretion is provided by choice of alternative solutions, based solely on the law. Discretionary activity of law enforcement authority is the application of the rule of law.

Keywords: discretion, legality, expediency, optionality, arbitrariness, discretionarity authority.

* * *

● ՕՐԻՆԱԿԱՆՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

ՆԱՐԵԿ ՊՈՂՈՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտի ասպիրանտ

**ՌԱՖԱՅԵԼ ԼԵՄԿԻՆԻ ԿՈՂՄԻՑ «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Հոդվածում ներկայացվում է, թե ինչ կապ գոյություն ունի Հայոց ցեղասպանության և Ռաֆայել Լեմկինի կողմից «Ցեղասպանություն» եզրույթի ստեղծման ու սահմանման միջև: Ցեղասպանությունների անարգել իրագործման դեպքերը և, հատկապես՝ Հայոց ցեղասպանության իրագործումն ու դրա համար պատասխանատու երիտթուրք դեկավարների անպատիժ մնալու հանգամանքը եղան հիմնական իրադարձությունները, որոնք Ռաֆայել Լեմկինին մղեցին, որ նա 1933թ. Մադրիդի կոնֆերանսում ներկայացնի ցեղասպանության կոնվենցիա ստեղծելու և ցեղասպանական գործողությունները որպես հանցագործություն սահմանելու վերաբերյալ իր առաջարկները: Լեմկինն իր այս առաջարկների հիման վրա էլ 1944թ. «Առանցքի իշխանությունն օկուպացված Եվրոպայում» աշխատության մեջ ստեղծեց «ցեղասպանություն» եզրույթը և ձեռնամուխ եղավ ցեղասպանությունը դատապարտող միջազգային փաստաթղթի ստեղծման գործին:

Բանալի բառեր. Ռաֆայել Լեմկին, Հայոց ցեղասպանություն, միջազգային իրավունք, «ցեղասպանություն» եզրույթ, ցեղասպանության կոնվենցիա:

НАРЕК ПОГОСЯН

аспирант Музея-института Геноцида армян
Национальная Академия наук РА

СОЗДАНИЕ ТЕРМИНА «ГЕНОЦИД» СО СТОРОНЫ РАФАЭЛЯ ЛЕМКИНА И ГЕНОЦИД АРМЯН

В статье представлено, какова взаимосвязь между созданием и определением термина “Геноцид” Рафаэля Лемкина и Геноцида армян. Беспрепятственное осуществления геноцидов, особенно осуществление Геноцида армян и безнаказанность основных лидеров младотурок, были основными событиями, которые заставили Рафаэля Лемкина на Мадридской конференции в 1933 году предложить создать конвенцию, которая должна была осудить геноцид как преступление. Лемкин на основе своих предложений в 1944 году, в книге “Правление государств Оси в Оккупированной Европе” создал термин “геноцид” и приступил к созданию международного документа по осуждению геноцида.

Ключевые слова: Рафаэль Лемкин, Геноцид армян, международное право, термин “геноцид”, Конвенция о геноциде.

NAREK POGHOSYAN

PhD student at The Armenian Genocide Museum-institute
National Academy of Sciences of the Republic of Armenia

CREATION OF THE TERM "GENOCIDE" AND THE ARMENIAN GENOCIDE

This article illustrates the relationship between the creation of term “genocide” by Raphael Lemkin and the Armenian Genocide. The cases of unrestricted implementation of genocides and especially the implementation of the Armenian Genocide and impunity Young Turks were the major event that prompted Raphael Lemkin to interduce proporsals in Madrid conferece about the creation of Genocide convention and define the genocidal acts as crime. Lemkin created the term “genocide” in 1944 in his book “Axis Rule in Occupied Europe” on the bases of these proposals and embarked on creation international instrument condemning the genocide.

Keywords: Raphael Lemkin, Armenian genocide, international law, the term “Genocide”, the Genocide Convention.

* * *

ՌՈՍԵԼԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԵՊՀ միջազգային իրավունք մասնագիտացման մագիստրոս

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԶԵՎԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սույն հոդվածը համեմատական ուսումնասիրություն է, որի նպատակն անհատի իրավունքների պաշտպանության այլ ձևերի հարաբերակցությամբ դիվանագիտական պաշտպանության ինստիտուտի առանձնահատկությունների վերհանումն է: Հոդվածի ուսումնասիրության առարկա են դիվանագիտական պաշտպանության ինստիտուտը և վերջինիս տարբերությունները հյուպատոսական օժանդակությունից, մարդու իրավունքների միջազգային պաշտպանությունից, ինչպես նաև գործառույթային պաշտպանությունից, որը միջազգային որևէ կազմակերպության կողմից իր գործակալին տրվող երաշխիքների ամբողջությունն է:

Բանալի բառեր. դիվանագիտական պաշտպանություն, մարդու իրավունքների պաշտպանություն, հյուպատոսական օժանդակություն, գործառույթային պաշտպանություն, դիվանագիտական գործողություն, միջազգային իրավունք:

РОМЕЛА МАНУКЯН

Магистрант специализации международного права ЕГУ

ОСОБЕННОСТИ ДИПЛОМАТИЧЕСКОЙ ЗАЩИТЫ И ИНЫХ ФОРМ МЕЖДУНАРОДНОЙ ЗАЩИТЫ ПРАВ ИНДИВИДА

Данная статья представляет собой сравнительное исследование, целью которого является выявление особенностей института дипломатической защиты по отношению к другим формам защиты прав личности. Предметом изучения данной статьи являются институт дипломатической защиты и его различия от консульской помощи, международной защиты прав человека, а также от функциональной защиты, которая представляет собой цельность гарантий, предоставляемых со стороны международных межправительственных организаций своим сотрудникам.

Ключевые слова: дипломатическая защита, защита прав человека, консульская помощь, функциональная защита, дипломатическое действие, международное право.

● ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ № 96 2016

ROMELA MANUKYAN

Graduate Student at International Law program of YSU

FEATURES OF DIPLOMATIC PROTECTION AND OTHER FORMS OF INTERNATIONAL PROTECTION OF THE RIGHTS OF INDIVIDUAL

This article is a comparative study, the aim of which is the identification of the characteristics of the institution of diplomatic protection in relation to other forms of protection of the rights of individuals. The object of study of this article are the institution of diplomatic protection and its differences from the consular assistance, the international protection of human rights, as well as the functional protection, which is an integrity of guarantees provided by international intergovernmental organizations to their employees.

Keywords: diplomatic protection, protection of human rights, consular assistance, functional protection, diplomatic action, international law.

* * *

ԼԻԼԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի «Գլաձոր» համալսարանի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Նշված հոդվածում մանրամասն վերլուծվել են մարդու և քաղաքացու իրավունքների սահմանափակման հիմնախնդիրները և դրա իրավաչափությունը՝ ՀՀ Սահմանադրության փոփոխությունների համաձայն:

Բանալի բառեր. Սահմանադրություն, սահմանադրական նորմ, իրավունքների սահմանափակում, իրավաչափության հիմքերը, պետական անվտանգություն, հասարակական առողջություն և բարոյականություն:

ЛИЛИТ САРГСЯН

соискатель кафедры конституционного
права университета “Гладзор”

О ПРАВОМЕРНОСТИ ОГРАНИЧЕНИЯ ПРАВ И СВОБОД ЛИЧНОСТИ

В настоящей статье подробно анализируются основы правомочия ограничения прав и свобод человека и гражданина, согласно измененной Конституции Республики Армения.

Ключевые слова: Конституция, конституционная норма, ограничения прав, основы правомерности, государственная безопасность, общественное здоровье и мораль.

LILIT SARGSYAN

competitor

BASES OF MODERN CONSTITUTIONAL LAW AND THE COMPETENCES FOR FREEDOM RESTRICTION

This article analysis in details the bases for the competence for human and citizen rights and freedom restriction, in accordance with amended Constitution of the Republic of Armenia.

Keywords: Constitution, constitutional norm, rights restriction, bases for competence, state security, public health and morals.

ԱՐՄԵՆ ԵԶԵԿՅԱՆ

ՀՀ ՊԿ ակադեմիայի իրավագիտության ամբիոնի վարիչ,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն հոդվածում ներկայացվում են հանրային ծառայողների վարքագծի կանոնները, սահմանվում են հանրային ծառայողի և բարձրաստիճան պաշտոնատար անձի էթիկայի կանոնները, դասակարգվում և համեմատական վերլուծության են ենթարկվում հանրային ծառայողների էթիկայի հիմնական կանոնները:

Էթիկայի կանոնների առկայությունը և դրանց խստագույնս պահպանումը կարևորագույն գործոն է հանրային ծառայության արդյունավետ գործունեության ու հասարակության վստահության ապահովման համար, քանի որ պետական կառավարման մարմիններում բարոյական վատ մթնոլորտը, պատասխանատու պաշտոնյայի անփութությունը կարող են լրջորեն վարկաբեկել իշխանության ցանկացած բարի մտադրություն:

Հանրային ծառայությունում իրավահարաբերության ցանկացած տեսակ ենթարկվում է գործնականում իր ձևավորած էթիկայի կանոններին, որոնք ուղղորդված են դեպի պատիվն ու արժանապատվությունը՝ որպես բարձրագույն արժեքներ:

Բանալի բառեր. վարքագծի կանոններ, էթիկայի կանոններ, բարոյական հեղինակություն, էթիկայի կանոնակարգ, էթիկայի ընդհանուր սկզբունքներ:

АРМЕН ЕЗЕКЯН

Заведующий кафедрой юриспруденции
Академии государственного управления в РА,
кандидат юридических наук, доцент

ЮРИДИЧЕСКОЕ СОДЕРЖАНИЕ ПРАВИЛ ПОВЕДЕНИЯ В ПУБЛИЧНОЙ СЛУЖБЕ

В данной статье представлены правила поведения публичных служащих, устанавливаются правила этики публичного служащего и руководящего лица, классифицируются и подвергаются сравнительному анализу основные правила этики публичных служащих.

Наличие правил этики и их строгое соблюдение является важнейшим фактором для плодотворного действия публичной службы и обеспечения доверия общественности, так как плохая моральная атмосфера в органах государственного правления, пренебрежительность ответственного должностного лица могут серьезно навредить любому доброму намерению правительства.

В публичной службе любое правоотношение подчиняется правилам этики, сформированными в его практике, которые направлены на честь и достоинство, как высшие ценности.

Ключевые слова: правила поведения, правила этики, моральный авторитет, регламент этики, общие принципы этики.

ARMEN YEZEKYAN

Head of Department of Law in the Public
Administration Academy of RA
PhD in Law, associate professor

LEGAL CONTENT OF THE RULES OF CONDUCT IN THE PUBLIC SERVICE

In this article are presented the rules of conduct for public servants, established the rules of ethics of public servants and senior officials, classified and go through comparative analysis the basic rules of ethics of public servants.

Availability of ethics rules and strict adherence to them is the most important factor for productive activity of the public service and to ensure public confidence, as bad moral atmosphere in the organs of government, neglecting from senior officials can seriously harm any good intentions of the government.

In the public service any legal relationship obeys to the rules of ethics, formed in its practice, that aim to honor and dignity as supreme values.

Keywords: rules of conduct, ethics rules, the moral authority, ethics regulation, the general principles of ethics.

ՀՀ ՂԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ «ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԳԵՍՈՒՄ ՏՊԱԳՐՎՈՂ ՀՈՂՎԱԾՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՂԱՀԱՆՑՆԵՐԸ

Հանդեսում տպագրվող հոդվածները պետք է ունենան գիտագործնական կամ ուսումնամեթոդական բնույթ: Հոդվածը պետք է վերաբերի իրավագիտության ոլորտին, իսկ բացառիկ դեպքերում՝ մեծ հետաքրքրություն վայելող, գիտագործնական մեծ արժեք ներկայացնող ուսումնասիրություններին:

Սույն պահանջներին բավարարող հոդվածները երաշխավորվում են տպագրության համար Հանդեսի գլխավոր խմբագրի կողմից: Իսկ դրանց չբավարարելու դեպքում հոդվածները վերադարձվում են հեղինակին:

Հոդվածը ներկայացվում է թղթային՝ տպագիր, և էլեկտրոնային (Microsoft Word) տարբերակներով: Թղթային տարբերակը պետք է ներկայացնել Հանդեսի խմբագրություն՝ ՀՀ, ք. Երևան, Վ.Սարգսյան 5 հասցեով, իսկ էլեկտրոնային տարբերակն ուղարկել orinakanutyun@prosecutor.am հասցեով:

Հոդվածը պետք է պարունակի վերնագիր (մինչև 20 բառ) և շարադրվի 8-10 էջի սահմաններում: Հոդվածին կից պետք է նաև երեք լեզվով (հայերեն, ռուսերեն և անգլերեն) ներկայացնել՝

ա) Սեղմագիր (Абстракт, Abstract), բ) Բանալի բառեր (Ключевые слова, Keywords), գ) Հեղինակի մասին հակիրճ տեղեկություն:

Սեղմագիրը 300-500 բառի սահմաններում պետք է պարունակի հոդվածի համառոտ շարադրանքը: Բանալի բառերի քանակը յուրաքանչյուր լեզվով չպետք է հինգից պակաս լինի:

Եթե հոդվածի հեղինակը գիտական աստիճան չունի, ապա հոդվածի հետ պետք է ներկայացնի կարծիք (այսուհետ՝ Կարծիք)՝ տվյալ հոդվածի՝ գիտականորեն հիմնավորված լինելու, գիտական նորույթի, հոդվածում բարձրացված խնդրի ու դրա արդիականության մասին:

Իրավագիտության ոլորտին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ իրավաբանական գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը կամ իրավագիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող իրավաբանը: Գիտության այլ ոլորտներին վերաբերող հոդվածների դեպքում Կարծիք կարող է տալ այդ գիտության թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան ունեցող անձը, ինչպես նաև այդ գիտության ոլորտում մեծ հեղինակություն վայելող մասնագետը: Կարծիքը պետք է ստորագրվի տվողի կողմից և/կամ կնքվի իր աշխատավայրի կնիքով:

Հոդվածի հայերեն տեքստը պետք է շարադրել GHEA Grapalat, ռուսերեն տեքստը՝ Baltica Cyrillic, իսկ անգլերեն տեքստը՝ Times New Roman տառատեսակներով: Հոդվածի յուրաքանչյուր էջ պետք է լինի A4 (201x297 մմ) չափի և ունենա լուսանցքներ. ձախից՝ 30 մմ, աջից՝ 10 մմ, վերևից՝ 20 մմ, ներքևից՝ 25 մմ: Հոդվածի հիմնական տեքստը շարադրվում է 12 տառաչափով, միջտողային հեռավորությունը՝ 1,5, իսկ վերնագրերը՝ 14 տառաչափով և մուգ (Bold):

Այն դեպքում, երբ հեղինակն օգտվում է այլ անձանց, գիտնականների աշխատանքներից և այլ աղբյուրներից, այդ մասին պետք է պատշաճ ձևով նշում կատարվի տեքստում, և/կամ հղումը տրվի ծանոթագրության միջոցով՝ յուրաքանչյուր էջում: Ծանոթագրության մեջ պետք է ներառել հետևյալ տվյալները՝ հեղինակ(ներ)ի ազգանուն(ներ)ը, անուն(ներ)ը, նյութի լրիվ անվանումը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, քաղաքը, տարեթիվը, հատորը, էջը: Օտարալեզու աղբյուրները չեն թարգմանվում: Ինտերնետային աղբյուրներից օգտվելու դեպքում ծանոթագրության մեջ պետք է նշվեն ինտերնետային հասցեն և հղում կատարելու վերջին ամսաթիվը: Արգելվում է այլ հեղինակների կարծիքը, միտքը, աշխատանքը ներկայացնել իբրև սեփական, օգտագործել ուրիշի գաղափարը, միտքը, վերլուծությունն առանց հղում կատարելու: Արգելվում է նաև այլ աղբյուրից վերցված թարգմանել կամ նախադասությունը ձևափոխել՝ առանց հղում և/կամ ինքնուրույն վերլուծություն կատարելու:

Հանդեսում տպագրվող հոդվածներն ամբողջությամբ արտահայտում են հեղինակների դիրքորոշումներն ու վերլուծությունները և, հնարավոր է, չհամընկնեն ՀՀ դատախազության դիրքորոշման հետ: ՀՀ դատախազությունը պատասխանատվություն չի կրում հոդվածի հեղինակի արտահայտած կարծիքի համար: